Լ. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Մ. Ռ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ
բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար

ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 811.19(07)
ԳՄԴ 81.51g7
Ա 791

Տպագրվում է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ:

Պատասխանատու խմբագիր՝
բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆ. **Վ. Գ. Համբարձումյան**

Գիտամեթոդական խորհրդատու՝
բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆ. **Ա. Վ. Գալստյան**

Ավետիսյան Լ. Ն., Սողոմոնյան Մ. Ռ.

Ա791 Հայոց լեզվի գործնական դասընթաց: Բառագիտություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար / Լ. Ն. Ավետիսյան, Մ. Ռ. Սողոմոնյան, խմբ.՝ Վ. Գ. Համբարձումյան. - Եր.: «Էդիթ Պրինտ» հրատ., 2022.- 192 էջ:

Հայոց լեզվի բառագիտության գործնական աշխատանքների սույն ձեռնարկում առաջադրանքների համակարգը (գործնական, բառարանային և տեքստային աշխատանքներ) տրված է ըստ տարբեր մասնագիտացումների: Նրանում առկա բնագրային նյութը հիմնականում քաղված է գիտական (մասամբ հրապարակախոսական) ոճի ուսումնասիրություններից: Մասնագիտական տվյալ բնագավառին վերաբերող բառապաշարի և համատեքստի հիման վրա ստեղծված վարժությունների համակարգը կարող է ոչ միայն նպաստել ուսանողների բառիմաստաբանական, բառապաշարային, բառակազմական և, ընդհանրապես, բառագիտական գիտելիքների մշակմանն ու խորացմանը, անսայթաք կիրառությանը, այլև նրանց մասնագիտական բնագավառում ունենալ ճանաչողական արժեք և նշանակություն:

Ձեռնարկը նախատեսված է բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև ավագ դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի աշակերտներին և մանկավարժներին:

ՀՏԴ 811.19(07)
ԳՄԴ 81.51g7

ISBN 978-9939-75-856-5

© Լ. Ավետիսյան, Մ. Սողոմոնյան, 2022

Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը: Լեզուդ փոխի՛ր, հավատդ ուրացի՛ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՛ր ազգիցն ես…

Խաչատուր Աբովյան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց լեզվի բառագիտության գործնական աշխատանքների այս ձեռնարկը նախատեսված է բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար: Հաշվի ենք առել ոչ մասնագիտական ֆակուլտետներում ավանդվող «Հայոց լեզու» առարկայի *բառագիտություն* բաժնի առանցքային հարցերը, նպատակը և հիմնախնդիրները:

Ձեռնարկը հասցեագրված է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողներին:

Յուրաքանչյուր առաջադրանք ներկայացված է ըստ մասնագիտացումների.

1. Պատմություն և հասարակագիտություն

2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն

3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

Ոչ մասնագիտական ֆակուլտետում դասավանդողը փոխներգործուն (ինտերակտիվ) դասագործընթացներ իրականացնելիս կարող է ըստ ձեռնարկում ընդգրկված վարժությունների՝ կազմակերպել ուսանողների լսարանային անհատական, զույգերով կամ խմբային աշխատանքներ: Ընդ որում, գործնական առաջադրանքը դասախոսի ընտրությամբ կարելի է հանձնարարել որպես գնահատվող առաջադրանք (ընթացիկ ստու-

գում): Առաջադրանքներն առհասարակ կարելի է քննարկել թե՛ լսարանային (առերես), թե՛ առցանց պարապմունքների ընթացքում: Ընդսմին, բառարանային և տեքստային աշխատանքների մեջ կան այնպիսիները, որոնք նախատեսված են կա՛մ լսարանում քննարկելու, կա՛մ առցանց ուսուցման («Classroom») հարթակում ներկայացնելու համար: Դարձյալ ըստ դասախոսի նախընտրության՝ դրանք կարելի է հանձնարարել կատարել թե՛ կանխավ (տնային աշխատանք), թե՛ տեղում (լսարանային կամ առցանց աշխատանք):

Ձեռնարկը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. *Գործնական առաջադրանքներ և բառարանային աշխատանք*
2. *Տեքստային աշխատանք:*

Հավելվածների տեսքով կա նաև գործնական պարապմունքի մեկ-երկու նմուշօրինակ (տե՛ս «Հավելված 1» և «Հավելված 2» ենթաբաժինները)՝ ըստ մասնագիտացումների:

Ընդգրկված գործնական առաջադրանքները վերաբերում են հայոց լեզվի բառագիտությանը՝ ներառելով հետևյալ ենթաբաժինները.

1. *Իմաստաբանություն*
2. *Բառապաշար*
3. *Բառակազմություն*
4. *Դարձվածաբանություն*
5. *Բառարանագրություն:*

Բուհում հայոց լեզվի դասավանդման *նախապայմանը* սովորողների՝ ավագ դպրոցում հայոց լեզվի իմացությունն է: Այս ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ավագ դպրոցի թե՛ հումանիտար, թե՛ բնագիտամաթեմատիկական հոսքերի աշակերտներին և մանկավարժներին:

Ոչ մասնագիտական ֆակուլտետներում բառագիտության

ուսուցման *նպատակն* է նպաստել բանավոր և գրավոր խոսքի մեջ ոճական սխալներից և բառագործածության դժվարություններից զերծ մնալուն, ընթերցանության սխալներից խուսափելուն: Խթանել մասնագիտական տվյալ բնագավառի ուսումնասիրության ընթացքում լեզվական-բառագիտական նորմի և կիրարկության անջրպետները հաղթահարելը, լեզվական սխալներից զերծ խոսքի մշակույթ ձեռք բերելը:

Հայոց լեզվի դասավանդման գործընթացում բառագիտության ուսուցման *հիմնախնդիրներն* են ճանաչել տալ լեզվի բառագիտական միավորները, դրանց կապերը, արժևորել դրանց գործածության դժվարություններն ու յուրահատկությունները խոսքային միջավայրում, ինչպես նաև բացահայտել հաղորդակցական տարբեր պայմաններում դրանց ոճական ու գործառական դերը:

Բուհական համակարգում հայոց լեզվի բառագիտության՝ ըստ մասնագիտական տարբեր բնագավառների և գործնական ուսուցման *վերջնարդյունքում* ուսանողը ձեռք կբերի՝

1. արտահայտիչ ընթերցանության հմտություններ և բանավոր խոսքի մշակույթ,
2. բանավոր և գրավոր խոսք կառուցելիս ոճական սխալներից և բառագործածության դժվարություններից զերծ մնալու, ինչպես նաև ընթերցանության սխալներից խուսափելու կարողություններ,
3. հանրագիտական և, մասնավորապես, լեզվաբանական բառարաններից օգտվելու, բառարանային աշխատանքներ կատարելու գործնական հմտություններ,
4. գաղափար հաղորդակցական տարբեր պայմաններում բառագիտական իրողությունների ոճական ու գործառական դերի շուրջ:

Նկատենք, որ ձեռնարկում առկա է մասնագիտական տվյալ

բնագավառին վերաբերող բառապաշարի և համատեքստի հիման վրա ստեղծված վարժությունների համակարգ: Ընդսմին, գործնական առաջադրանքներում ընդգրկվել են ոչ միայն մասնագիտական (զբաղմունքային) բառերն ու կապակցությունները, մասնագիտական այս կամ այն բնագավառին վերաբերող տերմինները, այլև բառապաշարի այլևայլ շերտերի բառեր: Սովորողներին հենց մասնագիտական առումով կարող են հետաքրքրել թե՛ ժողովրդախոսակցական, թե՛ բարբառային, թե՛ ժարգոնային և թե՛ գրական-գրքային բառերը, մանավանդ որ ՀՊՄՀ ոչ մասնագիտական ֆակուլտետներում «Հայոց լեզու» առարկայի ծրագրով նախատեսված է նաև այդ կարգի բառերի ուսումնասիրությունը: Այնուհանդերձ, ձեռնարկի առաջադրանքներում առկա բնագրային նյութը հիմնականում վերաբերում է գիտական ոճին: Ուսանողները, լեզվական, տվյալ դեպքում՝ բառիմաստաբանական, բառապաշարային, բառակազմական, դարձվածքներին ու շրջասույթներին վերաբերող, ինչպես նաև բառարանային աշխատանքներ կատարելու հմտություններ ձեռք բերելով, հընթացս առնչվում են իրենց մասնագիտական ոլորտի բառապաշարին, տեքստային հատվածներին, որոնք ունեն ճանաչողական արժեք և նշանակություն:

Սույն գործնական ձեռնարկն ստեղծվել է ՀՊՄՀ ոչ մասնագիտական ֆակուլտետներում հեղինակների դասավանդման փորձի ընթացքում:

Ձեռնարկը կծառայի բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետներում հայոց լեզվի դասավանդման արդյունավետության բարձրացմանը, ուսանողների բառապաշարի համալրմանը, բանավոր և գրավոր կապակցված խոսքի զարգացմանը, ընդհանրապես նրանց լեզվաոճական գիտելիքների հարստացմանը:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մենիմաստ և բազմիմաստ բառեր

ա) Խմբավորեք հետևյալ բառերը (բառակապակցությունները)՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով ժամանակակից հայերենի բացատրական բառարաններից (տես www.nayiri.com կայքի էլեկտրոնային բառարաններ):

բ) Նշեք բառաշարքի բազմիմաստ բառերի բոլոր իմաստները՝ կազմելով էլեկտրոնային բառարան: Վերջինս ներկայացրեք առցանց ուսուցման հարթակում:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Ազգամոլ, բոլշևիկ, գերի, խան, թռուցիկ, պատմահեղափոխական, գահազրկել, գահաժառանգություն, լուծել, հորդա, իշխանազարմ, թագավորանալ, թաղապետ, պաշտոն, ԱՀԴՀ, մարտահրավեր, ՔՕ, ամբոխահաճություն, ՀՄՊ, ճեպագիր, խուզել, սատրապական, պետ, ազատագնել:

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

Աձխանկարիչ, գանձ, ակնազարդ, դասական, վարժույթ, գաղափարագիր, ԳԱԹ, գծանկար, ակրոստիքոս, քորոց,

աղաբլիթ, ԶԼՄ, քերթել, ուխտ, ինքնանկար, ԱԳ, աղանդ, քառատող, փողային, տոն, դեղին, ինքնագիր, ընթերցարան, պետթատրոն, խատուտիկ, ՀԱՊ, գունանկարիչ, ծիրանի, կտոր, ճեպանկար, նոտագրում, հանգ, մատյան, նոթեր, շարակնոց, նվագ, կաքավարան, շուք, վայելել, կաքավչուհի, սատինե, փող, մաժոր, ասացող:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Վախ, ակնարկ, գաղափարապես, թախծոտ ժպիտ, անձուկ, վայելել, իղձ, արի, բաղձանք, ինքնախաբեություն, բարդ, խեթ, ինքնաբերական, գթալ, գիտակից, դաս, ինքնահարգանք, ԸՕ, ջերմագութ, կարող, կարոտել, ինքնամփոփություն, ցնծալ, ՀՍԸ, ցնոր, ՄՀՀԸ, տագնապախռովություն, հարգանք, ահահար:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Աղաթթու, ՖԱԴ, ներքնոլորտ, ուլ, ռնգեղջյուր, ՌՆԹ, տապ, ցող, քլոր, մայր, պարս, ավշահանգույց, ԱԵ, հուն, վագր, բազուկ, դեղձանիկ, բոժոժիկ, գազ, գայլուկ, բողբոջում, գետին, եղանակ, ածխաջրային, ականջախեցի, գոս, ակնաբույն, թաղ, աղահող, իրիկնացող, խավարում, իրիդիում, ծործոր, լանդշաֆտային, կաթ, լանջակողմ, բուք, կատար, համածին, գաղտուն, հյուսիս, գազար, գայլաշուրթ, հոն, գայլասունկ, հորան, աղավներամ, թխկի, վար, լայնաքիթ, հույլ:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Վաթսուներորդական, գոլ, մաթեմատիկական աղյուսակ, ԷԷՀ, վակուում, լազերային, ինքնագիր, գալվանազօծել, ջեր-

մակայունություն, կանգուն, ԷՀՄ, ջերմամարտկոց, ՖՄԴ, կոտորակ, հիսուներորդական, մաթեմատիկականացնել, պարապ, ՏՏ, անկյունագիծ, հարյուրերորդական:

Բառարաններ

1. ***Աղայան Է.,*** Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:
2. ***Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն.,*** Հայերենում գործածվող տառային հապավումների բառարան, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2007:
3. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969-1980:
4. *www.nayiri.com (էլեկտրոնային բառարանների գրադարան):*

2. Բառերի ձևաիմաստային խմբերը

2. 1. Տրված բառաշարքից ընտրեք և գրեք հոմանշային 10 զույգ:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Փրկագիր, բանտել, բարետոհմիկ, ազատաթուղթ, ազատազրկել, քաջազգի, միասնականանալ, փաստաբան, փարավոն, արքայադրուժ, դատապաշտպան, հրամայորեն, գահակալ, թագավորանիստ, կայսերադավ, պարտադրաբար, ոստանիկ, դաշինք, ծիրանի, դրանիկ, համաձայնություն, թագավորազգեստ:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Գրագող, ձիրք, բնանկար, սնդուս, բանագող, գրքատուն, քանքար, դիպակ, բնատեսարան, պարագրություն, գրադարան, երգարան, ձայնակցել, զարդագիր, կաքավագրություն, գեղաքանդակ, տաղարան, գրագիր, նվագակցել, ծաղկատառ, գեղազարդ, ջնարակ:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Առաքինի, ըմբռնել, պակասամիտ, հոգետանջ, անհատ, հայրենաբաղձություն, պարկեշտ, թանձրամիտ, կռահել, չարակսկիծ, բնավորություն, հոգի, ջղայնացում, նրբազգաց, ներաշխարհ, խառնվածք, դատողություն, անձնավորություն, ընկերային, նյարդայնացում, մտածողություն, հասարակական:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Ազդր, արջնագռավ, կածուկ, սաղմնապարկ, եղջերուկ, հոդ, զիստ, քինքինածառ, աղվեսագի, ջրաթաղանթ, քլորասնդիկ, ընդերք, ոսկրախաղ, շեփորուկ, աստղակաթ, բնաշրջություն, աղիք, եղրևանի, տարրաբան, աստղալույս, սուլեմա, շրջափոխույթ:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Էլեկտրաբռնկիչ, թիվ, էլեկտրադիտակ, քառանիստ, էլեկտրամեքենագիտական, ջրակայություն, էլեկտրաբոցավառիչ, ձայնագրիչ, էլեկտրացույց, չորեքնիստ, էլեկտրամեխանիկական, ջերմակայունություն, ջերմանցիկ, ջրակշռություն, համրանք,

ցուցարկիչ, լսագիտություն, ջերմադիմացկունություն, ծրիչ, ջերմահաղորդ, ձայնաբանություն, պատկերամուտ:

2. 2. Տրված բառաշարքից ընտրեք և գրեք հականշային 10 զույգ:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Թագադրել, թագավորամեծար, համբավազրկել, միաբանություն, կալանավորություն, ազատագրել, ոսոխ, հաղթել, միակնություն, մեղսագիտակ, կենտրոնամետ, վտարանդել, գահազրկել, դաշնակից, արքայանարգ, անմիաբանություն, ջատագովել, անմեղսունակ, ձերբազատում, զավթել, բազմակնություն, կենտրոնախույս:

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

Բազմաձիրք, ձյունասպիտակ, կատակերգու, դժգունակ, աշխարհիկ, բարձրարվեստ, հնատարազ, տմույն, մուգ, անպաճույճ, տաղանդազուրկ, լաջվարդ, սևաթույր, ողբերգակ, բաց, երփնաթույր, կրոնական, ասվյա, ցածրահարգ, նորառճ, պայծառ, պճնազարդ:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Համբերազուրկ, փոփոխամիտ, տխմար, մելամաղձություն, երևակայածին, համակրանք, համադրություն, հավատավոր, տագնապախռով, հանդուրժամիտ, անփույթ, անխաբուսիկ, խելամիտ, ամբարտավան, ուրախություն, վճռականություն,

հակադրություն, վճռալից, անդավանանք, անհաստատակամություն, հանգիստ, հակակրանք:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Անոսր, բերրիություն, մակընթացություն, տարասեռություն, անաղիք, տեղաբնիկ, ազգակից, խիտ, ցամաքային, անողնաշար, հյուսիս, մամռապատ, ընդգետնյա, անպտղություն, տեղատվություն, տարաշխարհիկ, նմանասեռություն, տարասեր, ջրային, հարավ, վերերկրյա, ողնաշարավոր:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Հանելի, արտագծել, արագացում, կլանել, ձգել, հոսանք, անոդ, ստատիկա, լիցքավորում, խտություն, համեմատել, գումարելի, կասեցնել, ներգծել, դանդաղեցում, արտամղել, վանել, կատոդ, նոսրություն, դինամիկա, պարպում, գործարկել:

2. 3. Հետևյալ համանունները դասակարգեք ըստ եռաթև (Մ-աձև) աղյուսակի:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Պատմագրի-պատմագրի, ռազմավար-ռազմավար, պատվեր-պատվեր, մատյան-մատյան, գերի-գերի, ՎՀ-ՎՀ, դաշնակ-դաշնակ, սպաներ-սպաներ, վիճակ-վիճակ, դատել-դատել, սպաս-սպաս, դաշունահարված-դաշունահարված, պապական-պապական, պարս-պարս, շահ-շահ, շահի-շահի-շահի-շահի, պատմագրական-պատմագրական:

Բառային	*Բառաքերականական*	*Քերականական*
Նմուշ՝	*Նմուշ՝*	*Նմուշ՝*
ռազմավար[1] – ռազմը վարող հրամանատարը, զորավար **ռազմավար**[2]– ռազմական ավար	**դաշունահարված**[1]– դաշույնի հարված **դաշունահարված**[2]– *դաշունահարվել* բայի հարակատար դերբայը	**պատմագրի**[1]– *պատմագիր* բառի եզակի անորոշ տրականը **պատմագրի**[2]– *պատմագրել* (պատմություն՝ պատմագիրք գրել) բայի ըղձական ապառնի եզակի 3-րդ դեմքը

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

Գանձ-գանձ, պղնձագործ-պղնձագործ, գրող-գրող, գծեր-գծեր, սրբագրական- սրբագրական, գրչակից-գրչակից, զուգել-զուգել, փոստ-փոստ, կարի-կարի, պապ-պապ, պարիկ-պարիկ, պարս-պարս, քանոն-քանոն, տոնի-տոնի, փող-փող, ձևեր-ձևեր, տոն-տոն:

Բառային	*Բառաքերականական*	*Քերականական*
Նմուշ՝	*Նմուշ՝*	*Նմուշ՝*
քանոն[1]– գծափայտ **քանոն**[2]–լարային կսմիթավոր նվագարանի տեսակ	**պարս**[1] – զրադաշտական պարսիկ, փարսի **պարս**[2]– *պար* գոյականը՝ *-ս* հոդով (իմ պարը)	**գծեր**[1] – *գիծ* բառի հոգնակին **գծեր**[2] –*գծել* բայի ըղձական անցյալի եզակի 3-րդ դեմքը

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Չկամ-չկամ, աղերս-աղերս, սիրելիս-սիրելիս, անարգել-անարգել, բաղձանք-բաղձանք, անել-անել, ստեր-ստեր, դաս-դաս, դատել-դատել, կամ-կամ, եղկելի-եղկելի, գիտակից-գիտակից, ըղձանք- ըղձանք, հույլ-հույլ, կանխազգաց- կանխազգաց, խնդիր-խնդիր, պատվեր-պատվեր, վայելել-վայելել:

Բառային	***Բառաքերականական***	***Քերականական***
Նմուշ՝	*Նմուշ՝*	*Նմուշ՝*
դաս[1] – 1. դասաժամ, 2. ուսումնական պարապմունք, 3. խրատ **դաս**[2]– հասարակական խումբ, խավ, դասակարգ	**գիտակից**[1] – 1. գիտակցող, 2. լրջմիտ **գիտակից**[2]– *գիտակ* գոյականի եզակի բացառականը	**սիրելիս**[1] –*սիրելի* ածականը՝ *-ս* հոդով **սիրելիս**[2]–*սիրել* բայի համակատար դերբայը

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Ուլի-ուլի, անսեր-անսեր, արոս-արոս-արոս, բացատում-բացատում, արոր-արոր, ափ-ափ, տնկի-տնկի, բազուկ-բազուկ, ջրեր-ջրեր, բալ-բալ, բարակ-բարակ, գեղգեղանք-գեղգեղանք, ուլ-ուլ, քաղ-քաղ, գետին-գետին, ուռ-ուռ, որդի-որթի, գազ-գազ, երամակից-երամակից, գայլուկ-գայլուկ, թզի-թզի, կուզ-կուզ, տատրակ-տատրակ, սարդ-սարդ, հոտ-հոտ-հոտ, հորան-հորան, իրիկնացող-իրիկնացող, լեռնապար-լեռնապար, խավարում-խավարում, խոզուկ-խոզուկ, մարսեցի-մարսեցի, խորդ-

խորդ-խորդ, մոր-մոր-մոր, ծագ-ծագ, ԱՍԵԱՆ-Ասիան, անոթ-անօդ, մորթ-մորթ, ցող-ցող-ցող, ծիրանի-ծիրանի, թաղ-թաղ, լուսնագնաց-լուսնագնաց:

Բառային	***Բառաքերականական***	***Քերականական***
Նմուշ՝	*Նմուշ՝*	*Նմուշ՝*
բազուկ[1] – 1. թև, ձեռք՝ ուսից մինչև արմունկը, 2. ճյուղ, ոստ (բույսերի), 3. գետի ճյուղավորում, 4. լեռնաշղթայի ճյուղ, 5. բույսի կոթունի երկարությամբ անցնող ջիղը **բազուկ**[2] – ճակնդեղ	**բացատում**[1] – օրգանի անջատում՝ հեռացում **բացատում**[2] – *բացատ* գոյականի եզակի ներգոյականը	**ջրեր**[1] – *ջուր* գոյականի հոգնակին **ջրեր**[2] –*ջրել* բայի ըղձական անցյալի եզակի 3-րդ դեմքը

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Սարքին-սարքին, պարապ-պարապ, համարի-համարի, շանթահարված- շանթահարված, մեկին-մեկին, անհամար-անհամար, թվագիր-թվագիր, ամպեր-ամպեր-ամպեր, գազ-գազ, կանգուն-կանգուն, երերանք-երերանք, հատած-հատած, թվեր-թվեր:

Բառային	***Բառաքերականական***	***Քերականական***
Նմուշ՝	*Նմուշ՝*	*Նմուշ՝*
անհամար[1]– 1. չհամարակալված, չհաշվված, 2. անհաշվելի, անթիվ, 3. հաշվի չենթարկվող **անհամար**[2] – համար՝ թվահամար չունեցող	**հատած**[1] – շրջանագծի՝ աղեղով և երկու շառավղով սահմանափակված մասը **հատած**[2] – *հատել* բայի հարակատար դերբայը	**թվեր**[1] – *թիվ* գոյականի հոգնակին **թվեր**[2] –*թվել (թվարկել)* բայի ըղձական անցյալի եզակի 3-րդ դեմքը

2. 4. Բացատրեք տրված հարանունների իմաստային տարբերությունները: Բառաշարքը հարստացրեք ձեր մասնագիտությանն առնչվող հարանունական զույգերով:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Հանցանք-զանցանք, պաշտոնական-պաշտոնեական, ցուցում-ցուցմունք, ազգային-ազգայնական, ազատել-ազատագրել, կազմակերպական- կազմակերչական, հավաքել-հավաքագրել, միասնական-միացյալ, ներում-ներողություն (խնդրել), պահել-պահպանել–պաշտպանել, պատճառ-պատճառաբանություն-պատրվակ, պարտականություն-պարտավորություն, տանտեր-տանուտեր, տնտեսություն-տնտեսում, տնօրինություն-տնօրենություն, կազմակերպություն-կազմակերպում, փոխանակում-փոխանակություն, զորավոր-զորավար, լուծել-լուծարել, պատմական-պատմագիտական, կեղծարար-կեղծարարք:

Նմուշ՝ *հանցանք* (հանցավոր արարք. հանցագործություն)–

զանցանք (թեթև հանցանք. զանցառություն):

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

Ավանդույթ-ավանդություն, զեկույց-զեկուցում, հազվագյուտ-հազվադեպ, հրավեր-հրավերք, հրատարակել-հրապարակել, հրատարակություն-հրատարակչություն, մանրամասն(եր)-մանրամասնություն(ներ), նորոգել- վերանորոգել, նորություն-նորույթ, պատվեր-պատվիրան, տեղական-տեղային, քառյակ-քառատող, կազմություն-կազմում, տպել-տպագրել, փորձառական-փորձարարական, արվեստակերպ-արվեստակերտ, երգացան-երգացանկ, նկարում-նկարուն:

Նմուշ՝ *զեկույց* (մի եղելության մասին բանավոր կամ գրավոր հաղորդում՝ տեղեկատվություն)-*զեկուցում* (բանախոսություն):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Գորով-կորով, հուզում-հուզմունք, զգացում-զգացմունք, մտածում-մտածմունք, հասկացություն-հասկացողություն, պահանջ-պահանջմունք, զգացողություն-զգացում, զգուշություն-զգուշավորություն, խոստանալ-խոստովանել, խտրություն-խտրականություն, հաղթանակել-հաղթահարել, հիմնվել-հիմնավորվել, նկարագիր-նկարագրություն, նուրբ-նրբանկատ, պատրաստակամություն-պատրաստականություն, սկզբունքորեն-սկզբունքայնորեն, տարբերել-տարբերակել, տարորոշել-տարրորոշել, փորձություն-փորձառություն, քննել-քննարկել, վրդովել-վրդովվել, հոգեկան-հոգեբանական, սոցիալական-սոցիոլոգիական:

Նմուշ՝ *զգացողություն* (զգալու կարողություն) - *զգացում* (զգալու կարողության արտահայտությունը՝ իրացումը):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Բնախույզ-բնախույս, մրիկ-մրրիկ, վաղորդայն-վաղորդյան, վարգ-վարք, այգաբաց-այգեբաց, ամոլ-ամուլ, սրում-սրացում, տարածություն-տարածք, ցեղական-ցեղային, մռմռալ-մրմռալ, մակարդ-մակարդակ, դողդոջուն-դողդոջյուն, թոթովել-թոթվել, կենսական-կենսաբանական, անոթ-անութ:

Նմուշ՝ *մրիկ* (բույսերի՝ հացաբույսերի սնկային հիվանդություն) – *մրրիկ* (ուժեղ քամի. փոթորիկ):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Ծրագրել-ծրագրավորել, հնար-հնարանք-հնարք, չափ-չափս, հաշվական-հաշվային, հաշվում-հաշվառում, հաշվել-հաշվեկշռել, թվանիշ-թվանշան-թվանշանակ, թվային-թվաբանական, ընդհատում-ընդհատուն, տրամագիր-տրամագիծ, ծրիչ-կրիչ, գործարկու-գործարկում:

Նմուշ՝ *հաշվել* (1. համրել, 2. թվերով գործողություն կատարել) – *հաշվեկշռել* (հավասարակշռել):

ԲԱՌԱՊԱՇԱՐ

1. Բառապաշարի շերտերն ըստ ծագման

Բնիկ և փոխառյալ բառեր

Հետևյալ բառերը դասակարգեք ըստ տրված աղյուսակի՝ օգտվելով ներքոհիշյալ բառարաններից:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Գող, հրովարտակ, հերոս, լիբերալացում, սվին, ամբոխ, տոտալիտարիզմ, ասպետ, իշխան, բոլշևիկ, թուր, ռեկետ, դատ, օպոզիցիա, նետ, դեկաբրիստ, զենք, դեմոկրատիա, ատյան, պալատ, իշխել, ստատուս, թագ, գերի, ոստան, ամնիստիա, հայց, տոհմ, միտինգ, խալիֆա, դեկլարացիա, խումբ, բանակ, մինիստր, դեսպան, որդի, սեպուհ, ապստամբ, ամուսին, կրիմինալ, վճիռ, դիկտատոր, դուստր, գաղութ, կայսր, էլեկտորատ, ժառանգ, մեղք, օրենք, լեգիտիմ, ստրուկ, կտակ, վնաս, երդում, կոմպլեմենտար, դատախազ, կոռուպցիոներ, մարտ, աքսոր, ալտրուիզմ, նաժիշտ, ցեղ, հայդուկ, գրոհ, մաղթել, նախարար, սոցիում, պատվեր, տանդեմ, պատրիկ, հազարապետ, ուզուրպացնել, գահ, զրահ, քսենոֆոբիա, աղխ:

Բնիկ բառեր	Փոխառյալ բառեր	
	Արտաքին փոխառություններ	*Օտարաբանություններ*
Նմուշ՝ *հայց*	Նմուշ՝ *դատ* (փոխառություն *իրանական* աղբյուրից)	Նմուշ՝ *դեկլարացիա* (լատ. declaratio – ծանուցում)- 1. կառավարական՝ կուսակցական ևն պաշտոնական հայտարարություն որևէ խնդրի՝ բանակցությունների՝ քաղաքական հիմնական սկզբունքների ևն վերաբերյալ, 2. այդ հայտարարության պաշտոնական ձևակերպումը ներկայացնող փաստաթուղթը. հայտարարագիր, 3. անհրաժեշտ տեղեկություններ բովանդակող որոշ կարգի պաշտոնական փաստաթղթերի անվանում. հայտարարություն, 4. հռչակագիր

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Նվագավար, կրկես, ստադիոն, նովել, եկեղեցի, դեզինֆորմացիա, հանդես, նուրբ, պարիսպ, դեբյուտ, մյուռոն, ամբիոն, սյուրռեալիստ, ձոն, սաղմոս, թոք շոու, երգեհոն, սուրբ, կլիպ, օպերա, ժուռնալիստ, մզկիթ, պրեմիերա, երգ, ջազ, մագաղաթ, անսամբլ, գիր, մեղեդի, բեմ, գիծ, բրիֆինգ, դեր, ազդ, երաժիշտ, խաղ, պրեզենտացիա, թատրոն, գույն, կտավ, յուբկա, երանգ, ձև, նվագ, նկար, ձայն, աքսեսուար, դերձակ, հանճար, մոդեռն, դերձան, քանդակ, առասպել, ռեպրոդուկցիա, ատլաս, քնար, ծոմ, մելոդիա, քղամիդ, էքսպոնատ, ծես, լեյտմոտիվ, գեղեցիկ, սպիտակ:

Բնիկ բառեր	Փոխառյալ բառեր	
Նմուշ՝ *երգ*	*Արտաքին փոխառություններ*	*Օտարաբանություններ*
	Նմուշ՝ *մեղեդի* (հուն.)	Նմուշ՝ *բրիֆինգ* (անգլ. briefing) – մամլո կարճ ասուլիս. ճեպազրույց

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Դժխեմ, մարդ, էքստազ, ողբալ, դժվար, դիալոգ, հոգի, հարազատ, կոմպլեքս, ուրախ, հույս, թշվառ, պրոբլեմատիկ, հույզ, լպիրշ, հիշել, ինստինկտ, ատել, սթրես, վախ, պրոբլեմ, խանդ, ներվ, ժպիրի, ազարտ, ուղեղ, ահ, երջանիկ, ժանտ, անձ, ագահ, ստրատիֆիկացիա, նպատակ, նյարդ, հավատ, ձիրք, շնորհ, բարք, կոնտակտ, խիղճ, հանդուրժել, խեղճ, հաճույք, էմոցիոնալ, կարծիք, էմոցիա, վիշտ, հեղգ, էնտուզիազմ, սարսել, կամք, պսիխոլոգիա, խաղաղ, ֆրուստրացիա, ամբարտավան, աֆեկտ, ամուրի, իրոնիա, բախտ, կոնֆլիկտ:

Բնիկ բառեր	Փոխառյալ բառեր	
Նմուշ՝ *հոգի*	*Արտաքին փոխառություններ*	*Օտարաբանություններ*
	Նմուշ՝ *ուրախ* (փոխառություն *իրանական* աղբյուրից)	Նմուշ՝ *ֆրուստրացիա* (լատ. – frustratio - խաբեություն, հույսերի խորտակում) - մարդու համար նշանակալի որևէ նպատակի հասնելու անհնարինությունից առաջացող և ճնշող լարվածությամբ, անելանելիության զգացումի տագնապով դրսևորվող հոգեբանական վիճակ

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Պոմիդոր, հայր, պարտեզ, բիոլոգիա, կիտրոն, մայր, քույր, աշխարհ, սխտոր, միրաժ, եղբայր, էկոլոգիա, կոկորդիլոս, ոզնի, դրենաժ, արև, երկինք, մետաղ, կոնցենտրատ, գազ, կոնսերվանտ, արտ, շավիղ, բույս, ֆունգիցիդ, իմունիտետ, առյուծ, սյուք, ռեգիոն, տառեխ, ձյուն, գլուխ, պարարտ, պլանտացիա, աչք, բակտերիա, ականջ, երաշտ, բիոսֆերա, սիրտ, կլիմա, բույր, հորթ, տոպոգրաֆիա, ցանել, վագր, գորտ, մարմին, սիրամարգ, ստրատոսֆերա, ձեթ, էկզոտիկ, ակն, պալար, գազար, ինձ, ալպինիստ, անանաս, դաշտ, ոստ, հարավ, անեքսիա, գիշեր, երկիր, քիմիա, ձի, արշիպելագ, բրինձ, սեռ, սերմ, լանդշաֆտ, արյուն, սեյսմոգրաֆ, լիճ, զեյթուն, աղ, ամպ, բրիզ, ջուր, շելֆ, օր, սիսեռ, պեմզա, հող, այսբերգ, կրիա, տայգա, ձեռք:

Բնիկ բառեր	**Փոխառյալ բառեր**	
Նմուշ՝ *ոզնի*	*Արտաքին փոխառություններ*	*Օտարաբանություններ*
	Նմուշ՝ *շավիղ* (ասոր.)	Նմուշ՝ *ստրատոսֆերա* (լատ. stratum – շերտ + հուն. sphaira - գունդ) – մթնոլորտի շերտ՝ երկրի մակերևույթից 8-55 կմ բարձրության վրա. վերնոլորտ

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Մասսա, երկու, ամպլիտուդա, գրամ, կոմպյուտեր, երեք, դիսկ, գունդ, անտենա, հինգ, կոդ, արագացուցիչ, կասետ, հարթ, անալիզ, վեց, մաթեմատիկոս, յոթ, օպերատոր, բուրգ, ինդեքս, ութ, կոորդինատ, դատարկ, ինը, ավտոմատ, տասը,

անկյուն, քառասուն, սկաներ, քսան, հաշիվ, ֆաքս, հիսուն, պարամետր, վաթսուն, ինտերնետ, ութսուն, ուժ, պրոցեսոր, իննսուն, ինֆորմացիա, հարյուր, դիագրամ, անկյուն, պրինտեր, դադար, ալգորիթմ, երկարություն, համար, հազար, դինամիկա, լույս, կոմպյուտերիզացիա, աղմուկ, ֆլյուենտներ, տատանում, սլայդ-շոու:

Բնիկ բառեր	**Փոխառյալ բառեր**	
Նմուշ՝ *երկու*	*Արտաքին փոխառություններ*	*Օտարաբանություններ*
	Նմուշ՝ *հազար* (փոխառություն *իրանական* աղբյուրից)	Նմուշ՝ *դինամիկա* (հուն. dynamikos – ուժային)– մեխանիկայի՝ մարմինների շարժման օրենքները (նրանց վրա ազդող ուժի ներգործությամբ) ուսումնասիրող բաժինը. ուժաբանություն

Բառարաններ

1. ***Աճառեան Հ.,*** Հայերէն ստուգաբանական առձեռն բառարան, *Հայերէն արմատական բառարանից* համառոտեց *Մ. Մինասեանը*, Ժնև, 2004:
2. ***Հայրապետյան Ա.,*** Օտար բառերի բառարան, Հեղ. հրատ., Ե., 2011:
3. ***Մալխասեանց Սպ.,*** Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, ՀՍՍՌ Պետհրատ, Ե., 1944-1945:
4. ***Ջահուկյան Գ.,*** Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., «Ասողիկ» հրատ., 2010:
5. www.nayiri.com *(էլեկտրոնային բառարանների գրադարան):*

2. Բառապաշարի ժամանակագրական շերտերը

Հնաբանություններ և նորաբանություններ

Հետևյալ բառերը (բառակապակցությունները) խմբավորեք ըստ երկթև (T-աձև) աղյուսակի:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Ամբողջատիրություն, կապտել, բախումնաբանական կենտրոն, բաբան, աշտե, արգելանք, ազգայնապաշտություն, այրենոց, նաժիշտ, բռնաշորթում, դիտազննում, սենեկապետ, ենթաօրենսդրական, ընթացակարգ, շահապ, սահմանադրականացում, ստվերային, քսանապետ, ընտրազանգված, կոռ, ժողովրդավարություն, բաստեռն, բասրել, կարգավիճակ, դատալսում, համաներում, սալար, սակ, հռչակագիր, մեծամասնական, բաբանել, նվիրատու, ցեղակրոն, ամիրա, փոխմարզպետ, քրեածին, վարձակ, փոխանհանդուրժողականություն, իշխանազոր, խորհրդայնագետ, կազմակերպված հանցավորություն, ճորտ, կողմնորոշիչ, համահասարակական, պայազատել, հավասարահիրավ, կոմերիտական, մատնադրոշմային, մերձպետական, պարտիական, սոցմրցություն // սոցմրցում, միջդաշինքային, ներդրումային, մարդպետ, մելիք, ներընտանեկան, աշտե, նորանկախ, մոգպետ, պետականամետ, տեգ, քրեածին, հրապարակավ, սադրիչականություն, տարընթերցում:

Հնաբանություններ	*Նորաբանություններ*
Նմուշ՝	Նմուշ՝
իշխանազոր - իշխանի զորքը	*համաներում* - բանտարկյալներին (պատժից՝ կալանքից ազատելով կամ պատիժը մեղմացնելով) ներում շնորհող օրենսդրական ակտ

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

Տեսանյութ, քրմապետ, շքահամերգ, շնորհանդես, մոգ, ապատեղեկատվություն, Նավասարդ, բեմացանկ, բազմանկար, մշակութանպաստ, նաքարակիտ, բեմել, գեղագրություն, գեղարար, կահույր, հեռուստաթղթակից, մեղեդիակերտում, հանգույն, գեղարվեստականացում, եթերաժամանակ, գերիրապաշտ, նհանգ, նկարաբանել, երկաբանել, երաժշտաալիք, գրչընկեր, բառգիրք, կնճռախաղ, երգահան, զրուցահանդես, պնակիտ, լեզվամշակութային, լրամաս, խաղարկային, Արաց, համակառույց, համանվագ, որդան կարմիր, համույթ, հանդերձացույց, շիգղ, հեռուստագովազդ, ճեպազրույց, տիրանկար, շնորհանդես, երաժշատամանկավարժական, չորրորդ իշխանություն, ցածրաոճ, փանդիռ, ենթանկար, զարդամտածողություն, ռադիոեթեր, սաղմոսարան, թատերացանկ, թխագույն, հեռուստառեժիսոր:

Հնաբանություններ	*Նորաբանություններ*
Նմուշ՝	Նմուշ՝
պնակիտ – քառակուսի փոքրիկ տախտակ, որին կպցրած թղթի վրա գրում էին այբուբենը (սովորելու համար)	*նկարաբանել* – նկարազարդել

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Անսալ, ահածին, այպ, թյուրընկալում, տագնապյալ, բարեզգացողություն, խնդրահարույց, բարդույթավորվել, վարվողություն, մտածելակերպ, վարկանիշ, բազմիմաց, գիտնաբար, բարոյանպատակամետ, գոռոզացյալ, դատողայնություն, դատահոգեբանական, անձանձիր, վարվեցողական, վարժուհի, թերարժեքության բարդույթ, կենսադիրք, ընդդիմակաց, կռահողականություն, վարժուհիություն, մտահոգեբանական, մտակերտվածք, հնարահան, մտասթափեցում, նազարականություն, այպանելի, տագնապածին:

Հնաբանություններ	*Նորաբանություններ*
Նմուշ՝	*Նմուշ*՝
այպ - ծաղր, ամոթանք	*բարդույթավորվել* – բարդույթավոր դառնալ, բարդույթ ձեռք բերել (կոմպլեքսավորվել)

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Ականջախոռոչ, արտերկիր, այծհորան, տարաշխարհիկ, բնապահպան, աղիքուղի, այրեցյալ, խտանյութ, սմբուկ, ամպամաղ, դիասնունդ, սնկասպան, բնապաշար, վարակամերժություն, տարածաշրջան, բնօգտագործում, երիզուտ, տեղաբնիկ, ուժանակ, գոյունակ, զվարակ, ուժանյութ, երկրագոտի, ամլածին, բնալուծարան, ենթաջերմային, կնդրկաբեր, երերակայուն, երկրաջրոլորտ, թերիակե, աստղանավորդ, կաշվակեր, սնանել, կենսաակտիվ, մարսագնաց, եղրևան, մեղվաշխարհ, սակավանտառ, սերնդավերարտադրություն, տիվ, օզոնաշերտ:

Հնաբանություններ	*Նորաբանություններ*
Նմուշ՝	Նմուշ՝
այրեցյալ – տաք, շոգ	*տարաշխարհիկ* – տվյալ վայրին ոչ բնորոշ (էկզոտիկ)

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Այլագրում, ալեորսիչ, երեք բյուր, գերգրվածք, մետասան, գործարկու, ալիքահամալիր, երկոտասան, դասիչ, դիրքաթիվ, էներգաբաշխիչ, դադարանք, թվայնացում, էներգակիր, երեքտասան, ինքնաշխատ, ծրիչ, հարաչափում, չորեքտասան, համակարգչայնացում, համացանց, քսան և մի, հեռապատճեն, հոսանքամատակարարում, հիշասարք, հնգետասան, պատճենիչ, մկնիկ, քայլաշար, չորեքկուսի, տպիչ, էլեկտրահավաք, ցուցարկիչ, վեշտասաներորդ, էներգահաշվիչ, տեսահեն, չորեքին, լցարկիչ, լուսալամպիկ, լուսատարային,

երից, լուսափոխարկիչ, համակարգչահենություն, ութուտասն, հեռակառավարվող, ճառագայթաակտիվ, իննևտասն, մշակիչ:

Հնաբանություններ	*Նորաբանություններ*
Նմուշ՝	Նմուշ՝
մետասան - տասնմեկ	*համակարգչահենություն* – համակարգչային իրազեկումը կամ ծրագիրը գողանալը

3. Բառապաշարի շերտերն ըստ գործածականության

Համագործածական և սահմանափակ գործածություն ունեցող (այլև հուզարտահայտչական երանգավորում ունեցող) բառեր

Հետևյալ բառերը (բառակապակցությունները) դասակարգե՛ք ըստ երկթև (Տ-ածև) աղյուսակի (անհրաժեշտության դեպքում օգտվե՛ք տրված բառարաններից):

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Հաբսբուրգներ, սառը պատերազմ, ազատանի, ազապ, պատերազմ, հակաբուրժուական, նահանջել, հաշվատու, ազգախաբ, դատարան, ցնցխում, բազմաթափառ, դատավոր, բուրժույ, հանցանք, ցնծալ, հակագրոհ, թագուհի, ալաններ, կլպել, վաղեմականություն, գցել, նախազինակոչիկ, օրասպասիկ, ֆռռացնել, թագ ու պսակ, գահընկեցություն, հին, ազգապատում, անմեղսունակ, գուպար, նախահանցանք, իրա-

վազանցում, ծլկել, Ֆռանգստան, գուպարահաղթ, լակոնացի, գուպարում, թագավոր, տեռոր, խալխ, դաշն, հելլենիզմ, խարջ, դատաստանատուն, հազարապետ, սառը խաղաղություն, ազ-գանենգ, գահընկեցություն, ոմն:

Համագործածական բառեր	*Սահմանափակ գործածությամբ (այլև հուզարտահայտչական երանգավորումով) բառեր*
Նմուշ՝ *պատերազմ*	*Նմուշ՝ հաշվապու* (Ար. բրբ.) – հաշիվ տվող, *ազապ* (ժղ.) – չամուսնացած, ամուրի, *բուրժույ* (արհմրհ.) – բուրժուաների արհամարհական անվանում, *վաղեմականություն* (գիտ.՝ իրավ.) – օրենքով սահմանված ժամանակամիջոց, որի ընթացքում կորսվում կամ ձեռք են բերվում որոշակի իրավունքներ:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Հագար, դաշտանկար, Սութում, փայտափորագրություն, երգել, աղոթերգ, լազպար, նկարել, երանգապնակ, եղեմաշունչ, ալտահար, նկարել, թուղթ մրող, դաջարվեստ, եկեղեցի, լալազար, որմնանկար, պար գալ, սիրուն, եզոպոսյան, ռադիո-բեմադրություն, երեստեսուկ, վահագնակերպ, մազուրկա, կաթովապրի հարս, գիրք, նախագրյալ, մազդեզականություն, սպիտակ, բուֆոնային, կարմիր, աղոթք անել, ձևակերտություն, Պանդորա, հապաղանիշ, քրիստոնյա, վալտորն, երանգ, թատերացանկ, ձայնավարժություն, նախամարգարե, եռերգ,

կարդալ, ճգնակեցություն, մաժոր, նվագել, ակապելլա, սադրանկարիչ, պարել, անգլոբարբաջյուն, փեշ:

Համագործածական բառեր	*Սահմանափակ գործածությամբ (այլև հուզարտահայտչական երանգավորումով) բառեր*
Նմուշ՝ *երգել*	*Նմուշ՝ կաթովապրի հարս* (Խն. բրբ.) – փայտից շինած հարս-խրտվիլակ (Համբարձման տոնին երեխաները, տները պտտեցնելով, ուտելիք են հավաքում), *պար գալ* (ժղ.) – պարել, *թուղթ մրող* (գռհկ.) – ապաշնորհ կերպով գրող ՝ նկարող և այլն, *ձայնավարժություն* (գիտ.՝ երժշտ.) – ձայնը մարզելը՝ մշակելը. ձայնամարզություն:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Խելոք, ադյուլտեր, սիրել, հոգեբույժ, ազատախոկ, բարդույթ, քնել, ռեֆլեքս, էշի ականջում քնած, երեխա, բազմազվարճ, լավամարդ, դառնանձուկ, քաշվել, ապրել, աշխարհայացք, գազազել, եղկակենցաղ, մանթռաժ ընկնել, կին, բարոյահոգեբանական, ենթագիտակցություն, եղկամտություն, վարքագիծ, հիշել, միտն ընկնել, եպերանք, խոսքկապ, ազատագութ, հանրույթ, խոսել, պատկերավոր մտածողություն, ազարտ, որոշումախաղ, ազնվաբարոյություն, ինկած-ելած, ի սպաս դնել, իրասածի, ընտանիք, սոցիալական խմբեր, տենչավառ, լավ, հոգեկան կերտվածք, տեսլականություն, կիրք, սոցիալական օրենք, զվարթ, հարգանոք, ծտություն, ուսումնազրույց, զվարթ, բազմակարիք, չար, հոգեկան արտացոլում, ներհայեցողություն:

Համագործածական բառեր	*Սահմանափակ գործածությամբ (այլև հուզարտահայտչական երանգավորումով) բառեր*
Նմուշ՝ *սիրել*	*Նմուշ՝ խոսքկապ* (բրբ.) – 1. Պլ., Ակն. նշանադրությունից առաջ կատարվող արարողություն, երբ տղայի կողմից գնում են աղջկա տուն, և մատանիով կամ այլ նվերներով կնքվում է նախնական համաձայնություն ամուսնության վերաբերյալ, 2. Մշ. խոսքկապի համար տրված մատանին, *իրասածի* (ժղ.) - իր ասածը պնդող, համառ, կամակոր, *որոշումախաղ* (հեգն.) – զանազան իրարամերժ որոշումներ կայացնելը, *ներհայեցողություն* (գիտ՝ հոգ.) – 1. մարդու կողմից իր հոգեկան վիճակներին և մտքերի ընթացքին անմիջականորեն, ներքին ուշադրությամբ հետևելու և արտացոլելու գործընթացը, 2. հոգեբանական ուսումնասիրության մեթոդներից մեկը, որը թույլ է տալիս ստանալ շատ կարևոր հոգեբանական փաստեր:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Հալիվորուկ // հալիորուկ, ագաթե // ագաթյա, ադամաթիթեռ, լուսին, խժռել, թաթ, ազատերամ, ապակեհատիկանյութ, լափել, ճութ, գլուխ, ճայեկ, գունափետուր, ազդրոսկրային, սատկել, ջուր, եթերահած, ազելայինաթթու, լակել, գյուղ, ռաժան // ըրաժան, եթերյան, հող, սուզակետ, պռոշ, խաղաղասյուք, ազնվամորի, ծնվել, բազմաթարախ, հակազդականություն, թոն, մեռնել, հակաերկրաշարժային, արև, ջամբել, ունկն, վագերաձի,

երկիր, կաթնաջամբություն, թիթեռ, վալենտականություն, սիրտ, տիեզերածավալ, տայգա, արծիվ, մագնեզիում, մարդ, նախաբազուկ, շնչել, կաթնագոյացում, ձեռք, լակմուսային, ոտք, լյարդ, տերևաբան, մանրէ, օդ, ալկոհոլաչափ, ոզնի, աչք, հագագ, հարթավայր, արքայիկ, աղվես, աստղ, եթեր // էթեր, լուսին, ադամալույս, վագրենամռունչ:

Համագործածական բառեր	*Սահմանափակ գործածությամբ (այլև հուզարտահայտչական երանգավորումով) բառեր*
Նմուշ՝ *գլուխ*	*Նմուշ՝ հալիվորուկ // հալիորուկ* (Ար. բրբ.) – սպիտակ գույնի խաղող՝ բարակ կեղևով, կլոր հատիկներով, *ադամալույս* (ժղ.)– լույսը բացվելու ժամանակը և հորիզոնի լուսավորումն այդ պահին, *տիեզերածավալ* (գրք.) – 1. ամբողջ տիեզերքում ծավալված՝ սփռված. տիեզերատարած, 2. փխբ. անսահման, անպարագիծ:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Ամպլիտուդա, մաթեմ, ինֆորմացիոն, հինգում, սինուս, դարձաբևեռ, մեկ, դանդաչ, իռացիոնալ, երկու, ջեռաչափություն, արագ, գագաթնակողմ, համարիչ, ալֆա-մասնիկ, դանդաչել, դարձագամ, երեք, հակաատոմային, չորս, ալգորիթմ, օխտը, ձայանսեղմիչ, բազմապատկելի, հինգ, հակադարձելի, վեց, հակազուգահեռ, թվաբ, լայնույթ, յոթ, վակուումային, գերհարթություն, ութ, ձայնահաճախականություն, ձայն-ձոր, տեղեկատվություն, ինը, տանգենս, տասը, մագնիսագետ, տաշահղկել, մակածական, ինֆրահնչյուն, հազար, տիեզերաֆիզիկոս, սար-

քավար, ալեհավաք, համբարք, մագնիսական դաշտ:

Համագործածական բառեր	*Սահմանափակ գործածությամբ (այլև հուզարտահայտչական երանգավորումով) բառեր*
Նմուշ՝ *հինգ*	*Նմուշ՝ հինգում* (բրբ.՝ Ղրբ., Կր.) – հինգերորդ, *մաթեմ* (ժրգ.) – իրական աշխարհի քանակական հարաբերություններն ու տարածական ձևերն ուսումնասիրող գիտաճյուղերի ամբողջությունը. մաթեմատիկա, *ձայնահաճախականություն* (գիտ.՝ ֆիզ.) – ձայնային ալիքների հաճախականություն:

Բառարաններ

1. ***Աղայան Է.,*** Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:
2. ***Էլոյան Ս.,*** Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի» հրատ., 2002:
3. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969-1980:
4. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2001-2012:
5. ***Նաւասարդեանց Տ.,*** Բառգիրք Արարատեան բարբառի, տպ. Մ. Վարդանեանցի, Տփխիս, 1903:
6. ***Սարգսյան Ա.,*** Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013:
7. *www.nayiri.com (էլեկտրոնային բառարանների գրադարան):*

4. Բառապաշարի ոճական շերտերը

Միջոճային (չեզոք), ժողովրդախոսակցական և գրքային բառեր

Դասակարգեք տրված բառերը (բառակապակցությունները) ըստ եռաթև (Մ-աձև) աղյուսակի:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Ժողովուրդ, ներպետականացում, անմեղսագիտակ, հավատարմագիր, քաղաք, քոշկ, արդար, ծիրանեծին, ուխտ, փղաբանակ, ընկեր, մեղադրողական, թագավոր, դատաստանական, եռապետություն, պիղատոս, թագվոր, ծավալապաշտություն (էքսպանսիա), մածնի մերան, վեհազգի, ինքնամեղ, խուժան, ինքնօրեն, վառվել (գործի բերումով), տիրակալել, միակնություն, ախպերական թալան, անմեղսունակ, ղազագիր, օտարել, կանխավարկած, բերդ:

Միջոճային (չեզոք) բառեր	***Ժողովրդախոսակցական բառեր***	***Գրքային բառեր***
Նմուշ՝	*Նմուշ՝*	*Նմուշ՝*
ընկեր	*ղազագիր* (հպատակություն արտահայտող գրություն)	*անմեղսագիտակ* (իրավք. 1. անմեղսագիտակության վիճակում գտնվող, 2. անմեղսագիտակության վիճակում գործված՝ կատարված, 3. մեղք՝ հանցանք գործելու անկարող. անմեղսունակ)

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Կապույտ, սգահանդերձ, սազ գալ, բիլ, հավատո հանգանակ, ալվլան, կենտապար, գեղեցիկ, երգաթրթիռ, լսել, ածխանկարչություն, աճուճ-պաճուճ, ախորժահունչ, նոր, հրաշաձայն, սիրուն, գիպսաքանդակ, սև, եղերերգություն, երանաշնորհ, դեղին, ապատեղեկատվություն, տերտերական, մակագիր (էպիգրամ), եղին-դեղին, զգայապաշտություն (էքսպրեսիոնիզմ), զուգերգ, մուգ, նազիկ-մազիկ, ընդօթյակ, իսկական, լուրթ, առաջնելույթ, լվել:

Միջոճային (չեզոք) բառեր	***Ժողովրդախոսակցական բառեր***	***Գրքային բառեր***
Նմուշ՝	Նմուշ՝	Նմուշ՝
կապույտ	*լվել* (եզրակարել)	*ապատեղեկատվություն* (տեղեկատվության աղավաղում, ոչ ճշգրիտ տեղեկատվություն)

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Ալարել, դիվային, քնել, մշտավիշտ, ահավոր, մարդավարի, ձեռնբաց, աղայություն, տխրանուշ // թախծանուշ, երեսպաշտություն, սիրտն առնել, վախենալ, տրտում, դարդ, պսակվել, բստրանք, ձանձիր, նկրտել, կյանք, բնություն, ընկճախտ, տխուր, բասրանք, անսիրտ, ականջդրուկ, բորբոքվել, դժոխակեզ, արյունը խառնել, շոգմոգել, ահմռել, ցավ, ամոթերես, աղքատ, փնովել, նկրտանք, ամոթ, սիրավոր, անձնապանծություն, մարդացու, սիրել, սիրտը հատնել, քաջախոհ,

օգնել, հոգեհմա, ձեռք բռնել, հափշտակվածություն, չանչել, հակվածություն, հայեցակարգային, գլուխգովանություն, խելոք, կեղծապարիշտ, աչքաբաց:

Միջոճային (չեզոք) բառեր	***Ժողովրդախոսակցական բառեր***	***Գրքային բառեր***
Նմուշ՝	*Նմուշ՝*	*Նմուշ՝*
գիխուր	*մարդացու* (մարդ՝ ամուսին դառնալու հասակին հասած)	*կեղծապարիշտ* (կեղծավոր) *ընկճախտ* (ընկճվելու հիվանդություն)

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Չբերություն, ուղեշ, ամպուչանկ, դաշտային, ենթածծմբային, դան, սյուք, անտառ, գելիավք, նժույգ, ոստան, անձրև, փեթակաթող, ձի, սննդառության շղթա, երիվար, թառմա, շարակցական հյուսվածք, եղինջ, եղրևանի, աղավնատուն, թիփի, էկոլոգիական աղետ, աճ, կուռ, մշակել, անընկալունակություն, աճել, կծղուկ, վարակամերժություն, չախկալ, դաղձ, կիտրոնաթթու, չալապոչիկ, քամի, իշաճանճ, ծառ, շվաք, շուն, մուժ, զուգակերպություն, լայնաթուփ, այտ, վարակայնություն, կեծ-կրակ:

Միջոճային (չեզոք) բառեր	***Ժողովրդախոսակցական բառեր***	***Գրքային բառեր***
Նմուշ՝ *անտառ*	Նմուշ՝ *չախկալ* (շնագայլ)	Նմուշ՝ *վարակայնություն* (մանրէի ախտահարույց կարողություն. վիրուլենտություն)

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Քսան, սեղմասկավառակ, կենտ ու կունտ, շրջահատում, ցուցարկիչ, քառասուն, համակարգչայնացում, փինաչի, տատանում, չափակարկին, յոթներյակ, չափակշռել, հարյուր, զուգահեռանիստ, ներգծյալ պատկերներ, հազար, բազմահաստոցային, բարձր, տիրույթ, լույս, տեսաինֆորմացիա, առաջին, ամանակացույց, հինգ-վեց, ուժադաշտ, միլիոն, համաժամանակեցում, ձայն-ձոր, կենտրոնազանց, լայնշի, ձայնորսիչ, չորեքանկյուն, բարձրություն, չորեքնիստ, զուգամանակություն:

Միջոճային (չեզոք) բառեր	***Ժողովրդախոսակցական բառեր***	***Գրքային բառեր***
Նմուշ՝ *քառասուն*	*Նմուշ՝* *ձայն-ձոր* (առաձգական միջավայրում մասնիկների տատանողական շարժում)	*Նմուշ՝* *զուգահեռանիստ* (մաթ. վեցանիստ, որի հիմքերը զուգահեռագծեր են. պարալելեպիպեդ)

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Բառերի տեսակներն ըստ կազմության

1. Պարզ և բաղադրյալ բառեր

Հետևյալ բառերը խմբավորեք ըստ կազմության և գրեք աղյուսակի համապատասխան սյուներում:

Պարզ կամ արմատական բառեր	Բաղադրյալ բառեր	
	Ածանցավոր	*Բարդ ածանցավոր*

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Տույժ, բանտախցիկ, հակախտրականություն, հայապահպանություն, ապաքաղաքական, բերդ, ազատություն, հանդուրժողականություն, հաղորդակցություն, գահ, հայցադիմում, արդարություն, ցուցմունք, գրոհ, հավասարություն, իրավախախտություն, պետություն, կայսր, հասարակություն, քրեակատարողական, Արա, փաստ, արքունական, պատմականություն, լրտեսաբար, արժանապատվություն, հին, կոտորած, գողություն, ազգ, հակաահաբեկչություն, թագադրում, Բել, պատասխանատվություն, Վան, հակաժողովրդական, բազմազգյան, հաղթանակել, ուխտ, ռամկավարություն, ժողովրդա-

հայրենասիրական, համամիութենական, ազնվականական, բդեշխ, ռմբապաստարան, կտակ, թագավորական, ռազմիկ, դատ, նախահարձակում, պատմահայեցողություն, գրավ, սակրավոր, քաղաքական, պատմավիպասան, նախճիրային, ներպետական, պատիժ, պատմահերոսական, ներքաղաքական, վրեժ, անպատժելիորեն, մեղսունակություն, պատմափիլիսոփայահոգեբանական, թագ, գաղտնալսում, ենթաօրենսդրական, ցեղ, ընտրադաշինք, վեճ, ընտրահնարք, խումբ, կուսակցականացում:

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

Բազմաժանրություն, գիր, գեղանկարիչ, Նարեկացի, կարմիր, գեղարվեստորեն, եկեղեցի, հայերեն, սպիտակ, գծանկարում, ասացող, գծագրել, երգ, հանդերձապահուհի, գույն, փայլունանալ, մետաքս, արվեստագետ, հեքիաթ, արվեստական, տաճարաշինություն, կապույտ, տավիղածու, լուսանկարել, քանոնահարուհի, սյուն, թատերական, նվագ, լուսավորիչ, քանդակազարդություն, գորգ, հորինվածք, քնարեգական, լուրթ, նկարիչ, նախաներկում, դհոլ, նկարչական, կտավ, օձիքավոր, սիրերգակ, օղավոր, կտավ, նազանք, շարժ, նախշավոր, արվեստակցություն, ապատեղեկատվություն, երանգ, նավասարդյան, գեղագրություն, երփն, ժանր, ներբողական, խաղ, գեղարվեստականացում, նուրբ, դժգույն, լեզվամշակութային, փայլ, վերարկու, լրահավաքություն, խումբ, քնարական, մուգ, անգաղափարայնություն, շնորհ, խոհագրություն, սև, գունային, ոճ, գերլրատվական, վրձնում, պար, առմուտք:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Խելագար, բարդույթ, բամբասանք, խինդ, բասրանք, երազ, ներհակորեն, բարոյախոսական, ներշնչանք, նյարդ, առողջ, հոգեկան, գիտակցաբար, փորձ, ողորմած, իղձ, ճանաչական, ապաբախտ, ինքնակամորեն, տագնապել, տմարդի, մեղմ, ինքնակատարելագործում, բարդ, բաղձալի, հակակրանք, թախծահարություն, բարի, ագահ, հաճույք, համր, տաղանդազրկում, հոգեպես, հանդգնաբար, նախազգալ, վախ, թախիծ, ապրումակցում, ուրախանալ, ուրույնանալ, սուտ, փարիսեցի, թյուրընկալում, սեր, ամոթ, փափագել, լուտանք, ծույլ, վեհ, խաբել, օժանդակում, փորձ, տագնապել, խիղճ, քնել, խեղճ, հոգեբանավերականգնողական:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Քաղաք, թթվենի, մակերես, լեռ, արևմտաեվրոպական, անտառ, ձուկ, երամովին, անդրուրանային, պղինձ, ջուր, հազարտերևյան, ոլորտ, թթվայնություն, հող, ծծմբային, առյուծ, ծեգ, համատիեզերական, Հայաստան, կրիա, անդրկովկասյան, լեղազատել, լսելիք, լճակ, արյուն, էգ, խաղողհասուկ, բեղմնավոր, քացախաթթվային, զույգ, ցլիկ, արեգ, ենթագանգ, օձ, արծաթ, համաճարակածին, փեթականոց, ուղտ, նավթ, օդերևութաբանական, բուրդ, աշխարհ, փետրավոր, ափ, ուղեղ, ներմայրցամաքային, մահ, գեղձ, փշավոր, տարր, նյութ, իգական, ծով, լեռնային, գետ, վարակամերժություն, բևեռ, երկիր, լերկանալ, մակընթացություն, գլուխ, տարածականություն, թև, սաղմնային, չու, միրգ, սաղմնաբան, բու, սաղարթավոր, մեգ, անտիմոնաթթվային, սիրտ, քարաճիկ,

սաղմ, քիմիական, շանթ, նավթոտ, վարդ, հարավ, անդրատ-
լանտյան, աստղ, ող, ռետինամետաղական, որթ:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Համակարգչահենություն, մաթեմատիկական, քանակ, թվայնացում, թիվ, գազաջեռուցիչ, տասը, տեղեկույթ, հինգ, տեղեկագիտություն, հազար, երկու, ծրիչ, դադար, խնդիր, ինքնաբարձիչ, մաթեմատիկորեն, մշակիչ, բարձր, իննհար-
յուրերորդ, մեկական, պատճենիչ, տասնիններորդ, առաջին, գունդ, երկարություն, ստեղն, զրո, տատանագրիչ, մկնիկ, քառակի, ցանց, բացատ, վոլտ, հազարերորդ, տարածագծա-
գրություն, բացասական, համակագչային, շարժ, ութսուն, համակարգչահենություն, համեմատական, իննսուն, ուժ, եռանկյունաչափական, լույս, լարում, լիցքավորել, ձև, երկրա-
չափություն, ներբեռնել, տասնորդական, անկյուն, գազ, քա-
ռորդ, արտածելի, պահ, թվանշանային, գումարելի, քսաներորդական, էջ, անջերմահաղորդ, բաժանում, տատանական, մնացորդ, բուրգ, անչափընտրելի:

2. Բարդություններ

2. 1. Հետևյալ բարդությունները խմբավորեք ըստ համադրական և վերլուծական տեսակների և գրեք աղյուսակի համապատասխան սյունակներում:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Արևմտյան Հայաստան, ազգավնաս, ծովից ծով, ջոկատ-

ջոկատ, առևտուր, Շապին-Գարահիսար, բանագնաց, այրուձի, Մծբինի պայմանագիր, ալան-թալան, ցուցմունք տալ, նիստուկաց, Եռաբլուր, դարից դար, հին-հին, դռնփակ, Տիգրան Կրտսեր, գեներալ-լեյտենանտ, Ծոփաց աշխարհ, աղուհաց, քվեատուփ, դեմ առ դեմ, ստահոդ, Արմենի-Շուպրիա, նետ ու աղեղ, շառ ու շուռ, զենք ու զրահ, ջախջախել, առ ու ծախ, հնուց ի վեր, բանակ առ բանակ, խույս տալ, կենտրոնաձիգ, հանձն առնել, ոճրապարտ, բերդ-ամրոց, ոսկեշորթ, ըստ օրինի, բերդ-քաղաք, հանցակազմ, տուրևառ, Բարձր Հայք, նստացույց:

Համադրական բարդություններ		**Վերլուծական բարդություններ**	
Կցական	***Իսկական***	***Հարադրություններ***	***Կրկնավորներ***
Նմուշ՝ *այրուձի*	Նմուշ՝ *ոճրապարտ*	Նմուշ՝ *հանձն առնել*	Նմուշ՝ *ալան-թալան*

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

Դեփ-դեղին, գլուխգործոց, թոփ-մոդել, մարտանկար, օպերա-բալետ, ցածրառոճ, երգի-պարի (համույթ), ձայնածավալ, կլոր պար, քարտաշ, այբուբեն, փոփ աստղ, երանգ-երանգ, շարժանկար, ձայնասկավառակ, Սարգիս Պիծակ, նրբառոճ, Բուֆթատրոն, ազդաթերթ, Սայաթ-Նովա, բազմագեղ, ասուլիս, ճեփ-ճերմակ, բազմագույն, բաց կապույտ, բանաստեղծ, ալ կարմիր, շարժուձև, ոսկեգույն, զույգ-զույգ, շուրջպար, մուգ կանաչ, գույնզգույն, ոսկերիզ, դյուցազնավեպ, Լեոնարդո դա

Վինչի, թարգմանել տալ, ծալ-ծալ, բարբառ, տեսանյութ, բառ ու բան, հուշաղբյուր, երգել-պարել, երփնավառ, վարդերես, հագուստ-կապուստ, լարախաղաց, բաս-կիթառ, ոսկեդար, դիոլ-զուռնա, լուսերես, զուգել-զարդարել, հավերժաթով, բազմանկար, ցուցահանդես-մրցույթ, նոփ-նոր, թատրոն-ստուդիա, նիստուկաց, արվեստակերտ, թել-ասեղ, արվեստասեր, կռել-կոփել, ավարտահանդես, հուշ-երեկո, շորոր-մորոր, գինեձոն, պեսպես, շոու բիզնես, գրչընկեր, ռոք խումբ, սեփ-սև, դիպաշար, սև-սպիտակ, կամարակիր, լրահոս, վառ վարդագույն, լրամաս, կաս-կարմիր, ճեպազրույց, ունկնդրել, խումբ-խումբ:

Համադրական բարդություններ		**Վերլուծական բարդություններ**	
Կցական	***Իսկական***	***Հարադրություններ***	***Կրկնավորներ***
Նմուշ՝ *ասուլիս*	Նմուշ՝ *ոսկերիզ*	Նմուշ՝ *հուշ-երեկո*	Նմուշ՝ *երանգ-երանգ*

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Ազատախոհ, ախ ու վախ, սարսուռ, խաղք-խայտառակ, ազատասեր, միտք անել, բազմանձուկ, բացբերան, ասել-խոսել, սառնարյուն, սուսիկ-փուսիկ, բացճակատ, գործընկեր, խորիմաստ, հույս ու հավատ, լռակյաց, նեղսիրտ, հարգ ու պատիվ, գլխի ընկնել, բարեհամբույր, ահուդող, հոգեբույժ, նստել մտածել, ճիփ-ճիշտ, ջանք ու եռանդ, ջղագրգիռ, սուս-փուս, սրամիտ, ուժ ու կորով, իրեն-իրեն, լուռումունջ, հայեցակարգ, տեսակետ,

սուտ-սուտ, ընկած-ելած, ինքնավստահ, եսապաշտ, ակնածել, ոգեպինդ, հոգու հատոր, հարցաթերթիկ, հոգեվիճակ, միս-մենակ, կարգախոս, աչքի լույս, որդեսեր, չեմ-չում, մեծսիրտ, գլխի գցել, սառնարյուն:

Համադրական բարդություններ		**Վերլուծական բարդություններ**	
Կցական	***Իսկական***	***Հարադրություններ***	***Կրկնավորներ***
Նմուշ՝ *ահուդող*	Նմուշ՝ *նեղսիրտ*	Նմուշ՝ *միտք անել*	Նմուշ՝ *սուս-փուս*

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Կեսօր, երամ-երամ, խտանյութ, ծլել-ծաղկել, սնկասպան, սկիզբ առնել, ծիլ-ծիլ, մայրցամաք, բարեբեր, ականջախոռոչ, Հարդագողի ճանապարհ, թթվակայուն, Բզնունյաց ծով, բևեռաստղ, աբեղաձագ, հյուսիս-արևելք, աբեղախոտ, Փոքր Ասիա, ձորեձոր, ադամաթիթեռ, Վիկտորիա ջրվեժ, ճյուղ առ ճյուղ, աշխարհեաշխարհ, բազմադաշտ, բուսանյութ, Վիեննայի անտառ, ափնիվեր, բազմամագիլ, բակլայահատ, Ծաղկունյաց լեռնաշղթա, թև առնել թռչել, սարեսար, շաքա-ռեղեգն, լանջնիվեր, փոր-փսոր, միգապատ, բուք ու բորան, լեռնագագաթ, ձորնիվեր, բարեխառն, գայլ ու գազան, ձորնիվայր, վաղահաս, Փոքր առյուծ, ոզնախոտ, ոսկեսաղարթ, էգ ու որձ, հավերժաձյուն, լանջնիվայր, դափնեվարդ, հող ու քար, Հեռավոր Արևելք, աղաթթու, սար ու ձոր, ոսկոր-մոսկոր, աղաքիմիա, տղամարդ, անտառապատ:

Համադրական բարդություններ		**Վերլուծական բարդություններ**	
Կցական	***Իսկական***	***Հարադրու-թյուններ***	***Կրկնավորներ***
Նմուշ՝ *աշխարհեաշխարհ*	Նմուշ՝ *սնկասպան*	Նմուշ՝ *հյուսիս-արևելք*	Նմուշ՝ *ծիլ-ծիլ*

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Գագաթնակետ, ալիք-ալիք, քսանվեց, դիֆերենցիալ հավասարումներ, քսանյոթ, ազատ անկում, գագաթնահայաց, ֆունկցիաների գրաֆիկ, հինգ-հինգ, գազազերծ, քառակուսի արմատ, տասնմեկ, երկու-երկու, տասներկու, կենսադաշտ, օպերացիոն համակարգ, ինֆորմացիայի աղբյուր, տասնչորս, աճել-մեծանալ, տասնհինգ, երկու և կես, երեք-երեք, գագաթնաձիգ, տարրական մասնիկների ֆիզիկա, քսանութ, հինգ-վեց, տասնվեց, հազար-հազար, կենսադաշտ, երկու հազար հիսունինը, ալգորիթմների անալիզ, տասնյոթ, հատվածակողմ, յոթ-յոթ, քսանհինգ, Գոթֆրիդ Վիլհելմ Լեյբնից, տասնութ, կիլովատտ-ժամ, յոթ-ութ, քսանմեկ, ութից տասը, երկու երրորդ, տասնինը, մի երկու, Գալիլեո Գալիլեյ, քսաներկու, երեք հարյուր, հարթաչափ, Նեյմանի խնդիր, ալիքահամալիր, երեք հազար, դիրքաթիվ, ցույց տալ, հիշասարք, մի երեք, յոթ-ութ, ալեհավաք, չորսից հինգ, տոննա-մետր, հինգ հարյուր, գազախտաչափ, չորս-հինգ, վոլտ-ամպեր, վեց-վեց, գնդակերպ, վեց հազար:

Համադրական բարդություններ		Վերլուծական բարդություններ	
Կցական	***Իսկական***	***Հարադրություններ***	***Կրկնավորներ***
Նմուշ՝ *քսանվեց*	Նմուշ՝ *հարթաչափ*	Նմուշ՝ *հինգ հարյուր*	Նմուշ՝ *երկու-երկու*

2. 2. Հետևյալ հապավական բարդությունները դասակարգեք ըստ փառային, վանկային և խառը տեսակների:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

ԱԱՊՎ, աշխօրենսդրություն, ՔԿԱԳ բաժին, դատկատարածու, ՀԻՔՄ, զինկոմ, բատրակկոմ, ՀՅԴ, Ռուսկոմկուս, ԱՀ, գավկենտրոն, ԱՀԴՀ, ժողդատարան, ԲՕ, ֆինվերահսկողություն, ԴԱՀԿ, Հայկոմկուս, աշխգրքույկ, ԵԴ, ռազմխորհուրդ, ԵԽ, հեծգունդ, զինղեկ, ԵՍՋ, հրետգունդ, ՋՈՒ, կենտկոմ, ԸՀ, ՏԱ օրենք, ԻԱ, հրամկազմ, ԽՀ, կոմկուս, ՀԱԲ, պետհսկողություն, ՀՄՊ, հեղկոմ, ՀՊ, վիճվարչություն, ՄԽ, ուսվարձ, ՀՓՄՄ, ռազմհեղխորհ, քաղբանտարկյալ, ՌԴ, շրջհամայնք, ՆԳ բաժին, ՍԴ, տեղկոմ, ՏԻՄ, զինգրքույկ, ՎԻ, արտգործնախարար, լիկկայան, ՎՀ, ժողդատարան, ՔՕ, քաղաշխատանք:

Նմուշ՝

փառային. ՀԻՔՄ - Հայաստանի իրավագետների և քաղաքագետների միություն

վանկային. Հայկոմկուս – Հայաստանի կոմունիստական կուսակցություն

խառը (վանկաբառային). աշխօրենսդրություն – աշխատանքային օրենսդրություն:

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

ՀՄԼՖ, ժողգործիքներ, ՋԼՄ, խմբկոլ, ՀՆՄ, կազմկոմիտե, ՄՀՀ, ԱԳ, ընդկազմբաժվար, ԱԳՄՓԿՊԱ, պետթատրոն, ԵՖ, բանգյուղթղթակից, ԱՀ, գեղխորհուրդ, ԱՄՄ, ԳԱԹ, ժողթատրոն, ԳԱԿ, ԵրԳԻ, ԳԽ, հայֆիլհարմոնիա, ԵԳՊԱ, գեղֆիլմ, ԵԹԿՊԻ, «Հայֆիլմ» (կինոստուդիա), ԵԺԿ, ԹԳՄ, բեմարվեստ, ԵՍՆ, ԹՄՄ, կազմբաժվար, ԺԱԹ, մուլտֆիլմ, ԿՖՖՓԿՊԱ, ՀԱԵ, շինարվեստ, ՀԱՊ, ՀԱՌ, պետկրկես, ՀԹ[1], ՀԹ[2], հեռուստաբանավեճ, ՄՖ, ՊՄԱՊ, հեռուստագովազդ, ՎԴ:

Նմուշ՝
պառային. ԱԳ – Ազգային գրադարան

վանկային. խմբկոլ – խմբագրական կոլեգիա

խառը (վանկաբառային). ժողգործիքներ – ժողովրդական գործիքներ:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

ԲՍՓ, ուսխորհուրդ, աշխղեկ, կինկազմակերպություն, ՋՏԿ, փոխօգնություն, սոցապ, ԸՕ, քաղդաստիարակչական, ԽԾԲ, զինուսուցում, ԿԻԿ, դասղեկ, մեթոդխորհուրդ, ՀՍԸ, ջոկվար, ՄՋ, կրթօջախ, ՄՀՀԸ, մանկխորհուրդ, սոցաշխատանք, ՍԾՏԳ, մեթոդմիավորում, ՓՌ (անգլ. PR - public relations = հանրային

հարաբերություններ), ուսմասվար:

Նմուշ՝

տառային. ՄՋ – մարդկային զարգացում

վանկային. սոցապ – սոցիալական ապահովագրություն

խառը (վանկաբառային). քաղդաստիարակչական – քաղաքական և դաստիարակչական:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

ԱԵ, քիմգործարան, ԱԽՏ, բուժֆակ, ԱՀ, ՈՒՄ ճառագայթում, ՄԵՎԱՆԿ, թռչնարդ, ԱՄՆ, ագրոգիտասփյուռ, ԲՀԳՄԱ, քիմմաքրում, բևեռաստղ, քիմֆակ, ԲՀՀ, Եվրասիա, ԿԱՀ, հիդրոմետծառայություն, ՀԱ, Շիրջրանցք, ՉԺՀ, շինաղբ, ՊԱՀ, սանէպիդկայան, ՊՄԿ, էկոհամակարգ, ՊԷՏ, քիմգործարան, ՌՆԹ, ֆիզքիմիկոս, ՌՏԳ, գյուղֆակ, ՏԲԿ, բնակմակերես, ՖԱԴ, անտառպտղաբուծական, ԻԻՀ:

Նմուշ՝

տառային. ԱԵ – Արևելյան Եվրոպա

վանկային. քիմֆակ – քիմիական ֆակուլտետ

խառը (վանկաբառային). ֆիզքիմիկոս – ֆիզիկական քիմիայի մասնագետ:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

ԷՀՄ, ԹԾԿՀ, մեխմաթ, ԳԱՏԱՀ, էլփոստ, Հաէկ, Երիէկ,

աէկ, ԵրՄՄԳՀԻ, ԳՍԼ, ՑԳԼ, տեղարդ, ԲԷՑ, էլցանց, ԱԼԿ, ջէկ, ԱԿՍ, ֆիզմաթ, ԷԷՀ, ՄՄԳԻ, Ձորահէկ, ԷԹՀՄ, ՏՏ, մաթանալիզ, ԻՏ, ԿԱ, ՁԱՀ, ֆիզֆակ, ՄԱ, ՏՀՀԱՑ, ՖՄԴ:

Նմուշ՝

կառային. ՏՏ - տեղեկատվական տեխնոլոգիաներ

վանկային. մեխմաթ - մեխանիկայի և մաթեմատիկայի (ֆակուլտետ)

խառը (վանկակառային). ԵրՄՄԳՀԻ – Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ:

Համառոտագրություն

Համառոտագրեք հետևյալ բառերը (այլև կապակցություններն ու բառաձևերը)՝ բացատրելով համառոտելու եղանակները:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Տնտեսագիտական, սույն թվականին, հասարակագիտություն, պատմական, մեր թվարկությունից առաջ, փիլիսոփայություն, XIX-XX դարեր, դիվանագիտական, Դատական օրենսգիրք, իրավաբանական, Քրեական դատավարության օրենսգիրք, քաղաքական, 1921-1940 թվականներ, ֆինանսական, Գևորգ Մարզպետունի, վարչական, Մխիթար Գոշ, բանակային, Արամ Մանուկյան, պաշտոնական, Հովհաննես Բաղրամյան, ռազմական, մինչհեղափոխական, Քաղաքացիական օրենսգիրք:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Երաժշտական, լուսանկարչություն, Գարեգին Հովսեփյան, ոճաբանություն, գեղարվեստական, Հովհաննես Այվազովսկի, ճարտարապետական, Էդգար Շահին, թատերական, առասպելաբանություն, արվեստ, դիցաբանություն, Արամ Խաչատրյան, մշակութաբանություն, գրադարանային, դերձակություն, Ծովինար Մովսիսյան, նկարչություն, տաղաչափական, տպագրություն, ռադիո, լրագրություն, կերպարվեստ, գծագրություն, կիրառական, ռեժիսուրա, գործիքային, օպերատորություն, հռետորական, Միեր Մկրտչյան, կառավարում, ակադեմիկոս, Շառլ Ազնավուր, թարգմանություն, հատոր, պարարվեստ, թանգարանային, պրոֆեսորներ, հեռուստատեսություն:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Հոգեթերապիա, Էլդա Գրին, խորհրդատվություն, սոցիոլոգիա, հոգեբանական, Ալբերտ Նալչաջյան, հիշողություն, արհամարհական, կրթություն, գործնական, Սամվել Խուդոյան, ընտանիք, տարիքային, բնազդներ, ագրեսիա, Պաուլ Ուիլսոն, բուլլինգ, զգացմունքներ, հոգեֆիզիոլոգիա, Ռիչարդ Բենդլեր, սոցիալական մանկավարժություն, Ջոն Գրինդեր, հոգեբուժություն:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Երկրաբանություն, նյութեր, կենդանաբանություն, Մխի-

թար Հերացի, աստղագիտություն, Ղևոնդ Ալիշան, աշխարհագրություն, Վիկտոր Համբարձումյան, կենսաբանություն, մետաղ, բուսաբանություն, տիեզերական, Հարություն Աբելյան, կազմախոսական, Քրիստափոր Կոլումբոս, քիմիական, օքսիդացում, ախտաբանական, միացություն, այգեգործական, ագրոէկոլոգիա, բժշկական, հեկտար, մանրէաբանական, քառակուսի մետր, օդերևութաբանական, բնապահպանություն, բջիջներ, բնօգտագործում, սնկաբանություն:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Միլիոն, մետր, Պարիս Հերունի, սանտիմետր, երկրաչափական, մետր խորանարդ, միլիարդ, մեգաբայթ, ջերմատեխնիկա, միլիմետր, մաթեմատիկա, մեխանիկա, ֆիզիկա, ինֆորմացիա, տեխնիկական, բնագիտական, էլեկտրական, կիլոգրամ, տեխնոլոգիա, Արտաշես Շահինյան, ձեռնարկչություն, Իսահակ Նյուտոն, խնդիրներ, Կլոդ Էլվուդ Շենոն, թվային, Վալտեր Ֆրիդրիխ Հերման Նեռնստ, ինտեգրալ, Ջոն Նեպեր, դիֆերենցիալ, ծրագիր, Լեոնարդ Էյլեր, գծագրական, համադրում, տատանումներ:

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՇՐՋԱՍՈՒՅԹՆԵՐ

1. Օգտվելով դարձվածաբանական բառարաններից՝ բացատրե՛ք հետևյալ դարձվածքների[1] իմաստները:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

1. Անվանողական (բառակապակցության ձևավորումով) դարձվածքներ

Տեղը կորցնել, պատմության անիվը հետ շրջել, հորիզոնում ամպեր կուտակվել, պատմության դասեր, աղ ու հացով, անունը մրոտել, պյուռոսյան հաղթանակ, աշխարհից կտրվել, աշխարհով մեկ, սև գործ, աչքը հանել, բաբելոնյան աշտարակաշինություն, դանակը ոսկորին հասնել, զենք վերցնել, զենքը ձեռքին, սուր բարձրացնել, ընդհանուր լեզու գտնել, թակարդն ընկնել, թիկունք դարձնել, թրի տակով անցնել, քավության նոխազ, թուր թրի տալ, թևերը փռել, թուրը կտրել, սրի քաշել, իրար տակ փորել, ծնկի իջնել, քարավան կտրել, հրապարակ իջնել, հրի ու սրի մատնել, սև ցուցակ, ձեռնոց նետել, ճամփա բացել, մեղք գործել, մեջք ծռել, քաղաքացիության իրավունք

---

1 Դարձվածքները ներկայացնելիս հիմք ենք ընդունել այն բնագավառները, որոնցում դրանք գործածվում են, այն (կրճատած) համեմատությունները, պատկերների զուգորդությունները, որոնք ընկած են դրանց հիմքում, ինչպես նաև նրանց բաղադրիչային կազմը և, առավելաբար, նրանց արտահայտած իմաստը (իմաստները): Այդ կարգի անվանողական կապակցությունների շարքում հաշվի ենք առել նաև դարձվածային շրջասույթները:

տալ, մթնոլորտը շիկանալ, մեռած հոգի, մի մարդու պես, երկաթե բռունցք՝ կրունկ՝ գարշապար, մութ ուժեր, նիզակ ճոճել, պատիվը գցել, սառը պատերազմ, ուժի դիրքերից, ավելորդ մարդիկ, կարմիր դրոշակ, հետքի վրա ընկնել, կարմիր տեռոր, հարկի տակ դնել, ժողովրդի ձայն, երկաթի օրենք:

2. Հաղորդակցական (նախադասության ձևավորումով) դարձվածքներ

Մեկը կա՝ հազար արժի, հազարն էլ կա՝ մեկը չարժի: Ձուկը գլխից է հոտում: Մի ծաղկով գարուն չի գա: Շունը տիրոջը չի ճանաչում: Ողբամ զքեզ, հայո՛ց աշխարհ: Պլատոնը բարեկամս է, բայց ավելի մեծ բարեկամը ճշմարտությունն է: Բաժանի՛ր, որ տիրես: Ամեն մարդ ոտքն իր վերմակի չափով պետք է մեկնի: Իմացյալ մահն անմահություն է: Եվ դո՛ւ, Բրուտո՛ս:

Նմուշ՝ *1. ուժի դիրքերից* = օրենքին հակառակ, սպառնալիքի դիրքերից

2. Բաժանի՛ր, որ տիրես = Մասերի՛ բաժանիր՝ միասնականությունը քայքայիր՝ որևէ երկրի՝ ժողովրդի ավելի հեշտ տիրելու համար:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

1. Անվանողական (բառակապակցության ձևավորումով) դարձվածքներ

Աչք շոյող, առաջին ծիծեռնակ, առաջին ջութակ, ասպարեզ գալ, երգ երգոց, թղթին հանձնել, կարապի երգ, ձայն խնդրել, ձայն ունենալ, սաթի պես սև, ոսկե ձեռքեր ունենալ, սուր անկյուն, ութերորդ հրաշալիք, թռչող գորգ, թուղթ մրոտել, կաթի պես սպիտակ, Բաբելոնի՝ բաբելոնյան աշտարակ, նռան պես կարմիր, ընթերցողի սեղանին դնել, լողակի պես կապույտ, գրքերի մեջ թաղվել, տոպրակի նման կախվել, թանաքը չչորացած, կապտին՝ կապույտին տալ, կատվի համերգ, պար բռնել, արծաթի ձայն, քննություն բռնել, նոր էջ բացել, օրվա հերոս, հրեշտակի պես գեղեցիկ, ծագող աստղ, մետաքսի պես փափուկ:

2. Հաղորդակցական (նախադասության ձևավորումով) դարձվածքներ

Տաշած քարը գետնին չի մնա: Ինչպես թամբը կովին է սազում: Ոչ միայն հացիվ (հմմտ. գրաբ. Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ): Ոնց վարպետն է, այնպես էլ գործն է: Լավագույնը լավի թշնամին է: Ասես հեքիաթ լինի: Ամեն անգամ գետը գերան չի բերի: Ճտերն աշնանն են հաշվում:

Նմուշ՝ *1. երգ երգոց* = մեծ նշանակության և ստեղծագործական խոյանքի գեղարվեստական կատարյալ ստեղծագոր-

ծություն. գլուխգործոց

2. Ոնց վարպետն է, այնպես էլ գործն է = Կատարած աշխատանքը համապատասխանում է կատարողի կարողություններին:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

1. Անվանողական (բառակապակցության ձևավորումով) դարձվածքներ

Հոգուն հասնել, բաց աչքով կույր, սև ուրբաթի պես, պլատոնական սեր, լեզու առնել, գլխի ընկնել, աստծու գառ, սիրտը ահ ընկնել, քամու բերանն ընկած, աշխարհով մեկ լինել, բաց աչքերով, մի մտքի, վախենալ ինչպես սատանան խնկից, աչքից ընկնել, արյունը եռալ, հոր պես սիրել, աջ ձեռք, (համբերության) բաժակը լցվել, մահու չափ ատել, բաց ճակատ, գլխին քարոզ կարդալ, գլուխը կորցնել, դիմակը պատռել, ի խորոց սրտի, ինքն իրեն գտնել, խղճի ձայն, գառնազգեստ գայլի նման, իրեն հավաքել, մինչև հոգու խորքը, պրոկրուստյան մահիճ, կրակի պես, սիրտը շարժել, սիրտը նեղվել, փափուկ սիրտ, քար սիրտ, քիթը բարձր, զգալ ինչպես փշերի վրա, օլիմպիական անտարբերություն, մեկի ուղեղը մթագնել, այսօրվա պես հիշել, կարճ հիշողություն, Մորփեոսի գիրկն ընկնել, ապրել ինչպես շուն ու կատու, ուղեղի բոլոր ծալքերով, ներքին աշխարհ, հերկուլեսյան սյուներից դենը գնալ, Սողոմոնի նման իմաստուն, ուղեղների լվացում, աղվեսի պես խորամանկ, խելքը կտրել:

2. Հաղորդակցական (նախադասության ձևավորումով) դարձվածքներ

Կարծես իր մոր գիրկն ընկավ: Լավ չէ: Կարծես ասեղների վրա նստած լինի: Ասես Մանթաշովի թոռը լինի: Անունը կա, ամանում չկա: Ասես հալվեց: Լավ է կույր աչոք, քան կույր մտոք: Կարծես մորից նոր ծնվեց: Իրեն այնպես է զգում, ինչպես ձուկը ջրում: Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ: Կարծես մի ծանր քար՝ բեռ ընկավ ուսերից՝ սրտից:

Նմուշ՝ *1. խելքը կտրել* = գիտակցել, մի բանից հասկանալ, դատողություններ անել

2. Կարծես մի ծանր քար՝ բեռ ընկավ ուսերից՝ սրտից = Ճնշող հոգեվիճակից ազատվեց:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

1. Անվանողական (բառակապակցության ձևավորումով) դարձվածքներ

Չորս բոլորը, չոր կոճ, երկնքից կրակ թափվել, լեթարգիական քուն, ծաղիկ հասակ, ծանր ականջ, հասակ առնել, յոթ սարից այն կողմ, օդ ու ջրի պես, աջ ու ձախ, ջերմոցում աճող, կարմիր գիծ, բնության գրկում, օդը սղոցել[1], օդը սղոցել[2], հավ ու ճիվ, բնության խաղ, իններորդ ալիք, հասակ նետել, հասկ գցել՝ քաշել, թույլ ստամոքս, աշխարհ գալ, աստծու բարիք, ավետյաց երկիր, աշխարհի չորս կողմ՝ ծագ, կմախքի պես, կապույտ արյուն, արևի՝ լուսնի՝ աստղերի տակ, արև

ծագել, եզան պես առողջ, կարմիր արև, նյութը կտրվել, Եվայի հագուստով, թեփի նման վեր տալ:

2. Հաղորդակցական (նախադասության ձևավորումով) դարձվածքներ

Պտուղը ծառից հեռու չի ընկնում: Ոնց որ ուղտին գդալով ջրես: Առողջ հոգին առողջ մարմնի մեջ: Ոնց որ մի խնձորը երկու կես անեն: Ցուրտը թրի պես կտրում է: Կյանքդ աղբյուրի ջրի պես երկար լինի: Ասես ջրի տակը սուզվեց: Ասես գետնից բուսնեց: Ասես քամին տարավ: Ծիտն անգամ չի կարող անցնել:

Նմուշ՝ *1. հասկ գցել* = հասկակալել, հասկերը դուրս գալ՝ աճել
2. Ցուրտը թրի պես կտրում է = Սաստիկ ցուրտ է:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

1. Անվանողական (բառակապակցության ձևավորումով) դարձվածքներ

Երկու անգամ երկու, աչքի չափով, տորիչելյան դատարկություն, ուղիղ համեմատական կախման մեջ լինել, հաշիվը կորցնել, հարյուր տոկոսով, նմուշի համար, զրոյի հավասարեցնել, ժամացույցի պես աշխատել, երկու անել, հազար-հազար, հազար ու մեկ՝ հազար ու մի, առյուծի բաժին, մեկին երկու, դուրս բերել, թիվ երկու, երեկ մեկ, այսօր երկու, ուժի մեջ թողնել, ուժ առնել, հօդս ցնդել, թիվ մեկ, շարքից դուրս գալ, մեքենայի պես աշխատել, հազար անել, պարտադիր

գումարելի, մեկը երկու անել, մեկը տասը՝ հազար անել, մեկը՝ մինը երկուսով, մեկին հարյուր, հազար անգամ, մեկ, երկու:

2. Հաղորդակցական (նախադասության ձևավորումով) դարձվածքներ

Պարզ է, ինչպես երկու անգամ երկու հավասար է չորսի: Հաշիվ չկա: Ժամանակը ոսկի է: Ժամանակը թանկ է: Ինչ ասել կուզի: Ինչպես մեկին գումարած մեկ հավասար է երկուսի: Հազարին կեսը հինգ հարյուր է:

Նմուշ՝ *1. երկու անել* = կիսել, երկու մասի բաժանել
2. Հաշիվ չկա = Շատ-շատ՝ բազմաթիվ են:

Բառարաններ

1. ***Բադիկյան Խ. Գ.,*** Ուսումնական դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2002:
2. ***Բեդիրյան Պ. Ս.,*** Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2011:
3. **Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա.,** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 1975:
4. *www.nayiri.com (էլեկտրոնային բառարանների գրադարան):*

2.

ա) Կատարեք բառարանային աշխատանք՝ բացատրելով հետևյալ շրջասույթների նշանակությունները:

բ) Շարքը հարստացրեք ձեր մասնագիտությանն առնչվող շրջասույթների օրինակներով:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Անարյուն հեղափոխություն, արդարադատության տուն, արտաքին քաղաքական գերատեսչություն, արճիճի լեզվով խոսել, բանակցությունների սեղանի շուրջ նստել, երկաթյա ուղեղ, երրորդ աշխարհ, ժողովրդի ընտրյալ, գաղափարի զինվոր, լեռնային արծիվ, խորքերի բնակիչներ, ճերմակ հեղափոխություն, մոռացված մարդիկ, պատմության հայր, սև մարդ, սոցիալական քաղցկեղ, հասարակական կարգի պահապան, Ֆեմիդային ծառայել, հայոց օրիորդ, ապացույցների թագուհի, երրորդ իշխանություն, մեծ մահակ, պատերազմի զավակ:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Անապաստան գլուխգործոցներ, տիտանների դար, գեղարվեստի տաճար, վրձնի վարպետ, անմահ մահկանացու, գործիքների թագավոր, արվեստի բագնին նետել, բեմին ծառայել, բոլդինյան աշուն, չորրորդ իշխանություն, գրի հսկա, մտքի առողջարան, գործիքների թագավոր, ոգու մշակ, գույների կախարդ, երաժշտական հանրապետություն, մեծ քանաքեռցի, կապույտ եթեր, երաժշտության Ռուբենս, մեծ արագոնացի, երկրորդ իրականություն, կտավին հանձնել, ձայների աշխարհ, հայ երաժշտության հայր, Մաշտոցի լեզու, հայկական սիմֆոնիզմի հայր, լուսաշող հանճար, հայ մամուլի Էմիլ դը Ժիրարդեն, ճաշակի օրենսդիր, հայրենի գույների վարպետ՝ կախարդ, ձկան մորթուց մուշտակ, հնության պահապան, պարերի թագուհի:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Հոգեբանության հայր, անտարբեր չլինել մի բանի նկատմամբ, ներքին մարդ, լուռ մեծամասնություն, Քրիստոսի օրհնած, խելագար իմաստուն, երազների ասպետ, մտքի տունն ընկնել, դպրոցական՝ աշակերտական նստարան, երկրորդ բնավորություն, հոգու ընկեր, երկրորդ երիտասարդություն, կանաչ աչքերով ճիվաղ, ներքին դատավոր, երրորդ աչք, լուսավորության տաճար, մարգարեի հինգերորդ երկինք, մտածող՝ խորհող եղեգ(ն), ոսկի երիտասարդություն:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Պոսեյդոնի աղի պետություն, սև խորշ, ազնիվ մետաղների թագուհի, օվկիանոսի գլադիատոր, Ադրիականի թագուհի, քարի քաղցկեղ, կյանքի շարժիչ, աղմկող ծուխ, Անդրկովկասի մարգարիտ, տագնապի հորմոն, կրակ արտաշնչող լեռ, ան-տառի պոետ, կյանքի մոլորակ, աշխարհագրության հայր, կանաչ երկիր, Պերունի ծառ, աշխարհի երրորդ բևեռ, առա-վոտյան աստղ, հյուսիսի հսկա, Ասքանազյան երկիր, կյանքի կղզիներ, արարչի եդեմ, երկնային կանթեղ, արևմտյան աշ-խարհ, բարձունքների տիրակալ, եղանակի խոհանոց, բուսա-կան աշխարհի թագուհի, հունական կրակ, երկնքի ազատ բնակիչներ, կանաչ թոքեր, երկրագնդի երկնագույն աչքեր, խմելու ոսկի, կանաչ գորգ, շեկ ավազ(ներ), կարմիր մոլորակ, հայկական խնձոր:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Ատոմային ռումբի հայր, գիտելիքների ճարտարարվեստ, թարս ու շիտակ, Իլյիչի աչիկներ՝ լամպեր, խոսող դասագիրք, կապույտ ածուխ, նեյտրոնային ռումբի հայր, պողպատե աշխատող, սպիտակ ածուխ, Մենլո պարկի հրաշագործ, տաք խոպան, մարդ-մեքենա:

Բառարաններ

1. ***Բեդիրյան Պ. Ս.,*** Հայերեն շրջասույթների բառարան, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2010:
2. **Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա.,** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 1975:
3. *www.nayiri.com (էլեկտրոնային բառարանների գրադարան):*

Ինքնուրույն աշխատանք
լեզվաբանական բառարաններով

1.

ա) Մասնագիտական (ճյուղային) բառարաններից իմաստային բացատրություններով հանդերձ դուրս գրեք առնվազն քսանհինգ բառ՝ դասավորելով դրանք այբբենական կարգով:

բ) Կազմեք էլեկտրոնային բառացանկ և ներկայացրեք առցանց ուսուցման հարթակում՝ ըստ ձեր մասնագիտական բառապաշարի.

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա
4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

2.

ա) Հ. Խ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարանից» (Ե., 1973) դուրս գրեք առնվազն յոթ այնպիսի բառեր, որոնք ունեն իրենց հոմանիշը և հականիշը:

բ) Կազմեք այդ բառերի հոմանշային և հականշային զույգերը՝ համակարգչային Microsoft Power Point կամ Google ներկայացման միջոցով (մինչև 7 սահիկ) ցույց տալով առցանց ուսուցման հարթակում (ըստ ձեր մասնագիտական բառապաշարի).

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա
4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

3.

ա) Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարան» (Ե., 2002) աշխատությունից իմաստային բացատրություններով հանդերձ դո՛ւրս գրեք տասնական պարզ և բաղադրյալ բառեր՝ ըստ ձեր մասնագիտական բառապաշարի.

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա
4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

բ) Որոշե՛ք բաղադրյալ բառերի տեսակը (ածանցավոր, բարդ և բարդ ածանցավոր):

4.

ա) Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» (Ե., 1976) իմաստային բացատրություններով հանդերձ դո՛ւրս գրեք յոթական այնպիսի բառեր, որոնք ունեն ոճական հետևյալ նշումները՝ ***բրբ., խսկց., գրք.****:*

բ) Պահպանելով այբբենական կարգը՝ կազմեք նրանց էլեկտրոնային բառացանկը: Վերջինս ներկայացրեք առցանց ուսուցման հարթակում՝ ըստ մասնագիտացումների.

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա
4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

5.

ա) Օգտվելով երկլեզվյան կամ բազմալեզվյան տերմինաբանական բառարաններից՝ իրենց թարգմանություններով հանդերձ դուրս գրեք մինչև երեսուն բառ:

բ) Պահպանելով այբբենական կարգը՝ կազմեք բառացանկ և ներկայացրեք այն՝ ըստ ձեր մասնագիտական բնագավառի տերմինային բառապաշարի.

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա
4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

6.

ա) Օգտվելով ներքոհիշյալ բառարաններից՝ համակարգչային Microsoft Power Point կամ Google ներկայացման միջոցով

(մինչև 10 սահիկ) առցանց ուսուցման հարթակում ցույց տվեք բազմիմաստ տերմիններ՝ ըստ ձեր մասնագիտական ոլորտների.

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա
4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

բ) Բազմիմաստ տերմինները դասակարգեք նաև ըստ մասնագիտական տարբեր բնագավառներում հանդես գալու ներունակության:

Բառարաններ

1. ***Աղայան Է. Բ.,*** Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:
2. ***Բարսեղյան Հ. Խ.,*** Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., «Լույս» հրատ., 1973:
3. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969-1980:
4. www.nayiri.com (էլեկտրոնային բառարանների գրադարան):

7. *Օգտվելով դարձվածաբանական բառարաններից՝ կազմեք ըստ գործածության բնագավառների առանձնացվող դարձվածքների էլեկտրոնային բառարան՝ առցանց ուսուցման հարթակում ներկայացնելով ըստ մասնագիտացումների.*

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա
4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Արտահայտիչ ընթերցել հետևյալ հատվածները:

ա) Դուրս գրել ***մենիմաստ*** *և* ***բազմիմաստ*** *բառերը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով ժամանակակից հայերենի բացատրական բառարաններից:*

բ) Բազմիմաստ բառերը բացատրել ըստ տվյալ կիրառության՝ նշելով բոլոր իմաստները:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

1. Պատմություն

Բագրատունյաց ժամանակաշրջանում սկսում են առաջանալ ու կազմավորվել վանքային համալիրները՝ եկեղեցական ու աշխարհիկ շենքերով, հիանալիորեն ներդաշնակված միմյանց ու բնության հետ: Բացի պաշտամունքային շենքերից, կառուցվել են գավիթներ, սեղանատներ, գրատներ, բնակելի շենքեր, դամբարաններ, զանգակատներ, տնտեսական բազմազան կառույցներ: Վանական համալիրները կազմավորվել են սրբավայրերի տեղում (Սևան, Գեղարդ), վաղ միջնադարյան հուշարձանների շուրջ (Հովհանավանք, Հառիճ, Շողագավանք, Դպրեվանք), ինչպես և միանգամայն նոր վայրերում (Սաղմոսավանք): Համալիրները սովորաբար տեղադրվել են դժվա-

ռամատչելի տեղերում կամ պաշտպանված են եղել ոչ հեռու տեղավորված հզոր ամրոցներով (ՎԱ, 147):

2. Հասարակագիտություն

Մարդկության բնապահպանական, հասարակական և այլ հիմնահարցերի լուծման համար կենդանի բարոյագիտությունն առաջարկում է արմատական փոփոխություններ՝ կյանքի բարոյագիտության և մարդկանց միջև հարաբերությունների բարոյականության բարձրացում: Ոչ սովորական լուծումներից մեկը պատկերացվում է գիտության և կրոնի առավելությունների փոխներթափանցման ուղին. մասնավորապես դարձնել գիտությունն ավելի բարոյական, իսկ կրոնը՝ ավելի գիտական: Ավանդական միջոցներն ու եղանակներն ի վիճակի չեն դուրս բերելու մարդկությունը բարոյական և կրոնական ճգնաժամերից: Համաձայն կենդանի բարոյագիտության՝ մարդկության զարգացման արդի փուլի հիմնական սկզբունքները պիտի լինեն հավասարությունը, համաձայնությունը, համագործակցությունը, միավորումը, բարեկամությունը և համընդհանուր բարեկեցությունը (ԳԽ, 213-214):

Մենիմաստ բառեր	**Բազմիմաստ բառեր**	
	Բառարանային իմաստներ	*Իմաստային իրացում տվյալ խոսքաշարում*
Նմուշ՝ *վանքային*– վանքին վերաբերող՝ պատկանող. վանքի:	Նմուշ՝ *հզոր – 1.* ֆիզիկական մեծ ուժ ունեցող, զորեղ, *2.* ռազմական մեծ ուժ ունեցող, *3.* սաստիկ, ուժգին, *4.* ամուր, դիմացկուն, անմատչելի, *5.* մեծ՝ վիթխարի և ուժեղ, *6.* արտադրական մեծ կարողություն ունեցող, *7.* մեծ հզորություն ունեցող, *8.* մեծ և անսահմանափակ իշխանություն ունեցող, *9.* անընկճելի, աննկուն:	Նմուշ՝ *4.* Համալիրները սովորաբար տեղադրվել են դժվարամատչելի տեղերում կամ պաշտպանված են եղել ոչ հեռու տեղավորված *հզոր* ամրոցներով (ՎԱ, 147):

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

1. Կուլտուրա

Թանգարանային առարկայի, հատկապես ոչ նյութական ժառանգության տարրերի հավաքման, հաշվառման, հետազոտության արդյունքում ստացված տեղեկատվությունն արձանագրվում է դաշտային օրագրերում, տարբեր մատյաններում, քարտարաններում, լուսանկարներում, տեսաժապավենների, թվային կրիչների վրա: Այդ նոր կրիչները, որոնք թանգարանային տեղեկատվական ենթահամակարգերն են, առարկայի տեքստային բովանդակության պահպանման և արդյունավետ

օգտագործման նպատակով են ստեղծվում: Դրանք այն փաստաթղթերն են, որոնց միջոցով արձանագրվում են առարկայի արժեքը, նշանակությունը, տեղեկատվական դաշտը և այլն (ԱՊ, 80-81):

2. Գեղարվեստական կրթություն

Վարդգես Սուրենյանցի «Սալոմեն» (1907) առանձնանում է կերպարի ինքնատիպ մեկնաբանությամբ: Երիտասարդ գեղեցկուհին կանգնած է միայնակ և հանգիստ: Մեր առջև իր բաղձանքին հասած, սակայն այժմ միայն ունայնության զգացումով համակված կին է: Հայ արվեստում «Սալոմեն» միանգամայն նոր խոսք էր ինչպես թեմատիկ, այնպես էլ ոճական և հորինվածքային մտահղացմամբ: ....Հակադրելով զարդանախշային հագեցվածությունը ողորկ մակերեսին՝ նկարիչն ակներև խիզախություն է ցուցաբերում, սակայն հենց նման գեղանկարչական լուծման շնորհիվ է, որ գլխավոր կերպարը գտնվում է ճիշտ համադրության մեջ ճարտարապետական միջավայրի հետ (ՄՄ, 224):

Աշուղական երգարվեստի կարևոր առանձնահատկություններից մեկն ինքնատիպ տաղաչափությունն է, որը, ժամանակի ընթացքում զարգանալով և կատարելագործվելով, մեզ է հասել երգային գանձերի բազմատեսակ դրսևորումներով: Գ. Լևոնյանն իր աշխատություններում հատուկ նշել է հայ աշուղական տաղաչափական արվեստի զարգացման բարձր աստիճանը և ընդգծել դրա ուսումնասիրության անհրաժեշտությունը: Սակայն տևական ընթացքում մշակված երգային տեսակների, բանաստեղծական ձևերի, կանոնների ու տեխնիկական հնարքների տիրապետումը, որն աշուղի արվեստում կատարելության չա-

փանիշ է համարվում, ժամանակի ընթացքում կորցնում է իր կարևորությունը՝ զգալի չափով տեղի տալով հորինման սկզբունքների առավել ազատ կիրառությանը, ինչի հետևանքով էլ XX դարի աշուղական արվեստում նկատելի են դառնում նոր ժամանակներին բնորոշ բանաստեղծական ձևերի օգտագործումն ու դրա հետ մեկտեղ ժողովրդական երգերին ավելի մոտ սեփական եղանակների ինքնուրույն հորինումը (ՀԱ, 105):

Մենիմաստ բառեր	**Բազմիմաստ բառեր**	
	Բառարանային իմաստներ	*Իմաստային իրացում տվյալ խոսքաշարում*
Նմուշ՝ *աշուղ* – գուսան:	Նմուշ՝ *կատարելություն – 1.* անթերիություն, *2.* զարգացման բարձր աստիճանի վրա գտնվելը, *3.* բոլոր բարեմասնություններով օժտված լինելը, *4.* (ինց.) չափահասություն:	Նմուշ՝ *2.* Սակայն տևական ընթացքում մշակված երգային տեսակների, բանաստեղծական ձևերի, կանոնների ու տեխնիկական հնարքների տիրապետումը, որն աշուղի արվեստում *կատարելության* չափանիշ է համարվում, ժամանակի ընթացքում կորցնում է իր կարևորությունը՝ զգալի չափով տեղի տալով հորինման սկզբունքների առավել ազատ կիրառությանը (ՀԱ, 105):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

1. Կրթության հոգեբանություն

Մարդու կյանքն անընդհատ ենթարկվում է տարբեր արտակարգ ազդեցությունների, որոնց նկատմամբ մարդը դեռ համարժեք պաշտպանական համակարգ չի ձևավորել: Այդ երևույթը պետք է համարել օրինաչափ, քանի որ մարդն ի սկզբանե չի կարող ունենալ արդյունավետ պաշտպանական համակարգ: Այն ձևավորվում է կյանքի ընթացքում և միշտ չէ, որ հասնում է կատարելության: ....Զարգացման երկարատև ընթացքում հոգեկանի տարբերակման հետևանքով առաջացած Ես-ը իր հետ բերում է հիվանդության անհրաժեշտություն: Մարդը չի կարող լինել գիտակից և լիարժեք առողջ: Երևի թե դա այն տուրքն է, որը մենք վճարում ենք գիտակցություն ձեռք բերելու դիմաց (ՌԱ, 43):

2. Սոցիոլոգիա

Քանակական («կոշտ») վերլուծությունն անհատին ներկայացնում է որպես սոցիալական տիպի ներկայացուցիչ: Իսկ եթե կամենում ենք ըմբռնել մարդու սոցիալական աշխարհը, ապա պետք է հասկանանք, թե նա ի՛նչ իմաստ է դնում այս կամ այն դատողության կամ գործողության մեջ: Դրանից բացի հարկ է սոցիոլոգիական տերմիններով մեկնաբանել մարդու այն արարքների իմաստը, որն ինքն էլ կարող է համարժեքորեն չգիտակցել: Այն, ինչը կատարում է որակական սոցիոլոգիան:

....Ի տարբերություն քանակականի՝ որակական սոցիոլոգիան (ասում են նաև մարդասիրական) շեշտը դնում է անհա-

տական կամ խմբային կյանքի եզակիության, առանձնակի սոցիալական փորձի, հատուկ ապրումների և տառապանքների վրա (ԷԿ, 182):

Մենիմաստ բառեր	**Բազմիմաստ բառեր**	
	Բառարանային իմաստներ	*Իմաստային իրացում տվյալ խոսքաշարում*
Նմուշ՝ *սոցիոլոգիա* – գիտություն հասարակության զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին:	Նմուշ՝ *անհատ* – *1.* յուրաքանչյուրը, առանձին՝ եզակի մարդը որպես հասարակության անդամ, *2.* առանձնյակ (ինդիվիդ), *3.* կերպար, *4.* եզակի, առանձին, մասնակի:	Նմուշ՝ *1.* Քանակական («կոշտ») վերլուծությունն *անհատին* ներկայացնում է որպես սոցիալական տիպի ներկայացուցիչ (ԷԿ, 182):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

1. Կենսաբանություն

Մաշկային պատկերներն այնքան առանձնահատուկ և անկրկնելի են, որքան մարդու ԴՆԹ-ն: Արդեն մեկ հարյուրամյակ է, որ մատնահետքերն ուսումնասիրվում են հանցագործներին բացահայտելու համար: Դերմատոգլիֆիկայի հիմնադիրն է անգլիացի Ֆրենսիս Գալտոնը (Չարզ Դարվինի հորեղբորորդին), որի մեթոդը հիմնված էր մատնահետքերի առանձնահատկությունների վրա: Ի տարբերություն ձեռքի

գծերի՝ մատնահետքերը չեն փոխվում:

….Ըստ որոշ ուսումնասիրությունների՝ մատնանախշերն առաջանում են պտղի երրորդ-հինգերորդ ամիսների ընթացքում և մնում են անփոփոխ ողջ կյանքի ընթացքում (ԳՋ, ԱԿ, 43):

2. Քիմիա

ՀՀ տարածքի ընդերքում ոսկին ի հայտ է գալիս տարբեր ձևերով: Այն բազմամետաղների, պղնձի և մոլիբդենի հետ առկա է գունավոր մետաղների համալիր հանքավայրերում: Սակայն նրա հիմնական պաշարները գտնվում են զուտ ոսկու հանքավայրերում: Այդպիսի հանքավայրերը հիմնականում գտնվում են Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի և Լոռու մարզերի տարածքներում (ԱԽ, 182-183):

3. Աշխարհագրություն

ՀՀ տարածքում միլիոնավոր տարիների ընթացքում առաջացել են ծալքաբեկորներ, հրաբխային լեռնաշղթաներ, լեռնազանգվածներ, սարահարթեր, միջլեռնային գոգավորություններ: ….Հանրապետության համար առանձնահատուկ դեր ունեն Արարատյան առավել ընդարձակ հարթավայրը (կամ Միջինարաքսյան գոգավորությունը), որը կիսանապատային, մելիորացված, կուլտուրականացված տարածք է՝ այգեգործության, պտղաբուծության, բանջարաբուծության ուղղվածությամբ, Սևանի գոգավորությունը, որը սևահողային լեռնատափաստան է, և Փամբակի, Դեբեդի, Աղստևի ընդարձակ միջլեռնային գոգավորությունները (ԱԽ, 179):

Մենիմաստ բառեր	**Բազմիմաստ բառեր**	
Նմուշ՝ *մատնահետք* – մատների թողած հետքը:	*Բառարանային իմաստներ*	*Իմաստային իրացում տվյալ խոսքաշարում*
	Նմուշ՝ *մաշկային –1.* մաշկին հատուկ, մաշկի, *2.* մաշկից բաղկացած՝ կազմված:	Նմուշ՝ *1. Մաշկային* պատկերներն այնքան առանձնահատուկ և անկրկնելի են, որքան մարդու ԴՆԹ-ն (ԳՋ, ԱԿ, 43):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

1. Մաթեմատիկա

Սահմանում 1: Անկախ փոփոխականի, որոնելի ֆունկցիայի և նրա ածանցյալների միջև առնչությունն անվանում են դիֆերենցիալ հավասարում:

Սահմանում 2: Եթե անհայտ ֆունկցիան կախված է մեկ անկախ փոփոխականից, ապա նրա ածանցյալները սովորական են: Այդ հավասարումն էլ կոչվում է սովորական դիֆերենցիալ հավասարում: Եթե անհայտ ֆունկցիան կախված է մի քանի անկախ փոփոխականներից, ապա նրա ածանցյալները մասնակի են, և հավասարումը կոչվում է մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարում (ԱՂ, 3):

2. Ֆիզիկա

Այսօրվա կյանքում մեզ հանդիպող մարմինները թվում են հոծ, այնինչ ժամանակակից գիտությանը հավաստիորեն հայտնի է, որ ցանկացած նյութ ունի ընդհատ կառուցվածք. բաղկացած է փոքրագույն մասնիկներից՝ ատոմներից և մոլեկուլներից: .... Մոլեկուլ հասկացության հեղինակը համարվում է ռուս գիտնական Լոմոնոսովը: Ըստ նրա՝ մոլեկուլը նյութի այն փոքրագույն կայուն մասնիկն է, որը պահպանում է նրա հիմնական քիմիական հատկությունները: Այս սահմանումն արդիական է նույնիսկ մեր օրերում (ՎԲ, 36-37):

3. Ինֆորմատիկա

Զանգվածը համակարգչի հիշողության մեջ միևնույն տիպի տվյալների հավաքածու է: Տվյալների յուրաքանչյուր միավոր անվանում են զանգվածի էլեմենտ: Զանգվածի հայտարարման համար անհրաժեշտ է նշել նրա տիպը, անունը և չափը:

....Զանգվածներին կարելի է վերագրել կամայական անուններ, սակայն դրանք պետք է տարբերվեն այլ զանգվածների, փոփոխականների կամ հաստատունների անուններից, ինչպես նաև չպետք է լինեն պահեստավորված բառեր:

Զանգվածի էլեմենտների հասցեավորումը որոշվում է 1-ին էլեմենտի հասցեի նկատմամբ, որը համարվում է զրոյական (ԱՆ, 35):

Մենիմաստ բառեր	**Բազմիմաստ բառեր**	
Նմուշ՝ *մոլեկուլ* – նյութի ամենափոքր մասնիկ, որ օժտված է տվյալ նյութի բոլոր հիմնական հատկություններով:	*Բառարանային իմաստներ*	*Իմաստային իրացում տվյալ խոսքաշարում*
	Նմուշ՝ *մասնիկ* – *1.* փոքր մաս, փոքրիկ կտոր, չնչին քանակություն, *2.* օժանդակ բառամաս, որ առանձին չի գործածվում, այլ կցվում է ուրիշ բառի՝ նրան որոշ նշանակություն կամ իմաստ տալու համար:	Նմուշ՝ *1.* Ըստ նրա՝ մոլեկուլը նյութի այն փոքրագույն կայուն *մասնիկն* է, որը պահպանում է նրա հիմնական քիմիական հատկությունները: Այս սահմանումն արդիական է նույնիսկ մեր օրերում (ՎԲ, 37):

2.

ա) Արտահայտիչ ընթերցել հետևյալ տեքստային հատվածները:

բ) Ընտրել հինգ բառ՝ կազմելով յուրաքանչյուրի ***հոմանշային*** *և* ***հականշային զույգերը*** *(****շարքերը****. հականշություն հոմանշային զույգերի կամ շարքերի միջև):*

Ա. Պատմություն և հասարակագիտություն

1. Պատմություն

Հայ առևտրական կապիտալի զարգացումը Հայաստանում ու Անդրկովկասում, ինչպես և գաղթավայրերում հիմք էր դառնում ոչ միայն երկրի տնտեսական զարթոնքին ու վերելքին,

այլև նպաստում էր նրա հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի վերակենդանացմանը: Ազատագրական շարժումների արշալույսին հայ առաջավոր աշխարհիկ ու հոգևոր գործիչները քաջ գիտակցել են պատմագրության դերն ու նշանակությունը ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման, լուսավորության տարածման ու արմատավորման և սերունդներին հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում: Հայաստանի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի վերելքն ու զարգացումը նախապատրաստել են նաև հայ ազատագրական շարժումների զարթոնքը, որը և բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հետագա ճակատագրում (ԱԳ, 44):

2. Հասարակագիտություն

Միացյալ Նահանգները գիտի, որ իսլամիստները կարող են արդյունավետ կերպով օգտվել ժողովրդավարական գործիքներից ու հնարավորություններից, որպեսզի հաստատեն կրոնապետություն:

Այսպիսով, երկու տարբերակներն էլ, այսինքն՝ թե՛ ներկայիս խոցելի կայունության պահպանումը, թե՛ ժողովրադավարության հաստատումը կարող են վտանգավոր ու անկանխատեսելի լինել: Այստեղ առաջ է քաշվում երրորդ վարկածը՝ տարածաշրջանի աստիճանական ժողովրդավարացումը նույն երկրների վարչակարգերի օգնությամբ: Երրորդ վարկածը կարող է ապահովել և՛ ամերիկյան շահերը, և՛ տարածաշրջանային վարչակարգերի ակնկալիքները՝ միաժամանակ բավարարելով Եվրոպայի պահանջները (ՌԷ, 175):

Նմուշ՝ *զարգացում-առաջադիմում* (հոմանիշ բառեր)

զարգացում-հետամնացություն (հականիշ բառեր)

զարգացում, առաջադիմում, առաջադիմություն – հետամնացություն, հետագնացություն, հետընթացություն (հնց.), *եզրայլ* (հականշություն հոմանշային շարքերի միջև):

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

1. Կուլտուրա

Ինչպես հայտնի է, թատրոնը ծագել է հրապարակային հանդիսությունից, ծեսից, իսկ հրապարակային հանդիսությունը ներառել է խաղարկային արվեստների ողջ ներկապնակը՝ բանահյուսություն և երաժշտություն, կրկես ու պարարվեստ՝ ձևավորելով տարբեր արվեստների միահյուսում, տարբեր խաղաձևերի համադրում: Թատրոնի՝ նման համադրական՝ սինկրետիկ (հուն.՝ «միացում, միակցում») տեսակը ժամանակի ընթացքում տրոհվեց, և խաղարկային արվեստի ամեն տեսակ գտավ իր տեղը՝ ձեռք բերելով իր ուրույն գեղարվեստական լեզուն: Իր գեղագիտությունը ձեռք բերեց նաև դրամատիկական թատրոն կոչվածը, այսպես ասած՝ սինթետիկ թատրոնը (ԱԷ, 29):

2. Գեղարվեստական կրթություն

Ուշագրավ ու ինքնատիպ է մեծ քանդակագործ Ս. Դ. Մերկուրովի կյանքը: Այն հարուստ նյութ է տալիս ոչ միայն

հայ ազգային մշակույթի մեջ նրա անձնական անգնահատելի ներդրման, այլ նաև այն միջավայրի մասին, որի ազդեցությունն իր ամբողջ ստեղծագործական կյանքում կրել է այդ տաղանդավոր գյումրեցին: Գյումրին միշտ եղել է արհեստների ու արվեստների քաղաք: Պոեզիան, երգն ու նվագը, թատրոնն ու նկարչությունը քաղաքի կյանքի անբաժան մասն էին: Իսահակյանի բանաստեղծությունները, Շերամի երգերը, Արմեն և Նիկողայոս Տիգրանյանների երաժշտությունը հնչում էին ամենուր և, անշուշտ, արհեստավորական քաղաքն ինքնատիպ կոլորիտով ու լեգենդներով չէր կարող իր դրոշմը չթողնել քանդակագործի անհատականության ձևավորման վրա: Դեռ մանուկ հասակից ազգային հարուստ աղբյուրներն էլ պետք է սնեին նկարչի ստեղծագործական ընկալումը (ԼԱ, 166):

Հայ գրերի ստեղծումն անգնահատելի դեր խաղաց հայ ժողովրդի հոգևոր և մտավոր զարգացման գործում. ամուր հիմք ստեղծեց մշակութային կյանքի վերելքի համար: Դրանից հետո լայն թափ առավ թարգմանչությունը: Առաջիններից մեկը հայերեն թարգմանվեց Աստվածաշունչը, որը նպաստեց հայկական ինքնատիպ քրիստոնեական գրականության առաջացմանը: Հայ գրերի գյուտից հետո բացվեցին բազմաթիվ հայկական դպրոցներ (ԳՄ, 208):

Նմուշ՝ *միակցում-համակցում* (հոմանիշ բառեր)

միակցում-փրոհում (հականիշ բառեր)

միակցում, միակցություն, միավորում, կապակցություն, կապակցում, համակցում, համակցություն, շաղկապում – փրոհում, փրոհություն, անջատում, բաժանում, զատում, առանձնացում, տարանջատում (հականշություն հոմանշային շարքերի միջև):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

1. Կրթության հոգեբանություն

Կառավարչի գործունեությունում էական նշանակություն ունի նրա բարձր աշխատունակությունը՝ երկար ժամանակով աշխատանքը բարձր արդյունավետությամբ կատարելու ընդունակությունը: Այս հատկությունը պահանջում է ֆիզիոլոգիական և հոգեբանական ցուցանիշների բարձր արտահայտվածություն: Որպես կամային հատկանիշ կարևոր է անձի կայունությունը, որը դրսևորվում է գիտակցաբար դրված նպատակին հասնելու համառ ձգտման մեջ: Այս հատկությունը կարելի է զարգացնել գործունեության ընթացքում, որն արտահայտվում է ոչ միայն աշխատանքային գործընթացում, այլ նաև նրա կենսագործունեության մեջ (ԱԼ, 259):

2. Սոցիոլոգիա

«Թշնամի» հասկացությունը թույլ է տալիս անձնավորել չարը, ինչպես «բարեկամը»՝ բարին: «Թշնամի-բարեկամ» մասնավոր տարբաժանումից կարելի է անցնել ավելի ընդհանուր՝ «յուրային-օտար» տարբաժանմանը: Փիլիսոփայական այս ընդդիմության գոյությունն ընդունելով հանդերձ՝ մարդն այնուամենայնիվ չի կարողանում տեսական մակարդակում սահմանել, թե որն է յուրայինը, և որը՝ օտարը: Իսկ ամենօրյա կյանքում մենք սեփականը, յուրայինը տարբերում ենք օտարից, բարին՝ չարից, երբեմն նույնիսկ բոլորովին անսպասելի կերպով, ինչպես, օրինակ, այն դեպքում, երբ յուրային կարող է դառնալ մի ինչ-որ պատահական մարդ, իսկ օտար՝ հարազատ հայրը (ՂԱ, 24):

Նմուշ՝ *գիտակցաբար-դատողաբար* (հոմանիշ բառեր)

գիտակցաբար-անգիտակցորեն (հականիշ բառեր)

գիտակցաբար, գիտակցապես, գիտակցականորեն, բանականորեն, բանականաբար, բանականապես, տրամաբանորեն, տրամաբանաբար, տրամաբանապես, դատողաբար, խելացի, խելացիաբար, խելացիորեն – անգիտակցորեն, անգիտակցաբար, անգիտակցապես, բնազդաբար, բնազդորեն, ինքնաբերաբար, ինքնաբերապես, ինքնաբերորեն, մեքենաբար, մեքենայնաբար, մեքենայնապես, մեքենայնորեն, ենթագիտակցաբար, ինքնին (հականշություն հոմանշային շարքերի միջև):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

1. Կենսաբանություն

Կանանց օրգանիզմն ունի մենահատուկ առանձնահատկություններ շրջակա միջավայրի գործոնների ազդեցության նկատմամբ: Կանայք հիվանդանում են ոչ միայն այն հիվանդություններով, որոնցով տղամարդիկ են հիվանդանում, այլև մենահատուկ հիվանդություններով: Դա կապված է նրանց սեռի հետ: Կանանց օրգանիզմը բնութագրվում է ճարպի ավելի մեծ պարունակությամբ, որում կարող են կուտակվել նշանակալից քանակով թունավոր, հիդրոֆոբ միացություններ (ԿԳ, ԾԱ, 104):

2. Քիմիա

«Կարգավորում» տերմինը վերաբերում է ազդեցությունների լայն շրջանակին, օրինակ՝ խթանում, արգելակում, այս կամ այն ախտանիշների զարգացում և այլն: Կենսաբանական ակտիվության ծայրահեղ դրսևորում է բիոցիդ ազդեցությունը: Լատիներենից թարգմանությամբ *բիոցիդ* նշանակում է «կյանք սպանող»: Բիոցիդները քիմիական նյութեր են, որոնք ստեղծ-ված են որպես պայքարի միջոց վնասատու օրգանիզմների դեմ (ՆԴ, 5):

3. Աշխարհագրություն

Մթնոլորտային ճնշման փոփոխման պատճառը, ջերմաս-տիճանի փոփոխման հետևանքով պայմանավորված, օդի տեղաշարժն է մի վայրից մյուսը: Այդ տեղափոխությունները՝ արտահոսքը մի վայրից և ներհոսքը մյուս վայրը, կապված են ստորադիր մակերևույթից օդի անհավասարաչափ տաքացման հետ: Ընդունենք, որ երկրի մակերևույթի որոշ տարածք հարևան տարածքի համեմատ ջերմություն ավելի շատ է ստանում: Հասկանալի է, որ տարբեր չափով կտաքանա դրանց վրա գտնվող օդը: Ուժեղ տաքացող տարածքում կառաջանա օդի մասնիկների վերընթաց շարժում, և նրա վերին շերտում մասնիկների կուտակումից ճնշումը կբարձրանա, իսկ հա-մեմատաբար սառը մակերևույթի վրա գտնվող օդում՝ նույն բարձրության վրա, ճնշումը կլինի ցածր: Այդպիսի պայմաններ-ում տեղի կունենա օդի արտահոսք տաք օդի վերին շերտերից դեպի հարևան սառը օդի վերին շերտերը (ՎՊ, 29):

Նմուշ՝ *հիվանդություն-ախտ* (հոմանիշ բառեր)

հիվանդություն-առողջություն (հականիշ բառեր)

հիվանդություն, տկարություն, անառողջություն, ախտ, ցավ, ախտաժետություն (հզվդ.), *խոթություն* (հնց.), *հիվանդ-կախություն* (ժող.) – *առողջություն*, *առողջանդամություն, ողջություն, ողջանդամություն* (հականշություն հոմանշային շարքերի միջև):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

1. Մաթեմատիկա

Բնական է սպասել, որ կոր մակերևույթի մակերեսը սահմանվի որպես այդ մակերևույթին ներգծած բազմանիստների մակերեսների սահման, երբ բազմանիստների բոլոր նիստերի տրամագծերը ձգտում են զրոյի: Սակայն գերմանացի մաթեմատիկոս Շվարցը նկատեց, որ այնպիսի պարզ մակերևույթին, ինչպիսին շրջանային գլանն է, կարելի է ներգծել բազմանիստ, որի մակերեսը կարող է մեծ լինել ցանկացած դրական թվից (ՎՕ, 162):

2. Ֆիզիկա

Հայտնի է, որ էլեկտրամագնիսական ալիքների երկարությունները փոփոխվում են չափազանց լայն տիրույթում: Լույսի էլեկտրամագնիսական բնույթի պարզաբանումը թույլ է տվել բոլոր տիպի էլեկտրամագնիսական ճառագայթները դասակարգել և միավորել էլեկտրամագնիսական ալիքներ

սանդղակում: Էլեկտրամագնիսական ալիքներն ընդունված է բաժանել ռադիոալիքների, միկրոալիքների, ինֆրակարմիր ճառագայթների, տեսանելի լույսի, ուլտրամանուշակագույն ճառագայթների, ռենտգենյան ճառագայթների և գամմա- ճառագայթների: Էլեկտրամագնիսական ալիքների կլանման, անդրադարձման և այլ հատկություններն էապես կախված են դրանց ալիքի երկարությունից (ՀՍԷ, 3-4):

3. Ինֆորմատիկա

Օպերացիոն համակարգով աշխատանքում ծրագրավորողը սովորաբար առաջին հերթին կարիք է ունենում առնչվելու ֆայլային համակարգին և կոնսոլային մուտքի՝ ելքի գործողություններին: Ֆայլերը հիմնարար դեր են խաղում տվյալների երկարատև պահպանման և կառավարման հարցում, ինչպես նաև ապահովում են միջծրագրային համագործակցության պարզագույն ձևը: Այդ պատճառով էլ, ինչպես բոլոր օպերացիոն համակարգերում, այնպես էլ «Windows»–ում ֆայլային համակարգը կենտրոնական բաղադրիչներից է, իսկ ֆայլը՝ հիմնական հասկացություններից մեկը (ՍԱ, 17):

Նմուշ՝ *միավորել-մեկտեղել* (հոմանիշ բառեր)

միավորել-բաժանել (հականիշ բառեր)

միավորել, միացնել, միաձուլել, միահյուսել, միակցել, համակցել, առկցել, զոդել, միատեղել, մեկտեղել, միատարրել, զուգամիավորել – բաժանել, անջատել, առանձնացնել, երկատել, զատել, ջոկել (ժող.), *դեն դնել* (հականշություն հոմանշային շարքերի միջև):

3.

ա) Ներկայացնել հետևյալ հատվածներում ընդգծված բառերի (այլև բառաձևերի) ***համանունները՝*** *կազմելով այդօրինակ զույգեր (շարքեր)՝ իրենց իմաստներով հանդերձ:*

բ) Որպես նմուշ տրված համանունական զույգի (շարքի) անդամներով կազմել մեկական նախադասություն (համանունների կամ նրանցից մեկի բազմիմաստությամբ պայմանավորված՝ նշել իմաստային իրացումը տվյալ կիրառությամբ):

Ա. Պատմություն և հասարակագիտություն

1. Պատմություն

Ըստ Կոմագենեի Անտիոքոս I թագավորի սրբավայրի սալերի հաջորդականության՝ մ. թ. ա. IV դարի վերջին տասնամյակներին թագավորած Օրոնտես-Երվանդից (**սալին**՝ Արոանդես) հետո հիշատակված է **մի** թագավոր, որի անունը կիսով չափ ջնջված է. պահպանվել է միայն -անես-ը: ….Արտավանի և Արշավիրի Երվանդունիներ լինելու **մասին** է խոսում նաև նրանցից երկրորդի, այսինքն՝ Արշավիրի՝ Երվանդ Վերջինի **պապը, իսկ** Արտավանի՝ պապի գահակից ավագ եղբայրը լինելու հանգամանքը (ԼՊ, 41):

2. Հասարակագիտություն

Քաղաքակրթությունը և կործանարարությունը լեզվի նույն գործունեության ոլորտում են, հանդես են գալիս լեզվի հասա-

րական նույն դերի մեջ: Ուստի լեզուն եղել է մարդկային հասարակության առաջընթացի կարևոր ցուցիչը. լեզվի միջոցով, իրոք, կարելի է մեկնաբանել մարդկային հասարակության պատմությունը, գաղափար ունենալ նրա մշակույթի, հոգեկան կերտվածքի, սովորույթների **մասին** և այլն: Նույնը վերաբերում է **անհատի՝** հասարակության անդամի լեզվին, որքանով որ ճանաչողության առումով ապացուցված են անհատի և հասարակության լեզվական փոխադարձ կապը և պայմանավորումը:

....Ինչպիսին որ տվյալ հասարակության գիտակցությունն **է**, այնպիսին է նաև նրա լեզուն. **դա** սովորական է և հիմնավորվում է հին գրավոր մշակույթ ունեցող և համապատասխան զարգացման հասած լեզուների օրինակով:

....Յուրաքանչյուր առանձին լեզու գիտական ուսումնասիրության առարկա է այնքանով, որքանով ներկայացնում է յուրահատուկ **գծեր,** որոնք բնականաբար հաշվի են առնվում մյուս լեզուների նմանատիպ երևույթների **հետ** համեմատելիս (ՎՀԼ, 24-25):

Նմուշ՝ *պապ*[1] – *1. մեծ հայր, հոր հայր,* 2. (հոգն. պապեր) նախնիներ, 3. (գվռ.) հայր

պապ[2] – 1. հռոմեական կաթոլիկ եկեղեցու գերագույն առաջնորդը և նրա տիտղոսը, 2. (հնց.) հոգևոր հայր, քահանայապետ:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

1. Կուլտուրա

Հասցեատերը (մեր դեպքում՝ հեռուստադիտողը), անկախ հաղորդագրության ստեղծմանը մասնակցած համահեղինակների թվից, որպես հեղինակ ընկալում է մեկ **անձի:**

....Ակնհայտ **է,** որ **պատկերի** բաղադրիչների տարանջատումը և վերամիավորումը որպես մեկ ամբողջություն կատարվում է մեզ համար աննկատելիորեն, և որ առավել էական է, մեր գիտակցությունից անկախ: **Դա** հնարավոր է հաստատել պարզ դիտարկման միջոցով:

....Հեռուստատեսային հաղորդագրությունը, նախատեսված լինելով միաժամանակ երկու զգայարանով ընկալման **համար,** կոդավորման տարբեր միջոցների կիրառման արդյունքում ստացված օրգանական ամբողջություն է կազմում, որի ազդեցությունն ամենևին չի նույնանում դրա առանձին բաղադրիչների ազդեցությունների մեխանիկական գումարին (ՎՀ, 22, 45, 49):

2. Գեղարվեստական կրթություն

Հնագիտական գրականության մեջ **ուշ** հին քարի **դարի** մշակույթի դասակարգումը տվել է Ա. Բրեյլը:

....Բրոնզեդարյան մշակույթն **իր** ծաղկումն է ապրել Էգեյան ծովի երկրներում: **....**Համաշխարհային մշակույթի պատմության մեջ խոշոր հեղաշրջում էր տառերի ստեղծումը,

որը վերացարկման **բարդ** մակարդակ է ենթադրում:

....Քաղաքակրթության բնօրրանը՝ Հին Արևելքը, իր ինքնատիպ ու անկրկնելի մշակույթով այսօր էլ հիացնում է ժամանակակից մարդուն, ստիպում մտածել այն **մասին,** թե ինչպես հազարամյակներ առաջ ստեղծված մշակույթի արժեքներն այսօր էլ սրտամոտ ու հարազատ են (ԳՄ, 81-82, 85, 91):

Վավաշոտ կնոջ այս կերպարը, որ, ի վիճակի չլինելով հասնելու իր տենչանքի սուբյեկտին, սպանել էր վերջինիս, այժմ կարծես գիտակցում էր իր **իսկ** պարտությունը: ....Շամիրամի կերպարը, կոնկրետության **հետ,** իր մեջ ճակատագրական կնոջ հավաքական կերպարի տարր է **կրում** (ՄՄ, 223):

Նմուշ՝ *ուշ*[1]– 1. (հնց.) ուշք, 2. ուշադրություն

ուշ[2] – 1. սովորական կամ պայմանավորված ժամանակից հետո, 2. անդարձ, անկանխելի, *3. որևէ ժամանակահատվածի վերջին, այն ժամանակահատվածում, երբ տվյալ ժամանակի մեծ մասն արդեն անցել է,* 4. դանդաղ՝ երկար տևող, 5. հետո:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

1. Կրթության հոգեբանություն

Եթե **դատում** ենք ըստ այնմ, որ լեզուն մարդկային գործունեության ընթացքում առաջ եկած երևույթ **է,** ապա նկատում ենք, որ այն սերտ առնչություն ունի **անհատի** հոգեկան պատկերացումների և մտավոր կարողությունների **հետ:**

....Խոսքի գործընթացը (պրոցեսը), արտահայտության մեջ, ընդամենը ֆիզիկական երևույթ է, սակայն իր խորքում այն արդյունք է հոգեկան-մտածական **բարդ** և յուրօրինակ, անկրկնելի երևույթների (գործողությունների):

....Ուսումնասիրելով անհատի (հանրության) բանավոր կամ գրավոր խոսքը՝ գաղափար ենք կազմում, պատկերացում ենք ունենում այդ նույն անհատի (հանրության) վարքի վերաբերյալ, որովհետև ինչպես որ լեզուն ունի հոգեբանական հիմքեր, այնպես էլ վարքը սնվում է **իր** լեզվաբանական հիմքերից (ՎՀԼ, 26, 54-56):

2. Սոցիոլոգիա

Մարդկային գործունեությունն ապահովող ինտելեկտն **իր** գենեզիսով և հիմնական գործառույթներից մեկով մարդկային ագրեսիայի և ապակառուցողական գործունեության գործիք **է**:

....Վաղ ժամանակներից սկսած՝ նկատելի է «մենք-նրանք» հակադրությունը, որտեղ «մենք»-ը յուրայինների **մի** ինչ-որ հանրույթ է՝ օժտված մարդկային բարձր հատկություններով ու որակներով, **իսկ** «նրանք»-ը՝ ոչ մարդ «օտարներ»:

....Մարդկության պատմության մեջ կարելի է գտնել բազում օրինակներ, երբ մարդիկ ոչնչացնում էին այլ մարդկանց միայն այն բանի **համար,** որ վերջիններս տարբերվում էին իրենցից մշակութային հարաբերություններում, **կրում** էին այլ մշակութային նորմեր, արժեքներ, կանոններ և այլն:

....Ցանկացած իրավիճակում մարդը ձգտում է արդյունավետ վարք դրսևորելուն: Իհարկե, չի բացառվում, որ իր կատարած որոշ գործողություններ նա կարող է որակել որպես ոչ ճիշտ, սխալ, **ինչը** կապված է համապատասխան գործողություններից

հետո ակնկալվող արդյունքի չարդարացվածության **կամ** կյանքի կողմնորոշիչների փոփոխման **հետ** (ՂԱ, 12, 14, 19, 23):

Նմուշ՝ *մի*[1] – արգելական հրամայականի բառ-մասնիկ

մի[2] – 1. մեկ, 2. համանման, միատեսակ, 3. միասնական, միաբանված, 4. այնպիսի, *5. ինչ-որ*

մի[3] – եվրոպական երաժշտության մեջ ութնյակի 3-րդ ձայնաստիճանը և համապատասխան ձայնանիշը:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

1. Կենսաբանություն

Սնկանման օրգանիզմները և սնկերն ընդգրկված են կորիզավոր՝ էուկարիոտ օրգանիզմների ինքնուրույն թագավորության մեջ: Հանդիպում են ամենուրեք՝ օդում, հողում, **ջրում:**

....Սնկերի բջջային թաղանթի կառուցվածքն ունի կարգաբանական նշանակություն: Բջիջը պատված է **բարդ** բաղադրություն ունեցող թաղանթով:

....Բջիջն օրգանիզմի հիմնական կառուցվածքային միավորն **է:**

....Կենդանի բջջի թաղանթի լարված **վիճակը** կոչվում է տուրգոր: Նրանով են պայմանավորված բույսերի նորմալ ֆիզիկական վիճակն ու առաձգականությունը: Տուրգորի շնորհիվ ցողունը պահպանում է **իր** ուղղաձիգ դիրքը, **կրում** իր վրա տերևների զանգվածը:

....Բջիջը պլազմոլիզի վիճակից հանելու **համար** (դեպլազ-

մոլիզ) անհրաժեշտ է այն տեղափոխել **ջրի** մեջ (ՍՆ, 24-25, 58, 62):

2. Քիմիա

Ամինաթթուների անալիզի մեթոդները հիմնականում հիմնված են նինհիդրինի **հետ** նրանց փոխազդեցության ռեակցիայի վրա, որն առաջարկել է Ռուէմանը 1911 թ.: Նինհիդրինը **կամ** տրիկետոհիդրինդենհիդրատը, փոխազդելով ամինաթթվի հետ, վերակագնվում է մինչև դիկետոօքսիհիդրինդենի, **իսկ** ամինաթթուն դեզամինացման արդյունքում միջանկյալ իմինաթթվի առաջացմամբ վերածվում է α-կետոթթվի և ամոնիակի: Կետոթթուն **իր** հերթին դեկարբոքսիլացվում է՝ առաջացնելով ալդեհիդ՝ ելային ամինաթթվի համեմատությամբ մեկ ածխածնի ատոմի պակաս պարունակությամբ (ՀՍ, ԱՄ, 3):

3. Աշխարհագրություն

Տեղագրությունը երկրի **մասին** գիտություններից մեկն **է,** որն զբաղվում է **ցամաքի** մակերևույթի երկրաչափական ուսումնասիրությամբ՝ երկրաչափական տեսակետից: Այդ ուսումնասիրությունն իրականացվում է դաշտային և գրասենյակային աշխատանքների **բարդ** զուգակցմամբ՝ հանույթով, որի արդյունքում ստեղծվում են տեղագրական քարտեզներ, հատակագծեր և պրոֆիլներ: ....Տեղագրությունը սերտորեն կապված է երկրի մասին մեկ այլ գիտության՝ գեոդեզիայի **հետ,** որը հունարենից հայերեն թարգմանությամբ նշանակում է երկրաբաշխություն: Գեոդեզիան զբաղվում է երկրի **ձևի** ու չափերի, նրա արտաքին տիեզերական ձգողականության

դաշտի ուսումնասիրությամբ, երկրի մակերևույթի առանձին **կետերի** կոորդինատների մեկ միասնական **համակարգում** որոշման մեթոդներով և այլն (ՎՄ, 3):

Նմուշ՝ *մասին*[1] – **մաս** գոյականի եզակի որոշյալ տրականը
մասին[2] – *վերաբերյալ, նկատմամբ:*

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

1. Մաթեմատիկա

Պատմականորեն վերլուծական երկրաչափությունն առաջացել է որպես երկրչափության բաժին, որի հիմնական հասկացությունները պարզագույն երկրաչափական պատկերներն են՝ **կետեր,** ուղիղներ, հարթություններ, երկրորդ **կարգի** կորեր, երկրորդ կարգի մակերևույթներ:

....Վեկտորների **հետ** որոշակի հատկություններով գործողություններ սահմանելու նպատակով ներմուծվում է **ազատ** վեկտորի հասկացությունը: Ազատ վեկտորի սահմանման **համար** կա երկու մոտեցում:

Առաջին եղանակի դեպքում, ինչպես դպրոցական գործող դասագրքում **է,** երկու վեկտոր համարվում են հավասար, եթե համապատասխանաբար նրանց սկզբնակետերն ու վերջնակետերը միացնելիս ստացվում է զուգահեռագիծ, և կամ էլ նրանք գտնվում են մի **ուղղի** վրա, ունեն հավասար երկարություններ և ուղղված են նույն կողմը (ՎՓ, ՀՕ, 5, 8-9):

2. Ֆիզիկա

Մոդելների կիրառությունը **մի** փոքր է **ավելի** խորությամբ պատկերելու բավական **բարդ** երևույթի մի որևէ կողմ՝ որոշ դեպքերում անտեսելով ոչ պակաս կարևոր մեկ այլ կողմ:

....Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որոշ դեպքերում այդ պարամետրերը տարբերվում են 10 անգամ: Մակերևույթի վրա իմպուլսային բաշխման պարամետրն ավելի փոքր **է,** քան միջուկի ներսում: Ներմիջուկային նուկլոնների շարժման էներգիայի այսպիսի տարբերությունը կարող է մակերևութային փոխազդեցությունների հաշվարկների դեպքում հանգեցնել ոչ ճիշտ արդյունքների, եթե վերցվի ուղղանկյուն պոտենցիալային **հոր** (ԱԲ, 30, 82):

Էլեկտրոնների համախումբը մետաղում Դրուդեն դիտարկել է որպես էլեկտրոնային **գազ** և հաշվարկել մետաղի որոշ պարամետրեր՝ օգտվելով գազերի կինետիկ տեսությունից:

....**Ազատ** էլեկտրոնային գազն ավելի կատարյալ՝ վիճակագրական մեթոդներով նկարագրելու **համար** անհրաժեշտ է օգտվել կինետիկ տեսության և վիճակագրական ֆիզիկայի ապարատից:

....Դրուդե-Լորենցոյի **դասական** էլեկտրոնային տեսությունը հաջողությամբ բացատրեց մետաղների մի շարք հատկություններ:

....Ինչպես **հայտնի** է, դասական տեսության արդյունքները **հավաստի** են այնպիսի պայմաններում, երբ քվանտային երևույթների դերը կարելի է անտեսել (ԱԿ, 8, 32, 43):

3. Ինֆորմատիկա

Չնայած բայթը, բառը, կրկնակի/քառակի բառը IA-32 ճարտարապետության հիմնական տիպերն են, սակայն որոշ հրամաններ **պահանջում** են տվյալների տիպերի լրացուցիչ մեկնաբանություն և թույլ են տալիս գործողություններ կատարել թվային տիպերով (նշանով և առանց նշանի **թվեր,** սահող կետով թվեր):

....Ինթել պրոցեսորներն իրական ռեժիմում օգտագործում են հիշողության կազմակերպման սեգմենտային **եղանակը** (ԱԱ, 10, 27):

Նմուշ՝ *բարդ*[1] – 1. խոտի՝ ցորենի դիզվածք, 2. մի բարդաչափ, 3. 30-40 խրձից դեզ

բարդ[2] – *1. խրթին,* 2. բաղադրյալ, 3. խճճված, 4. դժվար իրագործելի:

4.

ա) Արտահայտիչ ընթերցել հետևյալ հատվածները:

բ) Փակագծերում տրված ***հարանունական զույգերից*** *ընտրել տվյալ խոսքային միջավայրին համապատասխանող բառը:*

Ա. Պատմություն և հասարակագիտություն

1. Պատմություն

Ժողովուրդների սոցիալ-տնտեսական դրության բարելավման խնդիրը մարդկության պատմության բոլոր ժամանակահատվածներում ընկած է եղել ինչպես տարբեր երկրների պետական քաղաքականության, այնպես էլ *(քաղաքական, քաղաքային)* գործիչների, *(քաղաքական, քաղաքային)* խմբավորումների և կուսակցությունների *(ծրագրերի, ծրագրավորումների)* հիմքում:

....Առաջին. 1920 թ. դեկտեմբերի 2-1921 թ. փետրվարի 18: Հասկանալի է, որ այս շրջանը *(վերաբերում, վերաբերվում)* է Հայհեղկոմի *(գործողությանը, գործունեությանը)* խորհրդայնացումից սկսած մինչև փետրվարյան համաժողովրդական ապստամբությունը:

....Ինչպես ողջ խորհրդային, այնպես էլ ողջ խորհրդահայ գյուղն ունեցել է թերզարգացման *(բարդությունը, բարդույթը)*, բայց անկախ դրանից՝ հայ գյուղացիությունը սոցիալ-կենցաղային զարգացման առումով հասել է մի վիճակի, որը թերևս չի ունեցել իր դարավոր պատմության մեջ երբևէ: Ժխտել այս ամենը կնշանակի *(մեղանչել, մեղա գալ)* պատմական ճշմարտության դեմ. *(բավական, բավականին)* է եղել, որ հայ գյուղացին (և ոչ միայն գյուղացին) թատրոն, կինո կամ գրադարան հաճախել է միայն խորհրդային շրջանում (ԱԴ, 103, 105, 107):

2. Հասարակագիտություն

«Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները» նոր ձևավորվող *(հասկացություն, հասկացողություն)* է, գիտական գրականության մեջ *(հազվագյուտ, հազվադեպ)* է, դեռևս տրված չէ դրա սահմանումը: Այդ *(հասկացության, հասկացողության)* բովանդակության հստակեցման և սահմանման համար, բացի «ռեսուրսներից», կարևոր է նաև «աշխարհաքաղաքականի» բովանդակությունը:

....Ռազմական ռեսուրսներից աշխարհաքաղաքական նշանակություն ունեն (և կունենան նաև հետագայում) զանգվածային բնաջնջման զենքի տեսակները, որոնք մեծ դեր ունեն հատկապես ուժերի հավասարակշռության *(պաշտպանման, պահպանման)* գործում:

«Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» կատեգորիական համակարգի հստակեցումը աշխարհաքաղաքական կարևորագույն տեսական խնդիրներից է, որի *(լուծումը, լուծարումը)* հնարավորություններ կարող է ստեղծել տեսական և գործնական այլ խնդիրների *(լուծման, լուծարման)* համար (ՍՍ, 125, 129):

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

1. Կուլտուրա

8-9 տարեկան երեխաները, *(արհեստի, արվեստի)* վերաբերյալ որոշ նվազագույն տեղեկություններ ու մի քանի տեր-

միններ յուրացնելով, արդեն կարողանում են համադրել և տարրական մակարդակով վերլուծել գեղարվեստական կյանքի փաստերը:

….Ձգտելով հասկանալ շրջակա աշխարհի *(բարդույթները, բարդությունները)*՝ ուսանողները հաճախ են իրենց հուզող հարցերի պատասխանները փնտրում *(արհեստի, արվեստի)* մեջ (ԱԳ, ԱՄ, 28, 57):

Թատերայնություն *(հասկացությունը, հասկացողությունը)* ինքնակա գեղագիտական կատեգորիա չէ և չունի գիտական տերմինի արժեք: ….Ներկայացումը ժամանակային *(արհեստ, արվեստ)* է: ….Իսկ ինչ *(վերաբերում, վերաբերվում)* է բեմական գործողությունների զարգացման ժամանակին, ապա այն խիստ թանկ է, չափակշռված. սրանով է թելադրված դրամատիկական պատկերի ու իրականության *(տարբերությունը, տարբերակայ-նությունը):* Մասնավորապես երկխոսություններն ու մենա-խոսությունները, որոնք առանձնահատուկ իմաստային ծանրա-բեռնվածություն ունեն, հիմնականում հազվադեպ են իրական կյանքում, քանի որ վերջիններս, գործող անձի խոսքային (վերբալ) *(նկարագիրը, նկարագրությունը)* լինելուց բացի, հանդիսատեսին օգնում են բացահայտել թե՛ իրադարձություն-ների ու գործողությունների արտաքին կողմը և թե՛ այն, ինչ անմիջականորեն չի ցուցադրվում (ԱԷ, 23-24):

2. Գեղարվեստական կրթություն

Քաղաքային ժողովրդական երգի կարևորագույն բնորոշիչ-ներից մեկն Արևմտյան Հայաստանի տարբեր *(քաղաքական, քաղաքային)* մշակույթների ալեքսանդրապոլյան համատեղումն է, երգային ժողովրդական երաժշտությունը՝ սերտաճած

Ալեքսանդրապոլի սազանդարական *(արհեստին, արվեստին):* ....Ընդհանուր և *(ազգային, ազգայնական)* մտածողության վրա հիմնված ավանդականությամբ էլ հայ երաժշտագիտության մեջ բնորոշվում է Ալեքսանդրապոլի աշուղական-սազանդարական դպրոցի մուղամի *(արհեստը, արվեստը):*

....Նույն հոդվածում կոմպոզիտորն անդրադարձել է արևելյան մեղեդիների նաև այլ բնորոշ տարրերի նկարագրին, սակայն այստեղ մենք կարևորում ենք վերոնշյալ *(դիտումը, դիտարկումը),* որը (*վերաբերում, վերաբերվում)* է մոնոդիկ մտածողությանը: Դաշնամուրային մուղամների վերլուծությունը ցույց է տալիս, որ կոմպոզիտորը, անխաթար պահելով մուղամ-բնօրինակի *(կառուցվածքը, կառույցը)* և կերտվածքը, բազմաձայն մշակման մեջ *(պաշտպանել, պահպանել)* և ընդգծել է նաև դրանց մոնոդիկ ձայնակարգային բնորոշիչները, հատկապես օժանդակ հենակետերի ձևակառուցողական դրամատուրգիան (ՀՍ, 100, 103):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

1. Կրթության հոգեբանություն

Սոցիալ-հոգեբանական թրենինգի ժամանակ ամեն ինչ կատարվում է հատուկ տարածաժամանակային կտրվածքով. ձևավորվում է որոշակի ստեղծագործական մթնոլորտ, ինչպես նաև դրսևորվում է *(պատրաստակամություն, պատրաստականություն), (որպիսի, որպեսզի)* մասնակիցը դուրս գա սո-

վորականի շրջանակներից և գործի ոչ կաղապարային ձևով: Սոցիալ-հոգեբանական թրենինգն այսօր *(լուծում, լուծարում)* է մի շարք խնդիրներ՝ կիրառվելով տարբեր ոլորտներում (ԼՎ, 175):

2. Սոցիոլոգիա

Պետական շատ ծառայություններ և գործիքներ, որոնք նպաստում են *(քաղաքական, քաղաքացիական)* մասնակցությանը, այժմ արդեն հասանելի են առցանց: *(Թվային, թվական)* համեմատություններն ապահովում են *(թվային, թվական)* ընդգրկվածություն և մասնակցություն: Բացի դրանից, սպասարկման ոլորտն էլ ենթարկվելու է արմատական փոփոխությունների, ինչը կհանգեցնի մարդկային գործոնի ավելացմանը: Նույնը *(վերաբերում, վերաբերվում)* է նաև առցանց կրթությանը, որն առաջարկում է բազում հնարավորություններ, բայց նաև նվազեցնում է մարդկային գործոնը, որը կարևոր է շատ սովորողների համար (ՆՓ, 16-17):

Իրավացի կլինենք, եթե ասենք, որ այն դեպքում, երբ սոցիոլոգիան ախտորոշում է սոցիալական հիվանդությունները, սոցիալական աշխատանքը բուժում է դրանցից: Անգամ գիտութաբանության նորկանտական *(ավանդույթների, ավանդությունների)* համատեքստում տեսանելի է սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի նման կապը: ....Սոցիոլոգիային առնչվող մասնագիտական գրականության մեջ երբեմն կարելի է հանդիպել «կիրառական սոցիոլոգիա» *(հասկացությանը, հասկացողությանը),* որն իրավամբ ավելի շատ վերագրելի է սոցիալական աշխատանքին, քան թե այն բովանդակությանը, որն արտահայտում են այդ բառով (ԱԽՍ, 50, 55):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

1. Կենսաբանություն

Նյարդալեզվաբանությունն առաջացել է նյարդաբանության և լեզվաբանության հատման կետում և ուսումնասիրում է լեզվական *(կառույցի, կառուցվածքի)* ու խոսքի հարաբերակցությունն ուղեղի ենթագիտակցական գործունեության հետ: ….Այդ գիտաճյուղի զարգացման մակարդակից ելնելով՝ *(պահանջ, պահանջմունք)* է դրվում ուսումնասիրելու լեզվի տարբեր բաղադրիչների համապատասխանությունը մարդու կենտրոնական նյարդային համակարգի *(գործունեության, գործողության)* ու նրա գոտիների կատարած աշխատանքին (ԼԽ, 13):

2. Քիմիա

Դեռևս մ. թ. ա. 2-րդ հազարամյակում արծաթը շատ *(հազվագյուտ, հազվադեպ)* մետաղ էր և գնահատվում էր ոսկուց էլ թանկ:

….Ցինկի արտադրաքանակի մոտ կեսն օգտագործվում է երկաթը կերամաշումից *(պաշտպանելու, պահպանելու)* համար և արույրի արտադրության մեջ: ….Ի տարբերություն ցինկայինի՝ կադմիումային ծածկույթներն իրերի մեխանիկական դեֆորմացիայի ժամանակ չեն շերտանջատվում, ինչպես նաև *(պաշտպանում, պահպանում)* են կայունությունը ծովային ջրում և օդի մեծ խոնավության դեպքում:

….Սնդիկը ջրում *(չլուծվող, չլուծարվող)* մետաղական փայլով ծանր հեղուկ է (ՌԱԱ, 35, 142-144):

3. Աշխարհագրություն

Քարտեզների դասակարգման համար հատուկ *(բարդույթ, բարդություն)* են ներկայացնում այն երևույթները, որոնք չեն կարող ամբողջովին *(վերաբերել, վերաբերվել)* որևէ ոլորտի, այլ պատկանում են երկու կամ ավելի ոլորտների:

Հին քարտեզագրական *(պատկերումներին, պատկերացումներին)* հատուկ էր տեղանքի *(նկարային, նկարչական)* փոխանցումը՝ լեռների, բուսականության, բնակավայրերի և այլ օբյեկտների հեռանկարային պատկերների լայն կիրառմամբ:

....Այդ փաստը՝ անցումն անհատական բնութագրից ընդհանրական *(հասկացությանը, հասկացողությանը),* նշանակում էր պայմանական նշանակումների ներմուծում, որոնք հասկանալու համար անհրաժեշտ եղավ կատարել նշանների մեկնաբանում (ՀԲ, ՎՄ, 20, 86-87):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

1. Մաթեմատիկա

Զուգահեռ *(ուղիղների, ուղիների)* կերպարները նորից զուգահեռ *(ուղիղներ, ուղիներ)* են, հատվող *(ուղիղների, ուղիների)* կերպարները՝ հատվող *(ուղիղներ, ուղիներ):*

Որպես հետևություն այս թեորեմից ստանում ենք, որ իզոմետրիկ ձևափոխությունը վեկտորն արտապատկերում է վեկտորի՝ *(պահպանելով, պաշտպանելով)* նրա երկարությունը:

....Քանի որ երկրաչափական *(հասկացությունը, հասկա-*

ցողությունը) կախված չէ ո՛չ *(դիտարկվող, դիտվող)* կոորդինատային համակարգից, ո՛չ էլ նրա ընտրությունից, ապա անհրաժեշտություն է առաջանում ապացուցելու այդ անկախությունը կամ, ինչպես ընդունված է ասել, ստուգելու սահմանման կոռեկտությունը (ՎՓ, ՀՕ, 18, 62):

2. Ֆիզիկա

Էլեկտրոնի ալիքային ֆունկցիայի տեսքը պարբերական դաշտում որոշելիս առնչվեցինք այնպիսի *(իրադրության, իրադարձության),* երբ էլեկտրոնի էներգիան կարող է ընդունել որոշակի՝ «թույլատրված» արժեքներ, իսկ էներգիայի այլ արժեքներ էլեկտրոնն ընդունել չի կարող:

….Համակարգում էլեկտրական *(հոսք, հոսանք)* ծագելու համար անհրաժեշտ է, որ արտաքին էլեկտրական դաշտը համակարգում ստեղծի էլեկտրոնների՝ ըստ իմպուլսների բաշխման անհամաչափություն, այսինքն՝ այնպիսի վիճակ, երբ դաշտի ուղղությամբ և հակառակ ուղղությամբ շարժվող էլեկտրոնների թվերը *(տարբերվում, տարբերակվում)* են իրարից (ԱԿ, 84, 105):

3. Ինֆորմատիկա

Բնական գիտությունների համակարգի մեջ մտնում է նաև ինֆորմատիկան, որը *(դիտվում, դիտարկվում)* է ճշգրիտ ու ճանաչողական գիտություն: Լեզվաբանության կապն ինֆորմատիկայի հետ արտահայտվում է նրանով, որ տարբեր գիտությունների *(վերաբերվող, վերաբերող)* ինֆորմացիան մշակվում, *(պահպանվում, պաշտպանվում)* և փոխանցվում է լեզ-

վական տեքստերի միջոցով: Լեզվաբանությունը կապ ունի մեքենական թարգմանությունների հետ, երբ լեզվական նյութը և լեզվաբանական իրողությունները հատուկ մոդելավորվում են և տրվում մեքենայի հիշողությանը: Մեքենան, ունենալով այս կարգի մոդելներ, կատարում է թարգմանություններ մի լեզվից մյուսը: Սա շատ բարդ խնդիր է և վերջնականապես *(լուծված, լուծարված)* չէ (ԼԽ, 12):

5.

ա) Համացանցից (հղում. https://www.youtube.com) ընտրել գիտահանրամատչելի բնույթի որևէ հոլովակ՝ ձեր մասնագիտական բնագավառից, վերջինիս տեքստը ենթարկել բառագիտական (իմաստաբանական) վերլուծության՝ առանձնացնելով ***բառերի իմաստային-թեմատիկ խմբերը՝***

1) *ֆիզիկական աշխարհ*
2) *մարդկություն*
3) *մարդուն հատուկ ֆիզիկական գործողություններ*
4) *մտավոր-հոգեկան գործողություններ*
5) *երկրագործություն, բուսականություն*
6) *կենդանիներ և թռչուններ*
7) *մարմնի մասեր*
8) *հագուստ, զարդարանք*
9) *քանակ, թիվ*
10) *ռազմական գործ*
11) *օրենք, իրավունք, իշխանություն*
12) *կրոն, հավատալիքներ* և այլն:

բ) Նկարահանել վերլուծական աշխատանքի վերաբերյալ հոլովակ և վերջինս ներկայացնել առցանց ուսուցման հարթակում:

6.

*ա) Հետևյալ հատվածներում ընդգծված բառերը բնութագրել ըստ ծագման (**բնիկ բառեր, արտաքին փոխառություններ** և **օտարաբանություններ**):*

բ) Կատարել բառարանային աշխատանք՝ արտաքին փոխառությունների համար նշելով փոխատու լեզուն, իսկ օտարաբանությունների համար՝ նրանց հայերեն համարժեքը, ինչպես նաև այս կամ այն լեզվին պատկանելությունը:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

1. Պատմություն

Խաղաղ պայմաններում Մգեբրովի ծառայության առավել արժանահիշատակ հատվածը եղել է Անդրկասպյան զինվորական **օկրուգում** 1887-1903 թթ. անցկացրածը: Այդ տարիների անբասիր և օրինակելի ծառայության համար 1890 թ. Մգեբրովը որպես պարգև ստացել է փոխգնդապետի **կոչում,** իսկ 1894 թ. արժանացել է «Բարձրագույն շնորհակալագրի» և Ս. Ստանիսլավի երկրորդ աստիճանի շքանշանի:

....Մգեբրովի գլխավորությամբ **ստեղծվել է** մի հանձնաժողով, որի աշխատանքից հիշարժան են զրահապատ **մեքենաների** փորձարկումներն ու դրանց մարտական հնարավորությունների կատարելագործումը:

....Տարիների ու **պատերազմի** դժվարությունների միջով անցած 72-ամյա հայազգի գեներալը Խորհրդային կարգերի **հաստատումից** հետո բնակություն է հաստատել Պետրոգրադում, որտեղ և մահացել է 1920 թ. (ԿՓ, 306-308):

2. Հասարակագիտություն

Պատասխանատվությունը՝ որպես բարոյագիտական **կատեգորիա,** բնութագրում է հասարակության նկատմամբ **անձի** վերաբերմունքը՝ հասարակության կողմից անձին ներկայացվող որոշակի բարոյական **պահանջներն** իրականացնելու իմաստով:

.... Սոցիալական պատասխանատվությունն անհատի և **կոլեկտիվի,** անհատի ու հասարակության միջև փոխգործակցության **տարրն** է (ՌՀ, 267-268):

Ժառանգումը մահացած անձի՝ ժառանգատուի իրավունքների ու պարտականությունների, նրան պատկանող գույքի, սեփականության իրավունքի անմիջական իրավահաջորդումն է: **Այդ** կապակցությամբ **ծագող** հարաբերությունները կարգավորող **նորմատիվ** ակտերի ամբողջությունն էլ **կազմում է** ժառանգման իրավունքը:

....Կտակի ազատությունը սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր **բաժնի** կանոններով (ՀՄ, 270, 272):

Նմուշ՝ *անձ – բնիկ* հայերեն բառ

պատերազմ – փոխառություն իրանական աղբյուրից

օկրուգ (*ռուս.* округ) – պետության տարածքի վարչական՝ տնտեսական ևն ստորաբաժանում. շրջան:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

1. Կուլտուրա

Մենեջերը և վարչական ղեկավարը միասին աշխատում են միևնույն **խմբում:** Ցանկացած կառավարում առաջին հերթին նշանակում է որոշումների ընդունում:

....Տարբեր ծրագրերի իրականացման միջոցով թանգարանը հնարավորություն է ստանում հասարակությանը ներկայանալու իբրև կազմակերպված կառույց՝ որոշարկված խնդիրներով ու գործունեության **դաշտով:**

....Մարքեթինգի մասնագետներն անհրաժեշտ տվյալներ են ներկայացնում թանգարանի աշխատանքների հեռանկարային ծրագրեր կազմելու և թանգարանային տարբեր միջոցառումներ նախագծելու ընթացքում: ....Թանգարանային շուկայավարությամբ արդյունավետ զբաղվելու համար անհրաժեշտ է թանգարանը դիտել այցելուների աչքերով:

....Ինտերնետն օգնում է մասնագիտական խմբերի ու լսարանների **ինտերակտիվ** հաղորդակցությունը կազամակերպելուն, թանգարանային նյութը հանրայնացնելու անսահման հնարավորություններ ստեղծում (ՀՊ, 48, 54, 77, 79, 108):

2. Գեղարվեստական կրթություն

Հայ արվեստում «Սալոմեն» միանգամայն **նոր խոսք** էր ինչպես թեմատիկ, այնպես էլ ոճական և հորինվածքային մտահղացմամբ: Կենտրոնից փոքր-ինչ աջ հեռացած Սալոմեի

Ֆիգուրը ծառայում է որպես յուրատեսակ բաժանարար: ....Այս **կտավում** Սուրենյանցի ինքնատիպ նկարելաոճն ու երփնագիրը, արտասովոր կերպով միահյուսվելով **մոդեռնի** ու **սիմվոլիզմի** ձեռքբերումներին, ստեղծել են հայ **արվեստի** իրական **գոհարներից** մեկը:

.....Սուրենյանցի «Թախիծ» կտավն ինքնին միանգամայն դասվում է սիմվոլիստական կերպար-խորհրդանիշների շարքը: ....Նկարիչը ներկայացնում է ոչ թե իրական **կնոջ,** այլ անձնավորված հոգեվիճակ, ինչն ընդգծելու համար **նկարի** ստորին հատվածում կանացի ֆիգուրը միախառնվում է **ֆոնի** հետ:

Սուրենյանցի բեմանկարչական աշխատանքներից պետք է առանձնացնել Կ. Ստանիսլավսկու **հրավերով** 1904 թ. Մոսկվայի գեղարվեստական **թատրոնի** մետերլինկյան **պիեսների** («Կույրերը», «Անկոչը», «Այնտեղ՝ ներսում») բեմականացումների համար կատարված ձևավորումները:

....Մոդեռնի **գծերը** հայ նկարչի արվեստում հանդես են գալիս անսովոր դիտակետով, ոճավորված **օրնամենտի** հարուստ կիրառմամբ, **կոմպոզիցիայի ասիմետրիկ** կառուցմամբ և հարթայնության ձգտմամբ (ՄՄ, 224-225):

Նմուշ՝ *կին – բնիկ* հայերեն բառ

նկար – փոխառություն իրանական աղբյուրից

մոդեռն – (*ֆր.* moderne. նորագույն) արդիական, ժամանակակից:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

1. Կրթության հոգեբանություն

Առանձին երազների բառային մակարդակում **անձի** իմացահուզական **վիճակը** լրիվ չի դրսևորվում՝ մղվելով ենթագիտակցական ոլորտ, իսկ **հույզը** գիտակցության աստիճանում **մնում է** չպատճառաբանված: Երազատեսը հաճախ հորինում է այնպիսի **պատկերներ**, որոնք իրականում նրա հոգեկանում չեն եղել, այլ ծնվել են հաղորդման գործընթացում՝ անձի ներքին դրդապատճառների ազդեցության տակ: ....Իրենց մտապատկերները վերարտադրելիս **մարդիկ** հաճախ են անդրադառնում այն ամենին, ինչ **ադեկվատ** է սեփական հոգեկան վիճակին, դիրքորոշումներին՝ գիտակցության ոլորտից արտամղելով անցանկալին, քանի որ անձը **ելնում է** իր ներքին դրդապատճառներից և միշտ չէ, որ միտված է սեփական հոգեկան կյանքի ճիշտ, **օբյեկտիվ** իմացությանը:

....**Երեխաների** երազներում հաճախ են հանդիպում **համի, հոտի,** մաշկային զգայություններից առաջացող **սինեսթեզիայի** պատկերները (սինեսթեզիայի յուրօրինակ տարատեսակներից են գունազգացողությունից առաջացող զգայապատկերները) (ԿՍ, 95, 98):

2. Սոցիոլոգիա

Սոցիալական աշխատանքը հիմնականում զբաղվում է **կոնկրետ մարդկանց** կյանքում **ծագած** կոնկրետ խնդիրների լուծմամբ: .... Սոցիալական աշխատանքը **պրակտիկ** մասնագիտություն է: Իրավացի կլինենք, եթե **ասենք,** որ այն դեպ-

քում, երբ **սոցիոլոգիան** ախտորոշում է սոցիալական **հիվանդությունները,** սոցիալական աշխատանքը բուժում է դրանցից: Սոցիոլոգիան օրենքներ սահմանող՝ **նոթեմատիկ** գիտություն է, սոցիալական աշխատանքը՝ այդ օրենքները կիրառող՝ **իդեոգրաֆիկ** գիտություն:

....Եթե չլիներ շեղվող ու հանցագործ վարքի սոցիոլոգիան, չէր զարգանա իրավախախտների հետ սոցիալական աշխատանքի կամ **պրոբացիոն** աշխատանքի ոլորտը: Ընտանիքի, կրթության ու առողջապահության սոցիոլոգիական հայեցակարգերի զարգացումը հնարավոր է դարձրել համապատասխան **ինստիտուտներում** սոցիալական աշխատանքի ներդրումը (ԱԽՍ, 50, 52-53):

Նմուշ՝ *մնալ – բնիկ* հայերեն բառ

հույզ – փոխառություն իրանական աղբյուրից

սոցիոլոգիա – (*լատ.* soci (etas). հասարակություն, *հուն.* logos. ուսմունք) գիտություն հասարակության զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին. հասարակագիտություն:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

1. Կենսաբանություն

Վեգետատիվ ֆունկցիաներից առավել **խոր** փոփոխություններ **մարդու օրգանիզմի** կազմավորման դեպքում **կրել է** արյան շրջանառության **ֆունկցիան**: Ուղղաձիգ դիրքին անցնելը **նոր պայմաններ ստեղծեց** անոթներով **արյան** շարժման

և **սրտի** աշխատանքի համար:

....Կենսաբանական նախորդների և նախնադարյան մարդկանց **կյանքը** գոյության **դաժան պայքարում** իր հետքն **է թողել** օրգանիզմի բոլոր ֆունկցիաների վրա, որոնք պահպանվել են ժամանակակից մարդու **ֆիզիոլոգիայում:** Գոյության պայքարում կենսականորեն կարևոր սրտի գործունեության **մոբիլիզացիայի ռեֆլեքսը** հուզական դրդման դեպքում պահպանվել է մինչև մեր **օրերը** (ԿԳ, ԾԱ, 32-33):

2. Քիմիա

Բիոցիդները քիմիական նյութեր են, որոնք ստեղծվել են որպես **պայքարի** միջոց վնասատու օրգանիզմների դեմ: ....Օրգանական **քիմիայի** զարգացումը հնարավորություն տվեց լայնորեն կիրառելու բժշկության բնագավառում առաջին որոշակի բաղադրությամբ **սինթետիկ** պատրաստուկները, որոնք համարյա ամբողջությամբ դուրս են մղել բնականներին:

....Մասնավորապես ջրալույծ **պոլիմերները** կազմում են **արյան** փոխարինիչների երկու **խմբի** հիմքը՝ **հեմոդինամիկ** և **դեզինտոքսիկացիոն:**

....Ամենակարևոր առավելությունը, որը կարելի է իրականացնել կենսաակտիվ պոլիմերի **սինթեզով,** ընտրողականությունն է մեկ կամ մի քանի **տիպի** բջիջների կամ **օրգանների** նկատմամբ:

....Ջրում լուծելի կենսաակտիվ պոլիմերի **լավ** մաքրումը **շատ** կարևոր է ֆիզիոլոգիական ակտիվության համար (ՆԴ, 5-6, 11, 42, 65):

3. Աշխարհագրություն

Տնտեսական աշխարհագրության ամենակարևոր ու հիմնական հասկացությունը «տեղաբաշխումն» է, որն արտահայտում է երևույթների ու աշխարհագրական **օբյեկտների կոնկրետ** բաշխումը որևէ տարածքում: Մարդկանց (բնակչության) բաշխումն արտահայտելու համար կիրառվում է «տարաբնակեցում» (տարածական բնակեցում) **տերմինը:** ....Տեղաբաշխման աշխարհագրական **մոդելն** աշխարհագրական **քարտեզն** է:

....**Գլոբալ** աշխարհագրական մտածողության հիմքում մեզ շրջապատող **աշխարհի** ամբողջականության ըմբռնումն է, որն իր հերթին որոշվում է շրջակա միջավայրի հետ **բարդ** փոխազդեցության մեջ գտնվող **մարդու** և մարդկության կյանքի բոլոր ոլորտների միջազգայնացումով (ՌՄ, ՄՄ, 13, 273-274):

Նմուշ՝ *մարդ – բնիկ* հայերեն բառ

աշխարհ – փոխառություն իրանական աղբյուրից

գլոբալ – (*ֆր.* global) համընդհանուր բնույթ ունեցող. համընդհանուր:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

1. Մաթեմատիկա

Հայտնի է, որ **մաթեմատիկան** զբաղվում է որոշակի «իդեալականացված» **օբյեկտներով:** Սակայն այդ մաթեմատիկական օբյեկտներն արտացոլում են նյութական առար-

կաների և նյութական **աշխարհի** հատկությունները, օրինաչափությունները. **դրանց** իդեալական բնույթը պարզապես նշանակում է հետազոտման գործընթացում մեզ ոչ պետքական, ոչ անհրաժեշտ հատկություններից ժամանակավորապես հրաժարում, ինչի հետևանքով **մենք** հնարավորություն **ենք ստանում** տվյալ նյութական (իրական) օբյեկտը քննարկելու հնարավորինս մաքուր **վիճակում:** Այդ **պատճառով** մաթեմատիկական հասկացություններն ու դրույթները պարունակում են **ռեալ** իրականության հատկությունների ավելի **խոր** և ընդհանուր իմացություն (ԷԱ, 54):

2. Ֆիզիկա

Կուլոնը, ոլորակշեռքի օգնությամբ չափելով **երկու** կետային լիցքերի փոխազդեցության **ուժի** կախումը փոխազդող լիցքերի մեծությունից և նրանց միջև եղած հեռավորությունից, ձևակերպեց հետևյալ օրենքը. «**Վակուումում** գտնվող ցանկացած երկու անշարժ կետային լիցքեր միմյանց հակազդում են այնպիսի ուժով, որի **մոդուլն** ուղիղ համեմատական է լիցքերի մոդուլների արտադրյալին և հակադարձ համեմատական է դրանց միջև եղած հեռավորության քառակուսուն: Այդ ուժը գտնվում է լիցքերը միացնող ուղղի վրա»:

….Գաուսի **թեորեմը** հնարավորություն է տալիս առավել հեշտությամբ որոշելու համաչափությամբ օժտված **որոշ դաշտերի** լարվածությունները:

….Պոտենցիալների տարբերություն կամ լարում կոչվում է այն **սկալյար** մեծությունը, որը թվապես **հավասար** է միավոր դրական կետային լիցքը դաշտի մի կետից մյուսը տեղափոխելիս դաշտի կողմից կատարված աշխատանքին (ԴԲ, 9, 20, 26):

3. Ինֆորմատիկա

Ռեգիստրը պրոցեսորի փոքրածավալ հիշողություն է, որն ապահովում է տվյալներին **արագ** դիմելու հնարավորությունը:

Ինթել x86 **միկրոպրոցեսորի** (կամ պարզապես պրոցեսորի) ծրագրային **մոդելը** (ծրագրավորողին հասանելի) պարունակում է 32 ռեգիստր:

....Դրոշների հետ աշխատող **հրամաններն** առանց **օպերանդի** հրամաններ են, որոնք աշխատում են դրոշների ռեգիստրի կամ նրա որոշակի դրոշների հետ (ԱԱ, 19, 176):

Նմուշ՝ *երկու – բնիկ* հայերեն բառ

հավասար – փոխառություն իրանական աղբյուրից

սկալյար – (*լատ.* scalaris. աստիճանաձև, աստիճանական) սկալյար մեծություն, որի յուրաքանչյուր արժեքը, ի տարբերություն վեկտորի, կարելի է արտահայտել մեկ (իրական) թվով, և դրա հետևանքով սկալյարի արժեքների համախումբը կարելի է պատկերել գծային սանդղակի վրա:

Բառարաններ

1. ***Աճառեան Հ.,*** Հայերէն ստուգաբանական առձեռն բառարան, *Հայերէն արմատական բառարանից* համառոտեց *Մ. Մինասեանը*, Ժնև, 2004:
2. ***Հայրապետյան Ա.,*** Օտար բառերի բառարան, Հեղ. հրատ., Ե., 2011:
3. ***Մալխասեանց Ստ.,*** Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, ՀՍՍՌ Պետհրատ, Ե., 1944-1945:

4. ***Ջահուկյան Գ.,*** Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., «Ասողիկ» հրատ., 2010:
5. *www.nayiri.com (էլեկտրոնային բառարանների գրադարան):*

7. *Գիտական գրականությունից (տալ սկզբնաղբյուրը և վերջինիս հրատարակության բոլոր տվյալները՝ վայրը, հրատարակչությունը, թվականը և էջը) նախադասություններով կամ տեքստի բաղկացուցիչ մասերով՝ պարբերություններով հանդերձ դուրս գրել առնվազն 10* ***նորաբանություն*** *(բացատրել իմաստները)՝ ըստ ձեր մասնագիտական բնագավառի.*

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա
4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

8. *Նախադասություններով կամ տեքստի բաղկացուցիչ մասերով՝ պարբերություններով հանդերձ (տալ սկզբնաղբյուրը և վերջինիս հրատարակության բոլոր տվյալները՝ վայրը, հրատարակչությունը, թվականը և էջը) ներկայացնել առնվազն 10* ***տերմին*** *(բացատրել իմաստները)՝ ըստ ձեր մասնագիտական բնագավառի.*

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

9.

ա) Արտահայտիչ ընթերցել հետևյալ հատվածները:

*բ) Դուրս գրել **պարզ** և **բաղադրյալ բառերը՝** ներկայացնելով ըստ տրված աղյուսակի:*

Ա. Պատմություն և հասարակագիտություն

1. Պատմություն

Միջազգային հարաբերությունների, հայ ազգային-ազատագրական պայքարի հետագա ուղիների վերաբերյալ Ա. Չոպանյանի գնահատականներն անանց արժեք ունեն: Թափանցելով քաղաքական անցուդարձերի խորքը և գուշակելով մոտալուտ համաշխարհային պատերազմը՝ Ա. Չոպանյանը երկու դարի սահմանագծում կարծում էր, որ հայ ժողովուրդը միայն իր ուժերով չի կարող թոթափել օսմանյան տիրապետությունը և պարտավոր է դաշնակիցներ գտնել: Ըստ նրա՝ հայը դաշնակից պետք է փնտրի չորս հզոր պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի մեջ: Խնդիրն այն է, թե դրանցից որի՞ն տալ գերապատվություն: ....Ա. Չոպանյանի համոզմամբ Հայկական հարցի լուծմամբ առավել շահագրգիռ է Ռուսաստանը, և նրա նկատմամբ քաղաքական կողմնորոշման անհրաժեշտությունը նա հիմնավորում էր և՛ պատմականորեն, և՛ ընթացիկ պահի անհրաժեշտությամբ (ԱԱՀ, 387-388):

2. Հասարակագիտություն

Նախնական պայմանագիրը՝ որպես իրավական ինստիտուտ, սկսեց զարգանալ դեռևս սովետական ժամանակաշրջանում, սակայն առաջին անգամ պատշաճ իրավական կարգավորման ենթարկվեց «ԽՍՀՄ քաղաքացիական օրենսդրության հիմունքներում»:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ըստ էության գնաց հենց «Հիմունքների» ճանապարհով:

....Պրոֆեսոր Տ. Բարսեղյանի գնահատմամբ տուժանքի երկակի կիրառումն արդարացված չէ և առավելապես պատճառն է այն բանի, որ ՀՀ օրենսդիրը, ընդօրինակելով ԱՊՀ երկրների օրենսդրությունները, ամրագրել է թեև սահմանված, սակայն գործնականում չարդարացված և ոչնչով չհիմնավորված սկզբունքը: ....Կատարված համակողմանի վերլուծության արդյունքում պրոֆեսորն ի վերջո հանգել է նրան, որ «տուժանք» պետք է անվանել իրավախախտման համար գանձվող, օրենքով կամ պայմանագրով նախատեսված դրամական այն գումարը, որի չափը որոշվում է խախտված պարտավորության արժեքից՝ տոկոսային հարաբերությամբ, իսկ «տուգանք» համարել իրավախախտման համար գանձվող դրամական այն գումարը, որի չափը որոշվում է կայուն դրամական գումարով կամ պատիկներով (ԳՍ, 254-255):

Պարզ բառեր	Բաղադրյալ բառեր	
Նմուշ՝ *հայ*	*Ածանցավոր*	*Բարդ, այլև բարդ ածանցավոր*
	Նմուշ՝ *պեկտություն*	Նմուշ՝ *անցուդարձ միջազգային*

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

1. Կուլտուրա

Մարդու իրավունքների խնդիրները մշտապես եղել են լրագրողների ուշադրության կենտրոնում: Զանգվածային լրատվամիջոցները հսկայական դեր են ունեցել մարդու իրավունքների ցանկացած շարժման կայացման գործում: Դրանք ոչ միայն լուսաբանել են հանուն իրավունքների պաշտպանության կազմակերպված պայքարները, այլև հաճախ լրագրողական հետաքննությունների միջոցով իրենք են խթանել տարատեսակ շարժումները: ԶԼՄ-ների հետևողական հրապարակումները մեծ դերակատարում ունեն ինչպես քաղաքատնտեսական, այնպես էլ իրավական ոլորտի բարեփոխումների հարցում:

....Մարդու իրավունքների լուսաբանման համար էական է հետևողականությունը: Իրավախախտումների վերաբերյալ մեկ հրապարակումն ամենայն հավանականությամբ էական նպաստ չի ունենա առկա խնդիրների լուծման հարցում:

....Ժամանակ առ ժամանակ լրագրողների մուտքը ՔԿՀ-ներ

թույլատրվում է, երբեմն ՀՀ ԱՆ ՔԿՎ-ն նպատակահարմար չի համարում այդ պահին կազմակերպել լրագրողի այցը ՔԿՀ, ինչը հաճախ պատճառաբանվում է աշխատակազմի ծանրաբեռնվածությամբ, երբեմն էլ դատապարտյալի ցանկության բացակայությունն է վկայակոչվում (ԱՂՄ, 106, 124, 155):

2. Գեղարվեստական կրթություն

Քառաձայն խառը երգչախմբի համար գրված «Փոքր բերանը» խմբերգի հիմնական մեղեդին ծագում է Իրանի Քյուրդեստան մարզից: Ժողովրդական երգի գրական բովանդակությունն աղջկա գովասանքն է. «Փո՛քր բերան, սև՛ աչեր, թող վարսերիդ նայեմ ու իմ քաղցր կյանքը քեզ նվիրեմ…»: Խմբերգի համար ընտրված ժողովրդական մեղեդին պատկանում է պարային ժանրին, ինչն ընգգծված է ուրույն ռիթմով և աշխույժ բնույթով: Նկատի ունենալով այս փաստը՝ Ռուբեն Գրիգորյանը խմբերգը կառուցում է երկմասանի ձևով որպես երգ ու կրկներգ (ՀԱՊ, 198):

Պարզ բառեր	**Բաղադրյալ բառեր**	
Նմուշ՝ *երգ*	*Ածանցավոր*	*Բարդ, այլև բարդ ածանցավոր*
	Նմուշ՝ *պարային*	Նմուշ՝ *խմբերգ երգչախումբ*

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

1. Կրթության հոգեբանություն

Քաղաքական հոգեբանությունը քաղաքական վարքի հոգեբանության մասին է: Այն կարելի է սահմանել որպես քաղաքականության և հոգեբանության փոխազդեցության վերաբերյալ գիտություն, որտեղ հատկապես նկատելի է հոգեբանության ազդեցությունը քաղաքականության վրա:

….Անհատականության ուսումնասիրությունների շրջանում ամենատարածվածը Զիգմունդ Ֆրոյդի հոգեվերլուծության տեսությունն է, որը դիտարկում է մարդու գործունեության հիմքում ընկած շարժառիթները:

….Հոգեվերլուծությանը փոխարինեցին ճանաչողական համապատասխանության տեսությունը և վարքագծի գիտական ուսումնասիրությունը:

….Սոցիալական ազդեցությունն իրականացվում է հիմնականում երեք ոլորտում՝ միջանձնային, ազդեցության համար հատուկ ստեղծված պայմաններում (ելույթներ հանրության առջև, ասենք, համալսարանական լսարանում կամ տարատեսակ հավաքների ժամանակ) և ԶԼՄ-ով:

Զանգվածային լրատվամիջոցներն այսօր հասանելի են աշխարհի միլիոնավոր մարդկանց և իրենց զանգվածայնությամբ սոցիալական ազդեցության գլխավոր գործոններից մեկն են:

….Ինչպես Սյուզան Ֆիսկեն է նշում, ռասիզմի, նախապաշարմունքի և խտրականության վերաբերյալ կատարված հետազոտությունների մեծ մասը հիմնականում գալիս է ԱՄՆ-ից:

….Հոգեբանական մեծաքանակ տեսություններ գոյություն ունեն, որոնք փորձում են բացատրել, թե ինչ է ռասիզմը, և ինչպես է տեղի ունենում ռասայական լարվածությունների զարգացումը (ՀՄՔ, 12, 16, 18, 95, 159):

2. Սոցիոլոգիա

Կրթության և սոցիալական արդարության առնչությունները բազմաթիվ են: Կրթությունը դիտվում է իբրև գործընթաց, որը, հասարակության ներսում սոցիալական շարժունության միջոց լինելով, ինքնին սոցիալական արդարության եղանակ է: Այս առումով անկախ իր կոնկրետ խնդիրներից՝ կրթությունն ավել կամ պակաս չափով իրագործում է սոցիալական արդարության ապահովման գործառույթը: Սակայն կրթության և սոցիալական արդարության առնչությունը դիտարկելի է նաև կրթական համակարգին ներհատուկ լինելու տեսանկյունից: Այսպես՝ սոցիալական արդարությունը կրթության ոլորտում սահմանվում է իբրև նպատակ և իբրև գործընթաց (ԺԱ, 174):

Համաշխարհայնացման գործընթացները, տեխնիկայի, տեղեկատվության ու հաղորդակցության նոր ձևերի զարգացումներն ստեղծել են այնպիսի իրավիճակ, երբ աշխարհում տեղի ունեցող ամեն մի քիչ թե շատ նշանակալից իրադարձություն հասանելի է բոլորին և դառնում է նրանց ուշադրության առարկան: Կարելի է ասել, որ եկել է մեկ ընդհանրական համաշխարհային մշակութային տարածություն ստեղծելու ժամանակը: Ընդհանրապես մարդկությունը մշտապես ձգտել է համաշխարհային կարգի հաստատմանը: ….Պետք է նկատել, սակայն, որ միասնական համաշխարհային կարգի, մշակույթի, «յուրայինների» համաշխարհային հանրույթի

ստեղծման փորձերը հիմնականում ձախողվել են:

....Իրականության յուրացման և իմաստավորման հարցում «յուրային» և «օտար» հասկացություններն առանձնահատուկ տեղ են գրավում և ինչ-որ իմաստով համարվում են ժամանակակից սոցիոմշակութային քաղաքականության աշխարհայացքային միջուկը (ՂԱ, 153, 167):

Պարզ բառեր	**Բաղադրյալ բառեր**	
Նմուշ՝ *նոր*	*Ածանցավոր*	*Բարդ, այլև բարդ ածանցավոր*
	Նմուշ՝ *իմաստավորում*	Նմուշ՝ *ինչ-որ ուշադրություն*

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

1. Կենսաբանություն

Բույսերի հանքային սննդառությունն իրականացվում է արտաքին միջավայրից հանքային իոնների կլանման շնորհիվ: Բնական պայմաններում բուսական օրգանիզմներն անհրաժեշտ հանքային նյութերն ստանում են հողից: Տվյալ դեպքում արմատները հողային մասնիկների, լուծույթի, մանրէների և սնկերի հետ գտնվում են փոխազդեցության մեջ:

....Յոդը կապվում է ճարպի հետ չհագեցած ճարպաթթուների կրկնակի կապերի ճեղքման արդյունքում: Հետևաբար, որքան շատ են կրկնակի կապերը ճարպի թթվային մնացորդներում,

այնքան բարձր է յոդային թվի ցուցանիշը: Կենդանական ճարպերը պարունակում են հագեցած ճարպաթթուներ և ունեն յոդային թվի ցածր ցուցանիշներ (30-70): Բուսական ճարպերը, պարունակելով հիմնականում չհագեցած ճարպաթթուներ, տարբերվում են յոդային թվի բարձր ցուցանիշով (80-180) (ԱԱ, ԱԹ, 8, 60):

2. Քիմիա

Ջերմաստիճանի չափման եղանակները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ *հպումային* և *ոչ հպումային:* Առաջին դեպքում չափող սարքը պետք է հպված լինի չափվող առարկային և դրա հետ գտնվի ջերմային հավասարակշռության մեջ: Երկրորդ դեպքում ջերմաստիճանը չափվում է հեռավորության վրա՝ չափող սարքի և չափվող առարկայի միջև հպման բացակայությամբ:

....Պատմականորեն առաջինը լայն կիրառություն գտած հեղուկային ջերմաչափներից լավագույններն ունեն Ցելսիուսի աստիճանի մեկ հազարերորդականի ճշտություն, բայց այդպիսի մեծ ճշտություն ստանալը պահանջում է մանրակրկիտ աստիճանավորում, չափումների հաշվման ճշգրիտ եղանակ և մեծ թվով ուղղումներ:

....Ջերմաէլեկտրականության վրա հիմված ջեմաչափները՝ ջերմազույգերը, կիրառվում են XIX դարից սկսած (ՀԽ, 3-4, 6):

3. Աշխարհագրություն

«Երկրաբանական տեղեկատվական համակարգ»-ին զուգահեռ կարելի է հանդիպել նաև «լեռնաերկրաբանական

տեղեկատվական համակարգ» տերմինի կիրառությանը (հիմնականում ՌԴ-ում):

....Երկրատեղեկատվական համակարգերը տարածական տվյալների և դրանց առնչվող տեղեկատվության հավաքման, պահպանման, մշակման, վերլուծության և գրաֆիկական տեսապատկերման համակարգեր են: ԵՏՀ տերմինը կիրառվում է նաև առավել նեղ իմաստով՝ գործիք (ծրագիր, ծրագրային ապահովում), որը թույլ է տալիս օգտագործողներին որոնել, վերլուծել և խմբագրել թվային տեղեկատվությունը (քարտեզներ, կտրվածքներ, աղյուսակային և այլ տիպի նյութեր), ինչպես նաև տեղեկություն է տալիս մեզ անհրաժեշտ օբյեկտների մասին՝ կոորդինատներ, տարբեր ցուցանիշների արժեքներ և այլն (ՀՄ, ՎՄ, 13-14):

Պարզ բառեր	**Բաղադրյալ բառեր**	
Նմուշ՝ *շապ*	*Ածանցավոր*	*Բարդ, այլև բարդ ածանցավոր*
	Նմուշ՝ *բնական*	Նմուշ՝ *մանրէ տեղեկատվություն*

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

1. Մաթեմատիկա

Առաջին կարևորագույն խնդիրը, որն առաջանում է երկրաչափություն կառուցելիս, երկրաչափական պատկերների հավասարության հասկացության ներմուծումն է: Երկրաչա-

փության դպրոցական դասընթացում երկու երկրաչափական պատկերներ (օրինակ՝ եռանկյուններ), համարվում են նույնականացված (հավասար), եթե դրանցից մեկը կարելի է վերադրումով համընկեցնել մյուսին: Վերադրումով համընկեցնել նշանակում է պատկերներից մեկը (տեղափոխելով հարթության կամ տարածության մեջ) տեղադրել մյուս պատկերի վրա այնպես, որ մի պատկերի կետերը դառնան կետեր մյուս պատկերի համար և հակառակը: Ընդ որում, ենթադրվում է, որ տեղափոխության ողջ ընթացքում տեղափոխվող պատկերի ցանկացած երկու կետի միջև հեռավորությունը մնում է անփոփոխ (ՎՓ, ՀՕ, 11-12):

2. Ֆիզիկա

Բյուրեղների տեսական և իրական ամրության համեմատությունը ցույց է տալիս, որ տեղաշարժման ժամանակ դրա մի մասը մյուսի նկատմամբ տեղափոխվում է ոչ որպես կոշտ ամբողջություն: Տեղաշարժը մնում սահքի հարթության ինչոր մասում, այնուհետև աստիճանաբար տարածվում է ողջ հարթությամբ: Այդ պատճառով յուրաքանչյուր պահի ատոմների ոչ մեծ մասն է մասնակցում արտաքին ուժերի դեմ աշխատանքին:

...Ալֆա-մասնիկների հայտնաբերման և ուսումնասիրման պատմությունը կապված է Ռեզերֆորդի անվան հետ: Ալֆա-մասնիկների օգնությամբ Ռեզերֆորդն ուսումնասիրել է ատոմի կառուցվածքը:

....Բետա-տրոհման ժամանակ առաքված բետա-մասնիկներն ունեն տարբեր էներգիաներ, որի հետևանքով էլ դրանց վազքի երկարությունները նյութում տարբեր են: Նյութում

բետա-մասնիկի անցած ուղին ուղիղ գիծ չէ, ինչպես ալֆա-մասնիկինը, այլ բեկյալ է:

....Ռենտգենյան և գամմա-ճառագայթներ կամ, ընդհանուր անվանմամբ, ալիքի փոքր երկարությամբ էլեկտրամագնիսական ալիքներն օժտված են նյութի մեջ թափանցելու մեծ ունակությամբ (ՎՀԿ, 26, 62, 67):

3. Ինֆորմատիկա

Պատկերացնենք, թե ինչքան դժվար կլիներ աշխատել հայերեն ուղղագրական բառարանով, եթե նրանում բառերը չտեղադրվեին որոշակի կարգով (օրինակ՝ այբբենական): Համապատասխանաբար ԷՀՄ-ում տվյալների ներկայացման և պահպանման ձևից կախված՝ որոշվում է նրանց մշակումն իրականացնող ալգորիթմների բարդությունը:

....Կապակցված ցուցակները տվյալների այնպիսի հավաքածուներ են, որոնցում տարրերը դասավորված են «մի գծով», և տարր ավելացնելու կամ հեռացնելու գործողություններ կարող են կատարվել կապակցված ցուցակի կամայական տեղում: ....Գոյություն ունեն ցուցակների տարբեր տեսակներ: Նրանցից յուրաքանչյուրի առավելությունը պայմանավորված է տարրերի մշակման եղանակով (ՄՃ, 3, 35-36):

Պարզ բառեր	**Բաղադրյալ բառեր**	
Նմուշ՝ *կեպ*	*Ածանցավոր*	*Բարդ, այլև բարդ ածանցավոր*
	Նմուշ՝ *առաջին*	Նմուշ՝ *ցույց տալ երկրաչափություն*

10.

ա) Նախադասություններով կամ տեքստի բաղկացուցիչ մասերով՝ պարբերություններով հանդերձ (տալ սկզբնաղբյուրը և վերջինիս հրատարակության բոլոր տվյալները՝ վայրը, հրատարակչությունը, թվականը և էջը) ներկայացնել առնվազն 10 ***հապավում՝*** *ըստ ձեր մասնագիտական բնագավառի.*

1. Պատմություն և հասարակագիտություն
2. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն
3. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա
4. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն
5. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

բ) Որոշել ներկայացված հապավումների տեսակները և բացել դրանք (արտահայտել համապատասխան բառակապակցություններով):

11.

ա) Օգտվելով դարձվածաբանական բառարաններից՝ հետևյալ հատվածներից դուրս գրել ***դարձվածքները,*** *բացատրել նրանց իմաստները (բազմիմաստ դարձվածքները ներկայացնել՝ ըստ բոլոր իմաստների և ըստ տվյալ խոսքաշարում իմաստային իրացման):*

Նմուշ՝ *ցույց տալ* – 1. տեսանելի՝ նկատելի դարձնել, *2. ապացուցել,* 3. արտահայտել, հանդես բերել, 4. (սպառնալիք) պատժել:

Հմմտ. *2.* Պատմական ճշգրիտ փաստերը համակողմա-

նիորեն *ցույց են տվել* նրա որոշիչ և կարևոր դերը հայ քաղաքական ու հասարակական կյանքում (ԱԳ, 44):

բ) Որպես նմուշ տրված դարձվածքի բոլոր իմաստներով կազմել մեկական նախադասություն:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

1. Պատմություն

Պետականությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդը հայտնվել էր բախտի քմահաճույքին, դարձել օտար բռնակալների կամայականությունների ու վայրագությունների զոհը: XVII-XVIII դարերի հայ պատմագիրները խորապես գիտակցել են հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող երևույթների խաղացած դերն ու նշանակությունը, որոնք և պայմանավորել են հայ պատմագրության զարթոնքն ու զարգացումը: Նրանք իրենց երկերում զգալի տեղ են տվել հայ առևտրավաշխառուական կապիտալի վերնախավի ծավալած գործունեությանը Հայաստանում, Պարսկաստանում, Թուրքիայում և մի շարք գաղթավայրերում: Պատմական ճշգրիտ փաստերով համակողմանիորեն ցույց են տվել նրա որոշիչ և կարևոր դերը հայ քաղաքական ու հասարակական կյանքում (ԱԳ, 44):

Նշանադրության ժամանակ՝ քահանայի կողմից հարսնացուի և փեսացուի նշանի մատանիներն օրհնելուց և միմյանց մատ հագցնելուց հետո, փեսացուի մայրը հարսին է հանձնում

նվերները, ապա սինի-մատուցարանի միջից հանում է նշանի գաթան, երկու մասի բաժանում, որից մեկը թողնում է հարսի ծնողներին, իսկ մյուսը մաս-մաս է անում և տալիս ներկա գտնվողներին: Նման բնույթի արարողություն տեղի է ունեցել նաև հայկական ավանդական նշանադրության ժամանակ, որը հայտնի է «հաց կտրել», «կես պսակ» անվանումներով:

….Պոնտոսից տեղափոխված հույների այն հատվածը, որն ապրել է հավաք ու կղզիացած, հարազատորեն պահպանել է իր լեզուն, կենցաղամշակութային յուրահատկությունները, մինչդեռ հայ բնակչության միջավայրում նրա հարևանությամբ ապրելով՝ շատ ավանդույթներ մոռացության են մատնվել և հայկական միջավայրի ազդեցությամբ կրել են էական փոփոխություններ:

….Տղա երեխաների տեր բազում կանայք և անմեղ, դեռևս կյանք չմտած աղջիկներ հարսանիքից մեկ օր առաջ թխում են հարսի գաթա ու վրան չորս ուռուցիկ գնդեր են անում: Հարսին հագցնելուց հետո քավորակինն այդ գաթան կիսում է հարսի գլխավերևում և մաս-մաս անելով բաժանում ներկա գտնվող ամուրի տղաներին ու աղջիկներին (ՄԱ, 109-110, 112):

2. Հասարակագիտություն

Սառը պատերազմին հաջորդած միաբևեռ աշխարհն այլևս անցյալում է:

….«Հայկական աշխարհ» նախագծում, հաշվի առնելով, որ այն դիտարկվում է որպես գլոբալ քաղաքացիական հասարակության սահմաններում ՀՀ-Արցախ-Սփյուռք ամբողջականության շահերին համապատասխան գործող կառույց, մեծ նշանակություն կարող են ստանալ քաղաքական որոշումների կայացման մեխանիզմները:

....ՀՀ քաղաքացիական հասարակության կառույցների արդիականացումը ևս մեկ ուղղություն է, որի զարգացմանն անհրաժեշտ է հետամուտ լինել (ՌՂ, 169, 172-173):

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

1. Կուլտուրա

«Le Monde»-ի առաջին համարը լույս տեսավ 1944 թ. դեկտեմբերի 19-ին: Հյուբերտ Բյով-Մերին այդ ժամանակ 42 տարեկան էր: .... Բյով-Մերին ցանկանում էր մատուցել օբյեկտիվ, անաչառ, բազմակարծիք լրատվություն, և դա նրան հաջողվեց. թերթը հեղինակություն ու համբավ ձեռք բերեց ֆինանսական դժվարությունների և տնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում, երբ իր միակ հարստությունը որդեգրած սկզբունքներն էին:

....1951 թ. ստեղծվեց «Le Monde»–ի խմբագիրների միությունը, որը, ձեռք բերելով բաժնեմասերի մեծամասնությունը (71,43 %), դարձավ թերթի հիմնական բաժնետերը: Հետագայում այս ցուցանիշը նվազեց՝ առաջ բերելով միության դժգոհությունը: ....Ավելի ուշ ծնունդ առան «Le Monde»-ի կադրերի և աշխատակիցների միությունները, որոնք համալրեցին «ներսի» բաժնետերերի կազմը և ապահովեցին թերթի անկախ կարգավիճակը:

....Ֆովեի դավաճանությունը թանկ նստեց թերթի վրա: 1980-ական թվականներից հետո վերջինիս տնտեսական վիճակը

կտրուկ վատացավ: ....Տնտեսական անկայուն վիճակը տարաձայնություններ առաջ բերեց թերթի ներսում (ԱՄ, 15-16, 18):

2. Գեղարվեստական կրթություն

Սեփական միջնադարյան մշակույթը որպես ազգակերտման հնարավորություն ընկալելը 18-19-րդ դարերի Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայում մեծ տեղ գտած երևույթ էր:

....Հովսեփյանը, հին ազգեր ասելով, նկատի ունի հույներին, հռոմեացիներին և հրեաներին: Խոսելով այս ազգերի մասին՝ նա փորձում է ցույց տալ քրիստոնեության դերը հայրենասիրության գաղափարի փոփոխության մեջ:

....«*Արարատի*» նույն համարում լույս է տեսնում Հովսեփյանի գրչին պատկանող մի գրախոսական հայ հին մատենագրության և Փոքր Հայքի մանրանկարչության մասին: Գրախոսականի առաջին մասում Հովսեփյանը խոսում է 1904 թ. Տյուբինգենի արքայական մատենադարանի կողմից ձեռք բերված 104 հատորից բաղկացած հայ ձեռագիր ժողովածուի մասին (ԱԳԱ, 193-194):

Մենք բոլորս գիտենք, որ երաժշտական կրթության բարձրագույն հաստատությունը կոչվում է **կոնսերվատորիա,** որտեղ կրթում են մասնագետ կատարողներ (նվագողներ, երգիչներ, նվագավարներ, երգահաններ, երաժշտագետներ): ....Սակայն ո՞ւմ մտքով կարող է անցնել, որ **կոնսերվատորիա** բառը նախապես նշանակել է **... որբանոց:** ....XVII դ. սկսած՝ որբանոցներում սկսեցին ուսանել երաժշտություն, XVIII դ. արդեն իտալական կոնսերվատորիաները մեծ դեր էին խաղում երաժիշտների ու կոմպոզիտորների կրթության գործում:

....Ալեքսանդր Մակենդոնացին կամ Ալեքսանդր Մեծը (ինչ-

պես հաճախ անվանում են նրան պատմագիրները) ապրել է ընդամենը 33 տարի (մ. թ. ա. 356-323), ճիշտ այնքան, որքան Հիսուս Քրիստոսը: Նա իր քաջագործություններով, ռազմական նվաճումներով հելլենիստական մշակույթն աշխարհով մեկ տարածելու առաքելությամբ մեծ հռչակ է ձեռք բերել թե՛ իր ապրած ժամանակ, թե՛ հետագա դարերում. նրան թերևս փառքով ոչ ոք չի հավասարվել մահկանացուների մեջ (ԼԽՀ, 129, 137):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

1. Կրթության հոգեբանություն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գեղարվեստական վավերագրության հեղինակները, որոնք իրականությանը համապատասխան երկխոսության մեջ են մտնում, կարող են բաժանվել երկու խմբի՝ պայմանավորված մտածողության տարբեր եղանակներով՝

1) հեղինակներ, որոնք փորձում են ընթերցողին ինչ-որ բան համոզել, պատճառահետևանքային կապեր առանձնացնել (պատճառականության շղթա), մտնել փաստարկումների տիրույթ՝ որոշակի աշխարհայացք ձևավորելով, 2) հեղինակներ, որոնց մոտ ակտիվանում է խոսքի հուզազգացմունքային բաղադրիչը:

....Գեղարվեստական վավերագրության հեղինակի նպատակն է ընթերցողին ոչ միայն համախոհ, այլև գործողություն-

ների մասնակից դարձնելը:

....Հեղինակի և ընթերցողի միջև տեղի ունեցող բաց երկխոսությունն ստեղծում է նոր աշխարհ: Նրանք միմյանց կապվում են նույն կենսատիրույթի բաղադրիչներով:

....Վերջին հաշվով ընթերցողի մեջ կարող է ձևավորվել համակրանք վավերագրողի նկատմամբ, որն ընթերցողի համար ճանապարհ է հարթում՝ կյանքում փորձություն ձեռք բերելու, քաջալերում է կյանքի հմայքով՝ սովորեցնելով ընթերցողին լինել այնպիսին, ինչպիսին որ հեղինակն է (գրողը սովորաբար ներկայացնում է իր անձնական կյանքի իրողություններից):

....Ամերիկացի հոգեբան Ջերի Վաքսլերը (2013) փոքր տարիքից օրագիր է պահել և գրառել իր մտքերը: ....Հոգեբանը համարում է, որ երբ գրում ես հոգու խորքից, բացահայտում ես ինքդ քեզ, ավելի հստակ ես տեսնում ամեն ինչ: Ըստ նրա՝ ճանաչված մարդկանց հուշերը հասարակության մեջ կարող են հեղափոխության նման մի բան առաջացնել (ԱԳ, ԱԳՎԼ, 60-63, 72-73):

2. Սոցիոլոգիա

Մենք այսօր ունենք համայնքային սոցիալական աշխատողների վերապատրաստման բավական «խայտաբղետ» դաշտ, տարաբնույթ մոտեցումներ և բազմազան մեխանիզմներ: Սակայն հաշվի առնելով համայնքային սոցիալական աշխատանքի նոր զարգացումները, ինչպես նաև մեծ թվով կադրերի վերապատրաստման անհրաժեշտությունը՝ կարևոր է ներդնել մասնագետների վերապատրաստման միասնական համակարգ:

....Համայնքային սոցիալական աշխատողների ուղղորդվող պրակտիկան և սուպերվիզիայի ծառայությունների ներդրումը ՀՀ համայնքներում կարևոր նշանակություն կունենան նաև այն մասնագետների կարողությունների զարգացման համար, որոնք ունեն սոցիալական աշխատանքի կրթություն, սակայն կարիք ունեն ձեռք բերելու մասնագիտական փորձ (ԵՎ, 135, 141):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

1. Կենսաբանություն

Հաշվի առնելով մարդու գեների ընդհանուր (25000-ին մոտ) քանակը՝ մուտացիաների գումարային քանակը փոքր թիվ չի կազմում:

....Վերլուծությունը ցույց է տալիս, որ ախոնդրոպլազայի գեների մոտ 20 %-ը չի փոխանցվում ծնողներից զավակներին, իսկ այդ գեների 80 %-ը դուրս է բերվում պոպուլյացիաներից: Այստեղից կարելի է հետևություն անել, որ ախոնդրոպլազան մեծ ազդեցություն չունի պոպուլյացիայի կառուցվածքի վրա:

....Մարդու արյան բջիջների կուլտիվացման ընթացքում տեղի է ունենում լեյկոցիտների բոլոր ձևերի քայքայում, բացառությամբ փոքր լիմֆոցիտների: Դա է պատճառը, որ ըստ էության, մի-տոտիկ քրոմոսոմների վերլուծության ժամանակ մենք գործ ունենք լիմֆոցիտների կուլտուրայի հետ (ԳԶ, ԱԿ, 66-67, 88):

2. Քիմիա

Կենսաբանական մաքրման սարքավորումները նպատակաուղղված չեն ջուրը կենսաբանական կայուն միացություններից մաքրելուն: Դրանց մաքրման փորձը ցույց է տալիս, որ կենսաբանական մաքրման եղանակներով հեռացվում են հիմնականում ուղեկցող աղտոտող միացությունները:

....Պետք է նկատի ունենալ, որ ձեռնարկությունները, որպես կանոն, թափոնաջրերն արտանետում են կոմունալ-կենցաղային ջրահեռացման համակարգեր, որոնց մաքրման վերջնական փուլն իրականացվում է թափոնաջրերի կենսաբանական մաքրման կայաններում (ԼՀ, ԳՓ, 9-10):

3. Աշխարհագրություն

Երկրի մակերևույթի և մթնոլորտի ջերմային հաշվեկշիռը՝ որպես միասնական ամբողջություն, հավասար է զրոյի: Այնպես որ Արեգակից ստացվող ջերմությունը Երկրի վրա չի կուտակվում: Այն, մասնակցելով աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող տարբեր պրոցեսների՝ վերջին հաշվով նորից անցնում է միջմոլորակային տարածություն:

....Քանի որ մթնոլորտը տաքանում է հիմնականում Երկրի մակերևույթից, հետևաբար, որպես կանոն, ըստ բարձրության մթնոլորտի՝ ջերմաստիճանը նվազում է:

....Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երկրագնդի տարբեր մասերում քամու ուղղությունը և հաճախականությունը խիստ տարբեր են: ...Քամին, օժտված լինելով էներգիայով, բնության մեջ կատարում է որոշակի աշխատանք: Քամահոսքի միջոցով քշվում-տարվում են ապարների մասնիկները, առա-

ջանում են ռելիեֆի որոշ ձևեր, ջրերում՝ ալիքավորում, ծովերում և օվկիանոսներում՝ հոսանքներ, տեղի է ունենում հողմային էրոզիա և այլն (ՎՊ, 17, 21, 32):

Յոթերորդ երկինք. գործածվում է երջանկություն, բարձրագույն երանություն արտահայտելու ժամանակ: Հին հունական փիլիսոփա Արիստոտելը (384-322 թ. մ. թ. ա.) կարծում էր, որ երկնային տարածությունը կառուցված է յոթ մասից, որոնց վրա հաստատված են աստղերն ու մոլորակները: Միջնադարում նույնպես եղել է այն կարծիքը, որ երկինքը բաղկացած է յոթ մասից, ընդ որում, յոթերորդ երկնքում եղել է երկնային թագավորությունը, ուր իշխել է միմիայն երջանկությունը (ՍԻ, 79):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

1. Մաթեմատիկա

Մաթեմատիկական կրթության բարելավման հարցերը մշտապես գտնվել են բոլոր զարգացած երկրների ուշադրության կենտրոնում: ....ԽՍՀՄ-ի և Արևմուտքի միջև սառը պատերազմի ավարտից հետո էապես փոքրացավ այդ երկրների ռազմաարդյունաբերական համալիրների կարևորագույն բաղադրիչների՝ մաթեմատիկա գիտության և մաթեմատիկական կրթության ֆինանսավորումը: Դա տեղի ունեցավ ոչ միայն պլանավորված տնտեսությունից շուկայականի անցած Ռուսաստանում, Հայաստանում և այլ երկրներում, այլև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և արևմտյան այլ երկրներում:

Նման բարդագույն իրավիճակում, որում հայտնվել էր մաթեմատիկական կրթությունը, անհրաժեշտ էր հաշվի առնել այդ հիմնախնդրի լուծման մանկավարժական, սոցիոլոգիական և հոգեբանական գործոնները:

….Սովորողների լեզվատրամաբանական մտածողության ձևավորման համար սկսած 7-րդ դասարանից՝ նախ և առաջ պետք է բացահայտել, որ մաթեմատիկայի «շենքի» կառուցումը կատարվում է ճիշտ նույն սխեմայով, նույն հաջորդականությամբ, ինչպես իրենք սկսել են, օրինակ, ուսումնասիրել հայոց լեզուն: ….Հաջորդիվ մենք կանդրադառնանք այդ հարցերի հանգամանալից դիտարկմանը: Այսպես, օրինակ, ցույց կտանք, որ մաթեմատիկական պնդման ցանկացած լեզվաքերականական ձևում պնդման պայմանի և եզրակացության (պահանջի) առանձնացման հարցն առավելապես մայրենի լեզվի, քան դպրոցական մաթեմատիկայի լեզվի հարց է (ԷԱ, 7, 35):

2. Ֆիզիկա

Մեխանիկայում «մեռյալ» կետ է համարվում այն դրությունը, երբ մեքենայի մեջ որևէ մաս մի պահ կանգ է առնում, և որպեսզի չստացվի խափանում, հակադիր ուժերի շնորհիվ վերացվում է այդ դրությունը, ու մեքենան աշխատում է անխափան: Այս երևույթը կոչվում է «շարժել մեռյալ կետից»: Փոխաբերական իմաստով «մեռյալ կետ» նշանակում է անգործունեություն, իսկ «շարժել մեռյալ կետից»՝ անել այնպիսի մի բան, որ գործը դուրս գա անգործունեության վիճակից (ՍԻ, 83):

Միկրոէլեկտրոնիկայի զարգացումը վերջին երկու տասնամյակում բերել է միկրոսխեմաներում տարրերի ինտեգրման

աստիճանի կտրուկ մեծացման, ընդ որում այդ աճը տարեցտարի տեղի է ունեցել էքսպոնենցիալ օրենքով և ուղեկցվել սխեմային տարրերի (առանձին էլեկտրոնային սարքերի) բնութագրական չափերի էքսպոնենցիալ նվազմամբ:

....Անհավասարակշիռ պայմաններում աճեցված պինդ լուծույթներում հաճախ առաջանում են որոշակի տիրույթներ (կլաստերներ), որոնք կարևոր դեր են խաղում լիցքակիրների շարժունության մեջ, քանի որ ուժեղ ցրման «կենտրոններ» են (ԷՂ, ՍՊ, 9, 19):

3. Ինֆորմատիկա

2000 թ. սկսած՝ «Windows» օպերացիոն համակարգն ամբողջովին հիմնված է «Unicode» կոդավորման ստանդարտի վրա: Բոլոր հիմնական ֆունկցիաները, որոնք ստեղծում են պատուհան, դուրս են բերում տեքստ, աշխատում են սիմվոլային տողերի հետ, սպասում են, որ իրենց «Unicode» սիմվոլային տողեր փոխանցվեն: Եթե որևէ «Windows» ֆունկցիայի «ANSI» սիմվոլային տող է փոխանցվում, ապա վերջինս նախ ձևափոխվում է «Unicode»-ի, հետո նոր փոխանցվում է օպերացիոն համակարգին: Սա տեղի է ունենում օգտագործողի համար աննկատ ձևով, բայց, իհարկե, հիշողության և ժամանակի լրացուցիչ ծախս է առաջացնում:

....Ֆայլերը հիմնարար դեր են խաղում տվյալների երկարատև պահպանման և կառավարման հարցում, ինչպես նաև ապահովում են միջծրագրային համագործակցության պարզագույն ձևը (ՍԱ, 7, 17):

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՔԻՄԻԱ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Թեմա 1

ա) Գործնական պարապմունքի թեմայի անվանում

Բառերի ձևաիմաստային խմբերը

բ) Հիմնական հասկացություններ, առանցքային հարցեր (միայն գործնական առարկաների համար)

Հոմանիշ բառեր. նույնանիշներ, համանիշներ, հոմանշային զույգեր (շարքեր), հոմանիշների ոճական արժեք: Հականիշ բառեր, իմաստային բևեռայնություն, հականշային զույգեր, հակադրական և ժխտական հականիշներ, հականշահոմանշային շարքեր, հականիշների ոճական արժեք: Համանուններ. բառային, քերականական և բառաքերականական համանուններ: Հարանուններ. բուն կամ իսկական հարանուններ և հարանվանումներ: Բառագործածություն:

գ) Գործնական պարապմունքի անցկացման մեթոդներ, այլև հնար և միջոց

Ինտերակտիվ զրույց[2], վարժություններ, առաջադրանքներ, վեբ-որոնում, տեքստային աշխատանք, հարցում, M-աձև աղյուսակ, համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացում:

դ) Գործնական պարապմունքի թեմային առնչվող ուսումնառության նյութեր և էլեկտրոնային նյութեր

Վարժություններ[3]

2 Ուսուցման առավել հին մեթոդներից է: Քննարկվում է նաև ժամանակակից մանկավարժական գիտության մեջ (զրույցի տեսակները՝ 1. ներածական, 2. նոր գիտելիքների հաղորդման, 3. ընդհանրացնող կամ ամրապնդող, 4. սփուգող-շփկող): Այս մեթոդով դասավանդողը նպատակաուղղված և վարպետորեն առաջադրված հարցերի միջոցով արթնացնում է սովորողների արդեն ունեցած գիտելիքներն ու կարողությունները, ինչպես նաև մղում նոր գիտելիքների ձեռքբերմանը՝ նպաստելով ինքնուրույն դատողություններ, եզրահանգումներ և ընդհանրացումներ կատարելուն (տե՛ս Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, «Վանատուր» ՍՊԸ տպ., 2008, էջ 41-44):

3 Ուսումնական գործողությունների բազմակի (մտավոր կամ պրակտիկ) կատարումներն ապահովում են թեմայի վերաբերյալ գիտելիքների յուրացումը, ամրապնդումը և բառապաշարի հարստացումը: Դասվում են ուսուցման պրակտիկ մեթոդների շարքը: Վարժությունների կատարման համար կարևոր են սովորողների գիտակցական մոտեցումը, կատարվելիք գործողությունների կանոնների իմացությունը և այլն: Վարժությունները, ըստ դասագործընթացի տարբեր փուլերի, լինում են նախապատրաստական, մարզողական, վերլուծական, կիրառական,

1. Տրված բառաշարքից ընտրեք և գրեք հոմանշային 10 զույգ:

Ազդր, արջնագռավ, կածուկ, սաղմնապարկ, եղջերուկ, հոդ, զիստ, քինքինածառ, աղվեսագի, ջրաթաղանթ, քլորասնդիկ, ընդերք, ոսկրախաղ, շեփորուկ, աստղակաթ, բնաշրջություն, աղիք, եղրևանի, տարրաբան, աստղալույս, սուլեմա, շրջափոխույթ:

2. Տրված բառաշարքից ընտրեք և գրեք հականշային 10 զույգ:

Անոսր, բերրիություն, մակընթացություն, տարասեռություն, անաղիք, տեղաբնիկ, ազգակից, խիտ, ցամաքային, անողնաշար, հյուսիս, մամռապատ, ընդգետնյա, անպտղություն, տեղատվություն, տարաշխարհիկ, նմանասեռություն, տարասեր, ջրային, հարավ, վերերկրյա, ողնաշարավոր:

3. Հետևյալ համանունները դասակարգեք ըստ եռաթև (Մ-աձև) աղյուսակի[4]:

ստեղծագործական և ամփոփիչ (հմմտ. Э. Г. Азимов, А. Н. Щукин, Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), М., Изд-во ИКАР, 2009, էջ 322-323):

4 Մեթոդական (փոխներգործուն) այս հնարը կիրառվում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքների ժամանակ: Երեք բաժնից բաղկացած աղյուսակ է, որը հիշեցնում է Մ տառը: Միևնույն հարցի երեք կողմերը համեմատելու՝ հակադրելու նպատակով է կիրառվում (հմմտ. երկթև կամ Т–աձև աղյուսակը, որը հիշեցնում է Т տառը և միևնույն հարցի երկու կողմերը համեմատելու՝ հակադրելու համար է կիրառվում) (տե՛ս Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան, նշվ. աշխ., էջ 69-70):

Ուլի-ուլի, անսեր-անսեր, արոս-արոս-արոս, բացատում-բացատում, արոր-արոր, ափ-ափ, տնկի-տնկի, բազուկ-բազուկ, ջրեր-ջրեր, բալ-բալ, բարակ-բարակ, գեղգեղանք-գեղգեղանք, ուլ-ուլ, քաղ-քաղ, գետին-գետին, ուռ-ուռ, որդի-որթի, գազ-գազ, երամակից-երամակից, գայլուկ-գայլուկ, թզի-թզի, կուզ-կուզ, տատրակ-տատրակ, սարդ-սարդ, հոտ-հոտ-հոտ, հորան-հորան, իրիկնացող-իրիկնացող, լեռնապար-լեռնապար, խավարում-խավարում, խոզուկ-խոզուկ, մարսեցի-մարսեցի, խորդ-խորդ-խորդ, մոր-մոր-մոր, ծագ-ծագ, ԱՍԵԱՆ-Ասիան, անոթ-անօդ, մորթ-մորթ, ցող-ցող-ցող, ծիրանի-ծիրանի, թաղ-թաղ, լուսնագնաց-լուսնագնաց:

Բառային	***Բառաքերակա-նական***	***Քերականական***
Նմուշ՝	*Նմուշ՝*	*Նմուշ՝*
բազուկ[1] – 1. թև, ձեռք՝ ուսից մինչև արմունկը, 2. ճյուղ, ոստ (բույսերի), 3. գետի ճյուղավորում, 4. լեռնաշղթայի ճյուղ, 5. բույսի կոթունի երկարությամբ անցնող ջիղը **բազուկ**[2] – ճակնդեղ	**բացատում**[1] – օրգանի անջատում՝ հեռացում **բացատում**[2] – *բացատ* գոյականի եզակի ներգոյականը	**ջրեր**[1] – *ջուր* գոյականի հոգնակին **ջրեր**[2] –*ջրել* բայի ըղձական անցյալի եզակի 3-րդ դեմքը

4. Բացատրեք տրված հարանունների իմաստային տարբերությունները: Բառաշարքը հարստացրեք ձեր մասնագիտությանն առնչվող հարանունական զույգերով:

Բնախույզ-բնախույս, մրիկ-մրրիկ, վաղորդայն-վաղորդյան, վարգ-վարք, այգաբաց-այգեբաց, ամոլ-ամուլ, սրում-սրացում, տարածություն-տարածք, ցեղական-ցեղային, մռմռալ-մրմռալ, մակարդ-մակարդակ, դողդոջուն-դողդոջյուն, թոթովել-թոթվել, կենսական-կենսաբանական, անոթ-անութ:

Նմուշ՝ *մրիկ* (բույսերի՝ հացաբույսերի սնկային հիվանդություն) – *մրրիկ* (ուժեղ քամի. փոթորիկ):

Ինքնուրույն աշխատանք[5]

Առաջին տարբերակ. աշխատանք լեզվաբանական բառարանով

1) Հ. Խ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարանից» (Ե., 1973) դուրս գրեք առնվազն յոթ այնպիսի բառեր, որոնք ունեն իրենց հոմանիշը և հականիշը:

2) Ըստ ձեր մասնագիտական բառապաշարի՝ կազմեք այդ բառերի հոմանշային և հականշային զույգերը՝ համակարգչային Microsoft Power Point կամ Google ներկայացման[6] միջոցով (մինչև 7 սահիկ) ցույց տալով առցանց ուսուցման հարթակում:

---

5 Ուսուցման անհատականացման առավել մշակված դրսևորումը սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է: Գոյություն ունեն սովորողների ինքնուրույն աշխատանքի տարբեր տեսակների տեխնոլոգիաներ (տես Г. К. Селевко, Энциклопедия образовательных технологий, Том 1, М., Народное образование, 2005, էջ 232-233):

6 Համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացումը (լեզվական իրողությունների) ուսուցման արդյունավետ միջոցներից է, որն ուսումնասիրվող նյութի շուրջ աշխատանքը դարձնում է առարկայական և հետաքրքիր, նպաստում սովորողների ինքնուրույնության խթանմանը և համակարգչային ծրագրեր կիրառելու հմտությունների զարգացմանը (տես Э. Г. Азимов, А. Н. Щукин, նշվ. աշխ., էջ 278: Б. Ф. Раджабов, Современные методы обучения студентов с использованием ИКТ в условиях Республики Таджикистан, Сборник научных статей по итогам международной научно-практической конференции "Наука нового времени: от идеи к результату" 18-19 августа 2017 года, Санкт-Петербург, Изд-во "КультИнформПресс", 2017, էջ 80):

Երկրորդ տարբերակ. հետազոտական աշխատանք

1) Կատարեք Վեբ-որոնում[7] (հղում. https://www.youtube.com)՝ ներկայացնելով հոմանիշ և հականիշ բառերի, նրանց բնորոշ առանձնահատկությունների վերաբերյալ որոնողական-հետազոտական աշխատանք:

2) Հոլովակը (օրինակ՝ Պ. Սևակի «Որդուս» բանաստեղծության ընթերցում. կարդում է Վոլոդյա Աբաջյանը) և ձեր վերլուծությունները ներբեռնեք առցանց ուսուցման հարթակ:

---

7 Վեբ-որոնում (Web-Quest) մեթոդով ուսուցման ժամանակ համացանցից (կայքեր, առցանց գրադարաններ և այլն) ձեռք են բերվում հետազոտության թեմայի վերաբերյալ տեղեկույթ և գիտելիքներ՝ գործնականում լուծելով առաջադիր հարցը: Մեթոդի կիրառումը հնարավոր է թե՛ անհատական հանձնարարությունների կատարման ժամանակ, թե՛ խմբային ուսուցման ընթացքում: Պահանջում է էլեկտրոնային եղանակով ստացված տեղեկույթի նկատմամբ ընտրողական վերաբերմունք, նպաստում նյութի բազմակողմանի ուսումնասիրությանը (աշխատանքի արդյունքները կարելի է ներկայացնել բանավոր ելույթով, համակարգչային ներկայացմամբ և այլն): Տվյալ մեթոդի կիրառումը նպաստում է սովորողների վերլուծական, տրամաբանական, քննադատական մտածողության զարգացմանը, համագործակցային կարողությունների ձևավորմանը և էլեկտրոնային միջոցների գործածության հմտությունների ձեռքբերմանը (տե՛ս Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան, նշվ. աշխ., էջ 18-21):

Տեքստային աշխատանք[8]

1.

ա) Արտահայտիչ ընթերցել հետևյալ տեքստային հատվածները:

բ) Ընտրել հինգ բառ՝ կազմելով յուրաքանչյուրի ***հոմանշային*** *և* ***հականշային զույգերը*** *(**շարքերը.** հականշություն հոմանշային զույգերի կամ շարքերի միջև):*

1. Կենսաբանություն

Կանանց օրգանիզմն ունի մենահատուկ առանձնահատկություններ շրջակա միջավայրի գործոնների ազդեցության նկատմամբ: Կանայք հիվանդանում են ոչ միայն այն հիվանդություններով, որոնցով տղամարդիկ են հիվանդանում, այլև մենահատուկ հիվանդություններով: Դա կապված է նրանց սեռի հետ: Կանանց օրգանիզմը բնութագրվում է ճարպի ավելի մեծ պարունակությամբ, ուր կարող են կուտակվել նշանակալից քանակով թունավոր, հիդրոֆոբ միացություններ (ԿԳ, ԾԱ, 104):

8Այս մեթոդը ենթադրում է թեմայի վերաբերյալ յուրացրած գիտելիքների կիրառում գործնականում: Տեքստի հիման վրա կատարվում է ուսումնասիրված լեզվական իրողության քննարկում որպես ինքնուրույն աշխատանք: Տեքստի ուսումնասիրության սկզբունքներն են լեզվաոճական, բովանդակային վերլուծությունները և անհատական ընկալման խթանումը: Տեքստի լեզվաոճական վերլուծության ընթացքում քննարկվում են նրանում ի հայտ եկող բառագիտական, քերականական (ձևաբանական և շարահյուսական) իրողությունները, ինչպես նաև ոճական-արտահայտչական միջոցները (տես Թ. Ջուհարյան, Հայոց լեզվի մեթոդիկա, գիրք 1-ին, Ե., «Լույս» հրատ., 1978, էջ 207: Э. Г. Азимов, А. Н. Щукин, նշվ. աշխ., էջ 303-304):

2. Քիմիա

«Կարգավորում» տերմինը վերաբերում է ազդեցությունների լայն շրջանակին, օրինակ՝ խթանում, արգելակում, այս կամ այն ախտանիշների զարգացում և այլն: Կենսաբանական ակտիվության ծայրահեղ դրսևորում է բիոցիդ ազդեցությունը: Լատիներենից թարգմանությամբ *բիոցիդ* նշանակում է «կյանք սպանող»: Բիոցիդները քիմիական նյութեր են, որոնք ստեղծված են որպես պայքարի միջոց վնասատու օրգանիզմների դեմ (ՆԴ, 5):

3. Աշխարհագրություն

Մթնոլորտային ճնշման փոփոխման պատճառը, ջերմաստիճանի փոփոխման հետևանքով պայմանավորված, օդի տեղաշարժն է մի վայրից մյուսը: Այդ տեղափոխությունները՝ արտահոսքը մի վայրից և ներհոսքը մյուս վայրը, կապված են ստորադիր մակերևույթից օդի անհավասարաչափ տաքացման հետ: Ընդունենք, որ երկրի մակերևույթի որոշ տարածք հարևան տարածքի համեմատ ջերմություն ավելի շատ է ստանում: Հասկանալի է, որ տարբեր չափով կտաքանա դրանց վրա գտնվող օդը: Ուժեղ տաքացող տարածքում կառաջանա օդի մասնիկների վերընթաց շարժում, և նրա վերին շերտում մասնիկների կուտակումից ճնշումը կբարձրանա, իսկ համեմատաբար սառը մակերևույթի վրա գտնվող օդում՝ նույն բարձրության վրա, ճնշումը կլինի ցածր: Այդպիսի պայմաններում տեղի կունենա օդի արտահոսք տաք օդի վերին շերտերից դեպի հարևան սառը օդի վերին շերտերը (ՎՊ, 29):

Նմուշ՝ *հիվանդություն-ախտ* (հոմանիշ բառեր)

հիվանդություն-առողջություն (հականիշ բառեր)

հիվանդություն, տկարություն, անառողջություն, ախտ, ցավ, ախտաժետություն (հզվդ.), *խոթություն* (հնց.), *հիվանդ-կախություն* (ժող.) – *առողջություն*, *առողջանդամություն, ողջություն, ողջանդամություն* (հականշություն հոմանշային շարքերի միջև):

2.

ա) Ներկայացնել հետևյալ հատվածներում ընդգծված բառերի (այլև բառաձևերի) ***համանունները՝*** *կազմելով այդօրինակ զույգեր (շարքեր)՝ իրենց իմաստներով հանդերձ:*

բ) Որպես նմուշ տրված համանունական զույգի անդամներով կազմել մեկական նախադասություն:

1. Կենսաբանություն

Սնկանման օրգանիզմները և սնկերն ընդգրկված են կորիզավոր՝ էուկարիոտ օրգանիզմների ինքնուրույն թագավորության մեջ: Հանդիպում են ամենուրեք՝ օդում, հողում, **ջրում:**

....Սնկերի բջջային թաղանթի կառուցվածքն ունի կարգաբանական նշանակություն: Բջիջը պատված է **բարդ** բաղադրություն ունեցող թաղանթով:

....Բջիջն օրգանիզմի հիմնական կառուցվածքային միավորն **է:**

....Կենդանի բջջի թաղանթի լարված **վիճակը** կոչվում է տուրգոր: Նրանով են պայմանավորված բույսերի նորմալ ֆիզիկական վիճակն ու առաձգականությունը: Տուրգորի շնորհիվ

ցողունը պահպանում է **իր** ուղղաձիգ դիրքը, **կրում** իր վրա տերևների զանգվածը:

....Բջիջը պլազմոլիզի վիճակից հանելու **համար** (դեպլազմոլիզ) անհրաժեշտ է այն տեղափոխել **ջրի** մեջ (ՍՆ, 24-25, 58, 62):

2. Քիմիա

Ամինաթթուների անալիզի մեթոդները հիմնականում հիմնված են նինհիդրինի **հետ** նրանց փոխազդեցության ռեակցիայի վրա, որն առաջարկել է Ռուէմանը 1911 թ.: Նինհիդրինը **կամ** տրիկետոհիդրինդենհիդրատը, փոխազդելով ամինաթթվի հետ, վերակագնվում է մինչև դիկետոքսիհիդրինդենի, **իսկ** ամինաթթուն դեզամինացման արդյունքում միջանկյալ իմինաթթվի առաջացմամբ վերածվում է α-կետոթթվի և ամոնիակի: Կետոթթուն **իր** հերթին դեկարբոքսիլացվում է՝ առաջացնելով ալդեհիդ՝ ելային ամինաթթվի համեմատությամբ մեկ ածխածնի ատոմի պակաս պարունակությամբ (ՀՍ, ԱՄ, 3):

3. Աշխարհագրություն

Տեղագրությունը երկրի **մասին** գիտություններից մեկն **է,** որն զբաղվում է **ցամաքի** մակերևույթի երկրաչափական ուսումնասիրությամբ՝ երկրաչափական տեսակետից: Այդ ուսումնասիրությունն իրականացվում է դաշտային և գրասենյակային աշխատանքների **բարդ** զուգակցմամբ՝ հանույթով, որի արդյունքում ստեղծվում են տեղագրական քարտեզներ, հատակագծեր և պրոֆիլներ: ....Տեղագրությունը սերտորեն կապված է երկրի մասին մեկ այլ գիտության՝ գեոդեզիայի

հետ, որը հունարենից հայերեն թարգմանությամբ նշանակում է երկրաբաշխություն: Գեոդեզիան զբաղվում է երկրի **ձևի** ու չափերի, նրա արտաքին տիեզերական ձգողականության դաշտի ուսումնասիրությամբ, երկրի մակերևույթի առանձին **կետերի** կոորդինատների մեկ միասնական **համակարգում** որոշման մեթոդներով և այլն (ՎՄ, 3):

Նմուշ՝ *մասին*[1] – **մաս** գոյականի եզակի որոշյալ տրականը
մասին[2] – *վերաբերյալ, նկատմամբ:*

3.
ա) Արտահայտիչ ընթերցել հետևյալ հատվածները:
բ) Փակագծերում տրված ***հարանունական զույգերից*** *ընտրել տվյալ խոսքային միջավայրին համապատասխանող բառը:*

1. Կենսաբանություն

Նյարդալեզվաբանությունն առաջացել է նյարդաբանության և լեզվաբանության հատման կետում և ուսումնասիրում է լեզվական *(կառույցի, կառուցվածքի)* ու խոսքի հարաբերակցությունն ուղեղի ենթագիտակցական գործունեության հետ: ….Այդ գիտաճյուղի զարգացման մակարդակից ելնելով՝ *(պահանջ, պահանջմունք)* է դրվում ուսումնասիրելու լեզվի տարբեր բաղադրիչների համապատասխանությունը մարդու կենտրոնական նյարդային համակարգի *(գործունեության, գործողության)* ու նրա գոտիների կատարած աշխատանքին (ԼԽ, 13):

2. Քիմիա

Դեռևս մ. թ. ա. 2-րդ հազարամյակում արծաթը շատ *(հազվագյուտ, հազվադեպ)* մետաղ էր և գնահատվում էր ոսկուց էլ թանկ:

....Ցինկի արտադրաքանակի մոտ կեսն օգտագործվում է երկաթը կերամաշումից *(պաշտպանելու, պահպանելու)* համար և արույրի արտադրության մեջ: ....Ի տարբերություն ցինկայինի՝ կադմիումային ծածկույթներն իրերի մեխանիկական դեֆորմացիայի ժամանակ չեն շերտանջատվում, ինչպես նաև *(պաշտպանում, պահպանում)* են կայունությունը ծովային ջրում և օդի մեծ խոնավության դեպքում:

....Սնդիկը ջրում *(չլուծվող, չլուծարվող)* մետաղական փայլով ծանր հեղուկ է (ՌԱԱ, 35, 142-144):

3. Աշխարհագրություն

Քարտեզների դասակարգման համար հատուկ *(բարդույթ, բարդություն)* են ներկայացնում այն երևույթները, որոնք չեն կարող ամբողջովին *(վերաբերել, վերաբերվել)* որևէ ոլորտի, այլ պատկանում են երկու կամ ավելի ոլորտների:

Հին քարտեզագրական *(պատկերումներին, պատկերացումներին)* հատուկ էր տեղանքի *(նկարային, նկարչական)* փոխանցումը՝ լեռների, բուսականության, բնակավայրերի և այլ օբյեկտների հեռանկարային պատկերների լայն կիրառմամբ:

....Այդ փաստը՝ անցումն անհատական բնութագրից ընդհանրական *(հասկացությանը, հասկացողությանը),* նշանակում էր պայմանական նշանակումների ներմուծում, որոնք հասկանալու համար անհրաժեշտ եղավ կատարել նշանների մեկնաբանում (ՀԲ, ՎՄ, 20, 86-87):

Կապակցված խոսք

Առաջին տարբերակ. ակնարկ

Գրել գեղարվեստահրապարակախոսական ժանրի ստեղծագործություն (ակնարկ) ձեր մասնագիտության շրջանակներում նախընտրելի որևէ գործչի, երախտավորի կամ իրադարձության մասին՝ պահպանելով հետևյալ պահանջները.

ա) իրապատում լինելը, ճշմարտացիությունը, ճշգրտությունը,

բ) բնութագրականն ու տիպականը ներկայացնելը,

գ) հոգեբանական պատճառաբանվածությունը,

դ) լեզվական-արտահայտչական և գեղարվեստական միջոցների կիրառությունը,

ե) բառերի ձևաիմաստային խմբերի ոճական հնարավորությունների հաշվառումը,

զ) ժամանակագրությունը, փաստարկումը և ապացուցումը:

Երկրորդ տարբերակ. ստեղծագործական շարադրություն

Հյուսել կապակցված խոսք (ստեղծագործական շարադրություն) տրված թեմաներից մեկով.

1. Մանկավարժությունը՝ կենսակերպ, կոչում, շնորհ և վայելք

2. Ֆիզիկական աշխարհ-մարդկություն-կենդանական աշխարհ փոխմիասնության իմ բանաձևը

3. Բնությունը, քիմիան և սերը:

Պահպանել հետևյալ պահանջները.

ա) անհրաժեշտ կառուցվածք. սկիզբ, հիմնամաս և ավարտ,

բ) ուղղագրական և կետադրական կանոնների պահպանում,

գ) բառային կրկնությունների, բառաձևերի գործածության սխալների, ավելորդ բառերի, ինչպես նաև ոճականորեն, քերականորեն և տրամաբանորեն սխալ ձևակերպումների բացակայություն,

դ) խոսքի պատկերավորություն, հեղինակային վերաբերմունքի առկայություն և հուզական ներգործություն,

ե) բառերի ձևաիմաստային խմբերի ոճական հնարավորությունների հաշվառում,

զ) խմբագրական աշխատանք կատարելուց հետո արտահայտիչ ընթերցանությամբ ներկայացում ողջ լսարանին:

ե) Ստուգման ենթակա հարցեր և առաջադրանքներ[9] (Հետադարձ կապի ապահովում և ստուգում/գնահատում)

1. Որո՞նք են բառերի ձևաիմաստային խմբերը: Լեզվական (ձևաիմաստային) ի՞նչ յուրահատկություններով է պայմանավորված դրանց տարբերակումը:
2. Որո՞նք են հոմանիշ բառերը և ի՞նչ ոճական առանձնահատկություններ են դրսևորում խոսքում:

9 Հարցում մեթոդի կիրառումը կարևոր է քննարկված նյութի վերաբերյալ ձեռք բերված գիտելիքների ստուգման և ամրապնդման համար: Բանավոր կամ գրավոր հարցադրումներն ունեն թեմայի յուրացման գործընթացը վերահսկող և գնահատող նշանակություն:
Ուսուցման պրակտիկ մեթոդների շարքն են դասվում առաջադրանքները, որոնք նպաստում են ուսումնասիրվող նյութի գործնական յուրացմանը, սովորողների վերլուծական մտածողության և ինքնուրույն աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացմանը: Առաջադրանքների իրականացման համար անհրաժեշտ է կատարվելիք գործողությունների կանոնների իմացություն (տես Э. Г. Азимов, А. Н. Щукин, նշվ. աշխ., էջ 70):

3. Ինչ տեսակներ ունեն հոմանիշները:
4. Ներկայացնել հոմանիշների իմաստային և ձևաբանական դասակարգումը ժամանակակից հայերենում՝ բերելով հոմանշային զույգերի (կամ շարքերի) օրինակներ:
5. Այդօրինակ զույգերից (շարքերից) մեկի բոլոր անդամներով առանձնակի կազմել նախադասություններ՝ ըստ մասնագիտական ուղղվածության:
6. Որո՞նք են հականիշ բառերը և ի՞նչ ոճական առանձնահատկություններ են դրսևորում խոսքում:
7. Ինչպիսի՞ հականիշներ կան:
8. Բազմիմաստությունն ու հոմանշությունը, այլև բազմիմաստությունն ու հականշությունն ի՞նչ փոխհարաբերություններ ունեն:
9. Ինչ ընդհանրություններ և տարբերություններ ունեն հոմանիշ և հականիշ բառերը:
10. Ներկայացնել համանունների դասակարգումը:
11. Որո՞նք են ժամանակակից հայերենի բառային համանունները:
12. Բերել բառային համանունների օրինակներ: Այդ կարգի զույգերից (կամ շարքերից) մեկի բոլոր անդամներով կազմել առանձին նախադասություններ՝ ըստ մասնագիտական ուղղվածության:
13. Ներկայացնել բառաքերականական և քերականական համանունների երեքական օրինակներ:
14. Որո՞նք են հարանունները:
15. Նշել հարանունների տեսակները՝ բերելով համապատասխան օրինակներ: Յուրաքանչյուր տեսակի հարանունական զույգերի անդամներով կազմել մեկական նախադասություն՝ ըստ մասնագիտական ուղղվածության:

Թեմայի գնահատում (անդրադարձ)

Ընթացիկ գնահատում. վերլուծական աշխատանք. բառագիտական (իմաստաբանական) վերլուծություններ՝ ըստ մասնագիտական ուղղվածության:

Բառարանային աշխատանք (ինքնուրույն աշխատանք լեզվաբանական բառարաններով):

Տեքստային աշխատանք՝ ըստ մասնագիտական ուղղվածության:

Արտահայտիչ ընթերցանություն:

Հետադարձ կապ՝ բանավոր վերլուծություն:

Գնահատման թերթիկ: Հարցաթերթեր:

Կապակցված խոսք. ստեղծագործական շարադրություն:

Մասնակցություն. հետադարձ կապ՝ գրավոր վերլուծություն:

Քննարկվող հարցերին տրվող պատասխանների գնահատում:

Քննարկման արդյունքների ամփոփում:

զ) Հիմնական և հանձնարարելի գրականություն

1. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու: Բառագիտություն, Ե., «Զանգակ-97» հրատ., 2007:
2. Բադիկյան Խ. Գ., Ճիշտ խոսենք հայերեն (լեզվական նորմա). հայերենում գործածվող օտար բառերի բացատրական բառարան, Ե., «Լույս» հրատ., 2012:
3. Բեդիրյան Պ. Ս., Հայ լեզուն և մեր խոսքը. գրական արևելահայերեն խոսքի ուղեցույց, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2007:
4. Գյուրջինյան Դ. Ս., Հեքեքյան Ն. Հ., Հայոց լեզու. գործնական աշխատանքների ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Ե., «Ասողիկ» հրատ., 2006:

5. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 2007:
6. Խալաթյան Գ. Լ., Ամիրջանյան Ս. Հ., Միրումյան Մ. Վ., Թելադրության բնագրերի ժողովածու (տերմինաբանական բառարանով), Ե., «Զանգակ» հրատ., 2012:
7. Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., «Զանգակ-97» հրատ., 2008:
8. Համբարձումյան Վ. Գ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2019:
9. Մարության Ա. Ա., Հայոց լեզվի ոճաբանության գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե., «Զանգակ-97» հրատ., 2002:
10. Միրումյան Մ. Վ., Հայոց լեզու. տեսական և գործնական դասընթաց (Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), Ե., «Զանգակ» հրատ., 2012:
11. Սողոմոնյան Մ. Ռ., Հայոց լեզվի գործնական աշխատանքներ (ոչ մասնագիտական ֆակուլտետների համար), Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Թեմա 1

ա) Գործնական պարապմունքի թեմայի անվանում

Բառերի ձևաիմաստային խմբերը

բ) Հիմնական հասկացություններ, առանցքային հարցեր (միայն գործնական առարկաների համար)

Հոմանիշ բառեր. նույնանիշներ, համանիշներ, հոմանշային զույգեր (շարքեր), հոմանիշների ոճական արժեք: Հականիշ բառեր, իմաստային բևեռայնություն, հականշային զույգեր, հակադրական և ժխտական հականիշներ, հականշահոմանշային շարքեր, հականիշների ոճական արժեք: Համանուններ. բառային, քերականական և բառաքերականական համանուններ: Հարանուններ. բուն կամ իսկական հարանուններ և հարանվանումներ: Բառագործածություն:

գ) Գործնական պարապմունքի անցկացման մեթոդներ, այլև հնար և միջոց

Ինտերակտիվ զրույց, վարժություններ, առաջադրանքներ, վեբ-որոնում, տեքստային աշխատանք, հարցում, Մ-ածև աղյուսակ, համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացում:

դ) Գործնական պարապմունքի թեմային առնչվող ուսումնառության նյութեր և էլեկտրոնային նյութեր

Վարժություններ

1. Տրված բառաշարքից ընտրեք և գրեք հոմանշային 10 զույգ:

Առաքինի, ըմբռնել, պակասամիտ, հոգետանջ, անհատ, հայրենաբաղձություն, պարկեշտ, թանձրամիտ, կռահել, չարակսկիծ, բնավորություն, հոգի, ջղայնացում, նրբազգաց, ներաշխարհ, խառնվածք, դատողություն, անձնավորություն, ընկերային, նյարդայնացում, մտածողություն, հասարակական:

2. Տրված բառաշարքից ընտրեք և գրեք հականշային 10 զույգ:

Համբերազուրկ, փոփոխամիտ, տխմար, մելամաղձություն, երևակայածին, համակրանք, համադրություն, հավատավոր, տագնապախռով, հանդուրժամիտ, անփույթ, անխաբուսիկ,

խելամիտ, ամբարտավան, ուրախություն, վճռականություն, հակադրություն, վճռալից, անդավանանք, անհաստատակամություն, հանգիստ, հակակրանք:

3. Հետևյալ համանունները դասակարգեք ըստ եռաթև (Մ-ածև) աղյուսակի:

Չկամ-չկամ, աղերս-աղերս, սիրելիս-սիրելիս, անարգել-անարգել, բաղձանք-բաղձանք, անել-անել, ստեր-ստեր, դաս-դաս, դատել-դատել, կամ-կամ, եղկելի-եղկելի, գիտակից-գիտակից, ըղձանք-ըղձանք, հույլ-հույլ, կանխազգաց-կանխազգաց, խնդիր-խնդիր, պատվեր-պատվեր, վայելել-վայելել:

Բառային	***Բառաքերա-կանական***	***Քերականական***
Նմուշ՝	*Նմուշ՝*	*Նմուշ՝*
դաս[1] – 1. դասաժամ, 2. ուսումնական պարապմունք, 3. խրատ **դաս**[2] – հասարակական խումբ, խավ, դասակարգ	**գիտակից**[1] – 1. գիտակցող, 2. լրջմիտ **գիտակից**[2] – *գիտակ* գոյականի եզակի բացառականը	**սիրելիս**[1] –*սիրելի* ածականը՝ *-ս* հոդով **սիրելիս**[2]–*սիրել* բայի համակատար դերբայը

4. Բացատրեք տրված հարանունների իմաստային տարբերությունները: Բառաշարքը հարստացրեք ձեր մասնագիտությանն առնչվող հարանունական զույգերով:

Գորով-կորով, հուզում-հուզմունք, զգացում-զգացմունք, մտածում-մտածմունք, հասկացություն-հասկացողություն, պահանջ-պահանջմունք, զգացողություն-զգացում, զգուշություն-զգուշավորություն, խոստանալ-խոստովանել, խտրություն-խտրականություն, հաղթանակել-հաղթահարել, հիմնվել-հիմնավորվել, նկարագիր-նկարագրություն, նուրբ-նրբանկատ, պատրաստակամություն-պատրաստականություն, սկզբուն-քորեն-սկզբունքայնորեն, տարբերել-տարբերակել, տարորոշել-տարրորոշել, փորձություն-փորձառություն, քննել-քննարկել, վրդովել-վրդովվել, հոգեկան-հոգեբանական, սոցիալական-սոցիոլոգիական:

Նմուշ՝ *զգացողություն* (զգալու կարողություն) - *զգացում* (զգալու կարողության արտահայտությունը՝ իրացումը):

Ինքնուրույն աշխատանք

Առաջին տարբերակ. աշխատանք լեզվաբանական բառարանով

1) Հ. Խ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարանից» (Ե., 1973) դուրս գրեք առնվազն յոթ այնպիսի բառեր, որոնք ունեն իրենց հոմանիշը և հականիշը:

2) Ըստ ձեր մասնագիտական բառապաշարի՝ կազմեք այդ բառերի հոմանշային և հականշային զույգերը՝ համակարգչային Microsoft Power Point կամ Google ներկայացման միջոցով (մինչև 7 սահիկ) ցույց տալով առցանց ուսուցման հարթակում:

Երկրորդ տարբերակ. հետազոտական աշխատանք

1) Կատարեք Վեբ-որոնում (հղում. https://www.youtube.com)՝ ներկայացնելով հոմանիշ և հականիշ բառերի, նրանց բնորոշ առանձնահատկությունների վերաբերյալ որոնողական-հետազոտական աշխատանք:

2) Հոլովակը (օրինակ՝ Պ. Սևակի «Որդուս» բանաստեղծության ընթերցում. կարդում է Վոլոդյա Աբաջյանը) և ձեր վերլուծությունները ներբեռնեք առցանց ուսուցման հարթակ:

Տեքստային աշխատանք

1.

ա) Արտահայտիչ ընթերցել հետևյալ տեքստային հատվածները:

բ) Ընտրել հինգ բառ՝ կազմելով յուրաքանչյուրի ***հոմանշային*** *և* ***հականշային զույգերը*** *(**շարքերը.** հականշություն հոմանշային զույգերի կամ շարքերի միջև):*

1. Կրթության հոգեբանություն

Կառավարչի գործունեությունում էական նշանակություն ունի նրա բարձր աշխատունակությունը՝ երկար ժամանակով աշխատանքը բարձր արդյունավետությամբ կատարելու ընդունակությունը: Այս հատկությունը պահանջում է ֆիզիոլոգիական և հոգեբանական ցուցանիշների բարձր արտահայտվածություն: Որպես կամային հատկանիշ կարևոր է անձի կայունությունը, որը դրսևորվում է գիտակցաբար դրված նպատակին հասնելու համառ ձգտման մեջ: Այս հատկությունը կարելի է զարգացնել գործունեության ընթացքում, որն արտահայտվում է ոչ միայն աշխատանքային գործընթացում, այլ նաև նրա կենսագործունեության մեջ (ԱԼ, 259):

2. Սոցիոլոգիա

«Թշնամի» հասկացությունը թույլ է տալիս անձնավորել չարը, ինչպես «բարեկամը»՝ բարին: «Թշնամի-բարեկամ» մասնավոր տարբաժանումից կարելի է անցնել ավելի ընդհանուր՝ «յուրա-

յին-օտար» տարբաժանմանը: Փիլիսոփայական այս ընդդիմության գոյությունն ընդունելով հանդերձ՝ մարդն այնուամենայնիվ չի կարողանում տեսական մակարդակում սահմանել, թե որն է յուրայինը, և որը՝ օտարը: Իսկ ամենօրյա կյանքում մենք սեփականը, յուրայինը տարբերում ենք օտարից, բարին՝ չարից, երբեմն նույնիսկ բոլորովին անսպասելի կերպով, ինչպես, օրինակ, այն դեպքում, երբ յուրային կարող է դառնալ մի ինչ-որ պատահական մարդ, իսկ օտար՝ հարազատ հայրը (ՂԱ, 24):

Նմուշ՝ *գիտակցաբար-դատողաբար* (հոմանիշ բառեր)

գիտակցաբար-անգիտակցորեն (հականիշ բառեր)

գիտակցաբար, գիտակցապես, գիտակցականորեն, բանականորեն, բանականաբար, բանականապես, տրամաբանորեն, տրամաբանաբար, տրամաբանապես, դատողաբար, խելացի, խելացիաբար, խելացիորեն – անգիտակցորեն, անգիտակցաբար, անգիտակցապես, բնազդաբար, բնազդորեն, ինքնաբերաբար, ինքնաբերապես, ինքնաբերորեն, մեքենաբար, մեքենայնաբար, մեքենայնապես, մեքենայնորեն, ենթագիտակցաբար, ինքնին (հականշություն հոմանշային շարքերի միջև):

2.

ա) Ներկայացնել հետևյալ հատվածներում ընդգծված բառերի (այլև բառաձևերի) ***համանունները՝*** *կազմելով այդօրինակ զույգեր (շարքեր)՝ իրենց իմաստներով հանդերձ:*

բ) Որպես նմուշ տրված համանունական շարքի անդամներով կազմել մեկական նախադասություն (համանուններից մեկի

բազմիմաստության համար նշել իմաստային իրացումը տվյալ կիրառությամբ):

1. Կրթության հոգեբանություն

Եթե **դատում** ենք ըստ այնմ, որ լեզուն մարդկային գործունեության ընթացքում առաջ եկած երևույթ **է,** ապա նկատում ենք, որ այն սերտ առնչություն ունի **անհատի** հոգեկան պատկերացումների և մտավոր կարողություններ **հետ:**

....Խոսքի գործընթացը (պրոցեսը), արտահայտության մեջ, ընդամենը ֆիզիկական երևույթ է, սակայն իր խորքում այն արդյունք է հոգեկան-մտածական **բարդ** և յուրօրինակ, անկրկնելի երևույթների (գործողությունների):

....Ուսումնասիրելով անհատի (հանրության) բանավոր կամ գրավոր խոսքը՝ գաղափար ենք կազմում, պատկերացում ենք ունենում այդ նույն անհատի (հանրության) վարքի վերաբերյալ, որովհետև ինչպես որ լեզուն ունի հոգեբանական հիմքեր, այնպես էլ վարքը սնվում է **իր** լեզվաբանական հիմքերից (ՎՀԼ, 26, 54-56):

2. Սոցիոլոգիա

Մարդկային գործունեությունն ապահովող ինտելեկտն **իր** գենեզիսով և հիմնական գործառույթներից մեկով մարդկային ագրեսիայի և ապակառուցողական գործունեության գործիք **է**:

....Վաղ ժամանակներից սկսած՝ նկատելի է «մենք-նրանք» հակադրությունը, որտեղ «մենք»-ը յուրայինների **մի** ինչ-որ հանրույթ է՝ օժտված մարդկային բարձր հատկություններով ու որակներով, **իսկ** «նրանք»-ը՝ ոչ մարդ «օտարներ»:

....Մարդկության պատմության մեջ կարելի է գտնել բազում օրինակներ, երբ մարդիկ ոչնչացնում էին այլ մարդկանց միայն այն բանի **համար,** որ վերջիններս տարբերվում էին իրենցից մշակութային հարաբերություններում, **կրում** էին այլ մշակութային նորմեր, արժեքներ, կանոններ և այլն:

....Ցանկացած իրավիճակում մարդը ձգտում է արդյունավետ վարք դրսևորելուն: Իհարկե, չի բացառվում, որ իր կատարած որոշ գործողություններ նա կարող է որակել որպես ոչ ճիշտ, սխալ, **ինչը** կապված է համապատասխան գործողություններից հետո ակնկալվող արդյունքի չարդարացվածության **կամ** կյանքի կողմնորոշիչների փոփոխման **հետ** (ՂԱ, 12, 14, 19, 23):

Նմուշ՝ *մի*[1] – արգելական հրամայականի բառ-մասնիկ

մի[2] – 1. մեկ, 2. համանման, միատեսակ, 3. միասնական, միաբանված, 4. այնպիսի, *5. ինչ-որ*

մի[3] – եվրոպական երաժշտության մեջ ութնյակի 3-րդ ձայնաստիճանը և համապատասխան ձայնանիշը:

3.

ա) Արտահայտիչ ընթերցել հետևյալ հատվածները:

բ) Փակագծերում տրված ***հարանունական զույգերից*** *ընտրել տվյալ խոսքային միջավայրին համապատասխանող բառը:*

1. Կրթության հոգեբանություն

Սոցիալ-հոգեբանական թրենինգի ժամանակ ամեն ինչ կատարվում է հատուկ տարածաժամանակային կտրվածքով. ձևավորվում է որոշակի ստեղծագործական մթնոլորտ, ինչպես նաև դրսևորվում է *(պատրաստակամություն, պատրաստա-*

կանություն), (որպիսի, որպեսզի) մասնակիցը դուրս գա սովորականի շրջանակներից և գործի ոչ կաղապարային ձևով: Սոցիալ-հոգեբանական թրենինգն այսօր *(լուծում, լուծարում)* է մի շարք խնդիրներ՝ կիրառվելով տարբեր ոլորտներում (ԼՎ, 174):

2. Սոցիոլոգիա

Պետական շատ ծառայություններ և գործիքներ, որոնք նպաստում են *(քաղաքական, քաղաքացիական)* մասնակցությանը, այժմ արդեն հասանելի են առցանց: *(Թվային, թվական)* համեմատություններն ապահովում են *(թվային, թվական)* ընդգրկվածություն և մասնակցություն: Բացի դրանից, սպասարկման ոլորտն էլ ենթարկվելու է արմատական փոփոխությունների, ինչը կհանգեցնի մարդկային գործոնի ավելացմանը: Նույնը *(վերաբերում, վերաբերվում)* է նաև առցանց կրթությանը, որն առաջարկում է բազում հնարավորություններ, բայց նաև նվազեցնում է մարդկային գործոնը, որը կարևոր է շատ սովորողների համար (ՆՓ, 16-17):

Իրավացի կլինենք, եթե ասենք, որ այն դեպքում, երբ սոցիոլոգիան ախտորոշում է սոցիալական հիվանդությունները, սոցիալական աշխատանքը բուժում է դրանցից: Անգամ գիտութաբանության նորկանտական *(ավանդույթների, ավանդությունների)* համատեքստում տեսանելի է սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի նման կապը: ....Սոցիոլոգիային առնչվող մասնագիտական գրականության մեջ երբեմն կարելի է հանդիպել «կիրառական սոցիոլոգիա» *(հասկացությանը, հասկացողությանը),* որն իրավամբ ավելի շատ վերագրելի է սոցիալական աշխատանքին, քան թե այն բովանդակությանը, որն արտահայտում են այդ բառով (ԱԽՍ, 50, 55):

Կապակցված խոսք

Առաջին տարբերակ. ակնարկ

Գրել գեղարվեստահրապարակախոսական ժանրի ստեղծագործություն (ակնարկ) ձեր մասնագիտության շրջանակներում նախընտրելի որևէ գործչի, երախտավորի կամ իրադարձության մասին՝ պահպանելով հետևյալ պահանջները.

ա) իրապատում լինելը, ճշմարտացիությունը, ճշգրտությունը,
բ) բնութագրականն ու տիպականը ներկայացնելը,
գ) հոգեբանական պատճառաբանվածությունը,
դ) լեզվական-արտահայտչական և գեղարվեստական միջոցների կիրառությունը,
ե) բառերի ձևաիմաստային խմբերի ոճական հնարավորությունների հաշվառումը,
զ) ժամանակագրությունը, փաստարկումը և ապացուցումը:

Երկրորդ տարբերակ. ստեղծագործական շարադրություն

Հյուսել կապակցված խոսք (ստեղծագործական շարադրություն) տրված թեմաներից մեկով.

1. *Մանկավարժությունը՝ կենսակերպ, կոչում, շնորհ և վայելք*
2. *Մարդկային հոգեաշխարհը՝ փիեզերքում մի փիեզերք*
3. *Կյանքի հորձանուտում սոցիալական արդարության իմ որոնումները:*

Պահպանել հետևյալ պահանջները.

ա) անհրաժեշտ կառուցվածք. սկիզբ, հիմնամաս և ավարտ,

բ) ուղղագրական և կետադրական կանոնների հաշվառում,

գ) բառային կրկնությունների, բառաձևերի գործածության սխալների, ավելորդ բառերի, ինչպես նաև ոճականորեն, քերականորեն և տրամաբանորեն սխալ ձևակերպումների բացակայություն,

դ) խոսքի պատկերավորություն, հեղինակային վերաբերմունքի առկայություն և հուզական ներգործություն,

ե) բառերի ձևաիմաստային խմբերի ոճական հնարավորությունների հաշվառում,

զ) խմբագրական աշխատանք կատարելուց հետո արտահայտիչ ընթերցանությամբ ներկայացում ողջ լսարանին:

ե) Ստուգման ենթակա հարցեր և առաջադրանքներ (Հետադարձ կապի ապահովում և ստուգում/գնահատում)

1. Որո՞նք են բառերի ձևաիմաստային խմբերը: Լեզվական (ձևաիմաստային) ի՞նչ յուրահատկություններով է պայմանավորված դրանց տարբերակումը:
2. Որո՞նք են հոմանիշ բառերը և ի՞նչ ոճական առանձնահատկություններ են դրսևորում խոսքում:
3. Ի՞նչ տեսակներ ունեն հոմանիշները:
4. Ներկայացնել հոմանիշների իմաստային և ձևաբանական դասակարգումը ժամանակակից հայերենում՝ բերելով հոմանշային զույգերի (կամ շարքերի) օրինակներ:
5. Այդօրինակ զույգերից (շարքերից) մեկի բոլոր անդամներով առանձնակի կազմել նախադասություններ՝ ըստ

մասնագիտական ուղղվածության:

6. Որո՞նք են հականիշ բառերը և ի՞նչ ոճական առանձնահատկություններ են դրսևորում խոսքում:
7. Ինչպիսի՞ հականիշներ կան:
8. Բազմիմաստությունն ու հոմանշությունը, այլև բազմիմաստությունն ու հականշությունն ի՞նչ փոխհարաբերություններ ունեն:
9. Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ ունեն հոմանիշ և հականիշ բառերը:
10. Ներկայացնել համանունների դասակարգումը:
11. Որո՞նք են ժամանակակից հայերենի բառային համանունները:
12. Բերել բառային համանունների օրինակներ: Այդ կարգի զույգերից (կամ շարքերից) մեկի բոլոր անդամներով կազմել առանձին նախադասություններ՝ ըստ մասնագիտական ուղղվածության:
13. Ներկայացնել բառաքերականական և քերականական համանունների երեքական օրինակներ:
14. Որո՞նք են հարանունները:
15. Նշել հարանունների տեսակները՝ բերելով համապատասխան օրինակներ: Յուրաքանչյուր տեսակի հարանունական զույգերի անդամներով կազմել մեկական նախադասություն՝ ըստ մասնագիտական ուղղվածության:

Թեմայի գնահատում (անդրադարձ)

Ընթացիկ գնահատում. վերլուծական աշխատանք. բառագիտական (իմաստաբանական) վերլուծություններ՝ ըստ մասնագիտական ուղղվածության:

Բառարանային աշխատանք (ինքնուրույն աշխատանք լեզվաբանական բառարաններով):

Տեքստային աշխատանք՝ ըստ մասնագիտական ուղղվածության:

Արտահայտիչ ընթերցանություն:

Հետադարձ կապ՝ բանավոր վերլուծություն:

Գնահատման թերթիկ: Հարցաթերթեր:

Կապակցված խոսք. ստեղծագործական շարադրություն:

Մասնակցություն. հետադարձ կապ՝ գրավոր վերլուծություն:

Քննարկվող հարցերին տրվող պատասխանների գնահատում:

Քննարկման արդյունքների ամփոփում:

զ) Հիմնական և հանձնարարելի գրականություն

1. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու: Բառագիտություն, Ե., «Զանգակ-97» հրատ., 2007:
2. Բադիկյան Խ. Գ., Ճիշտ խոսենք հայերեն (լեզվական նորմա). հայերենում գործածվող օտար բառերի բացատրական բառարան, Ե., «Լույս» հրատ., 2012:
3. Բեդիրյան Պ. Ս., Հայ լեզուն և մեր խոսքը. գրական արևելահայերեն խոսքի ուղեցույց, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2007:
4. Գյուրջինյան Դ. Ս., Հեքեքյան Ն. Հ., Հայոց լեզու. գործ-

նական աշխատանքների ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Ե., «Ասողիկ» հրատ., 2006:
5. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 2007:
6. Խալաթյան Գ. Լ., Ամիրջանյան Ս. Հ., Միրումյան Մ. Վ., Թելադրության բնագրերի ժողովածու (տերմինաբանական բառարանով), Ե., «Զանգակ» հրատ., 2012:
7. Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., «Զանգակ-97» հրատ., 2008:
8. Համբարձումյան Վ. Գ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2019:
9. Մարության Ա. Ա., Հայոց լեզվի ոճաբանության գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե., «Զանգակ-97» հրատ., 2002:
10. Միրումյան Մ. Վ., Հայոց լեզու. տեսական և գործնական դասընթաց (Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), Ե., «Զանգակ» հրատ., 2012:
11. Սողոմոնյան Մ. Ռ., Հայոց լեզվի գործնական աշխատանքներ (ոչ մասնագիտական ֆակուլտետների համար), Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Պատմություն և հասարակագիտություն

ԱԱՀ – Ա. Աբգարյան, Հայկական հարցը Արշակ Չոպանյանի լուսաբանմամբ, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», II պրակ, Ե., «Մանկավարժ» հրատ., 2014, էջ 385-388:

ԱԳ – Ա. Գասպարյան, Հասարակական-քաղաքական կյանքի արտացոլումը XVII- XVIII դարերի հայ պատմագրության մեջ, «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 44-48:

ԱԴ – Ա. Դանիելյան, Խորհրդահայության 1921-1940 թթ. սոցիալ-կենցաղային զարգացման պատմության հայեցակարգային հիմքերը և պարբերացումը, «Կանթեղ: Գիտական հոդվածների ժողովածու», № 3 (48), Ե., «Ասողիկ» հրատ., 2011, էջ 103-108:

ԳԽ – Գ. Խաչատրյան, Կենդանի բարոյագիտության իմաստասիրության հիմնական բնորոշ առանձնահատկությունները և մեթոդաբանական դրույթները, «Կանթեղ», № 3 (56), Ե., «Ասողիկ» հրատ., 2013, էջ 209-220:

ԳՍ – Գ. Սահակյան, Նախնական պայմանագիրը որպես պայմանագրի կնքման եղանակ, «Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», II

պրակ, Ե., 2014, էջ 254-257:

ԼՊ – Լ. Պետրոսյան, Հայոց Արտավան (Արդոատես) թագավորը, «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, 2005, էջ 38-43:

ԿՓ – Կ. Փահլևանյան, Գեներալ-լեյտենանտ Աբիսողոն-Աբել Իվանի Մգեբրով (1845-1920 թթ.), «Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», II պրակ, Ե., 2014, էջ 305-309:

ՀՄ – Հ. Մազմանյան, Ժառանգման իրավունք, ««Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», II պրակ, Ե., 2014, էջ 270-273:

ՄԱ – Մ. Ապրեսյան, Հարսի գաթան Պոնտոսի հույների հարսանեկան արարողակարգում, «Կանթեղ», № 3 (48), Ե., 2011, էջ 109-114:

ՌԷ – Ռ. Էյդիփուր, Մեծ Մերձավոր Արևելք նախագծի իրականացման խոչընդոտները և մարտահրավերները, «Կանթեղ», № 3 (56), Ե., 2013, էջ 175-180:

ՌՀ – Ռ. Հակոբյան, Սոցիալական պատասխանատվության ինստիտուտը և դրա նշանակությունը, «Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», II պրակ, Ե., 2014, էջ 266-269:

ՌՂ – Ռ. Ղևոնդյան, Քաղաքական որոշումների կայացման գործընթացի արդիականացման հնարավորությունները՝ «Հայկական աշխարհի» գործարկման համատեքստում, «Կանթեղ», № 3 (56), Ե., 2013, էջ 169-174:

ՍՍ – Ս. Սարիբեկյան, «Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» հասկացությունը, «Կանթեղ», № 3 (48), Ե., 2011, էջ 124-130:

ՎԱ – Վ. Աբրահամյան, Բագրատունյաց թագավորության վանական համալիրները որպես գրչության օջախներ, «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, 2005, էջ 147-151:

ՎՀԼ – Վ. Համբարձումյան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2019:

Բ. Կուլտուրա
Գեղարվեստական կրթություն

ԱԳԱ – Ա. Գրիգորյան, Արվեստաբանությունը որպես արդի մշակութային ազգի կայացման ճանապարհ. Գարեգին Հովսեփյանի հրապարակախոսական գործունեությունը, «Կանթեղ», № 3 (48), Ե., 2011, էջ 191-197:

ԱԳ, ԱՄ – Ա. Գրիգորյան, Ա. Մարաբյան, Կրթությունը թանգարանում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2016:

ԱԷ – Ա. Էլբակյան, Ռեժիսուրա: Զրույց հողմաղացի հետ, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2015:

ԱՂՄ – Ա. Ղարիբյան, Մարդու իրավունքներ և լրագրություն, Ուսումնական ձեռնարկ լրագրողների համար, Ե., ԵՊՀ հրատ., 2020:

ԱՄ – Ա. Մենեմշյան, «Le Monde»-ը և հայ իրականությունը, Ե., ԵՊՀ հրատ., 2009:

ԱՊ – Ա. Պողոսյան, Թանգարանային տեսություն և թանգարանային միտքը Հայաստանում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., Հեղինակային հրատ., «Էդիթ Պրինտ», 2020:

ԳՄ – Գ. Մելքումյան, Մշակութաբանություն, Ուսումնական ձեռնարկ, Ե., «Վան Արյան» հրատ., 2001:

ԼԱ – Լ. Աթանեսյան, Ալեքսանդրապոլը քանդակագործի հուշերում, «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, 2005, էջ 166-169:

ԼԽՀ – Լ. Խաչատրյան, Հետաքրքրաշարժ լեզվաբանություն, Ե., «Զանգակ-97» հրատ., 2010:

ՀԱ – Հ. Ափինյան, Աշուղական երգի տաղաչափական արվեստի մի քանի հարցերը Իգիթի երգերում, «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, 2005, էջ 105-109:

ՀԱՊ – Հ. Ասքարի, Պարսկական եղանակների մշակումը Ռուբեն Գրիգորյանի խմբերգերի օրինակով, «Կանթեղ», № 3 (48), Ե., 2011, էջ 198-201:

ՀՊ – Հ. Պիկիչյան, Մ. Հարոյան, Ա. Գրիգորյան, Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ, Ուսումնական ձեռնարկ, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2006:

ՀՍ – Հ. Ստեփանյան, Մուղամների մշակման Ն. Տիգրանյանի սկզբունքները, «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, 2005, էջ 100-104:

ՄՄ – Մ. Մկրտչյան, Սիմվոլիզմի դրսևորումները Վարդգես Սուրենյանցի արվեստում, «Կանթեղ», № 3 (56), Ե., 2013, էջ 221-227:

ՎՀ – Վ. Հակոբյան, Հեռուստատեսային հաղորդակցության արդյունավետությունը (լրամշակված հրատարակություն), Ե., ԵՊՀ հրատ., 2016:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

ԱԳ, ԱԳՎԼ – Ա. Գալստյան, Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական – 21-րդ դ. 10-ական թթ.), Գիրք Ա, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2020:

ԱԼ – Ա. Լոքյան, Կառավարչական գործունեության ազդեցությունը անձի հոգեբանական հատկությունների ձևավորման վրա, «Կանթեղ», № 3 (56), Ե., 2013, էջ 258-264:

ԱԽՍ – Ա. Խաչատրյան, Սոցիոլոգիան որպես սոցիալական աշխատանքի տեսական-մեթոդաբանական հիմք, «Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում: Ուսումնական նյութերի ժողովածու» (խմբագրակազմ՝ Ա. Մկրտիչյան, Ա. Աթանեսյան), Ե., ԵՊՀ հրատ., 2018, էջ 46-56:

ԵՎ – Ե. Վարդանյան, Համայնքային սոցիալական աշխատանքի մասնագետների պատրաստման և վերապատրաստման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում», Ե., 2018, էջ 130-145:

ԷԿ – Է. Կյուրեղյան, Կիրառական սոցիոլոգիա (ուսումնական ձեռնարկ), Ե., «Ճարտարագետ» հրատ., 2006:

ԺԱ – Ժ. Անդրեասյան, Կրթություն և սոցիալական արդարություն, «Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում», Ե., 2018, էջ 174-191:

ԼՎ – Լ. Վարդանյան, Արդյունավետ հաղորդակցումը որպես սոցիալ-հոգեբանական թրենինգի (վարժեցում) նպատակ, «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, 2005, էջ 175-178:

ԿՍ – Կ. Սահակյան, Երազային տեքստի հոգեբանական վերապատմումների լեզուն (1988-ի դեկտեմբերյան աղետի նյութերի հիման վրա), «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, 2005, էջ 94-99:

ՀՄՔ – Հ. Մկրտչյան, Քաղաքական հոգեբանություն, Ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2019:

ՂԱ – Ղ. Ավետիսյան, Յուրային-օտար. սոցիոմշակութային համատեքստ, Ե., ԵՊՀ հրատ., 2019:

ՆՓ – Ներածության փոխարեն. 21-րդ դարում մեծահասակների կրթության հռչակագիր, «Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում», Ե., 2018, էջ 3-23:

ՌԱ – Ռ. Աղուզումցյան, Ե. Մուրադյան, Վ. Պապոյան, Ա. Գալստյան, Դ. Սարգսյան, Ծ. Ամիրյան, Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն, Ե., ԵՊՀ հրատ., 2015:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

ԱԱ, ԱԹ – Ա. Աղաջանյան, Ա. Թռչունյան, Բույսերի կենսաքիմիա, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2017:

ԱԽ – Ա. Խոեցյան, Հ. Մեսսեն, Ն. Էլիզբարաշվիլի, Տ. Բաբայան, Ս. Խաչատրյան, Թ. Կոհլեր, Համակարգումը CDE–ի համար Կ. Հերվինգի, Լեռնային տարածքների կայուն զարգացում և ռեսուրսների կառավարում, Հետազոտական դասընթաց կովկասյան տարածաշրջանում, Դասագիրք բուհերի համար, Ե., «Մեկնարկ» ՍՊԸ, 2018:

ԳՋ, ԱԿ – Գ. Ջալինյան, Ա. Կիրակոսյան, Մարդու գենետիկայի մեթոդներ, Ե., ԵՊՀ հրատ., 2014:

ԼԽ – Լ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Ուսումնական ձեռնարկ, Ե., «Զանգակ-97» հրատ., 2008:

ԼՀ, ԳՓ – Լ. Հարությունյան, Գ. Փիրումյան, Ջրերի մաքրումը մակերևութային ակտիվ նյութերից, Ուսումնամեթոդական աշխատանք, Ե., ԵՊՀ հրատ., 2014:

ԿԳ, ԾԱ – Կ. Գրիգորյան, Ծ. Ադամյան, Մարդու էկոլոգիա և էկոլոգիական ֆիզիոլոգիա, Ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2014:

ՀԲ, ՎՄ – Հ. Բաբայան, Վ. Մեթանջյան, Քարտեզագրություն, Ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2019:

ՀԽ – Հ. Խաչատրյան, Տ. Ղոչիկյան, Ռ. Հարությունյան, Ընդհանուր քիմիական տեխնոլոգիա (լաբորատոր աշխա-

տանքների ձեռնարկ), Ե., ԵՊՀ հրատ., 2017:

ՀՄ, ՎՄ – Հ. Մովսիսյան, Վ. Մանուկյան, Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի կիրառումը երկրաբանահանութային աշխատանքներում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2020:

ՀՍ, ԱՄ – Հ. Սիմոնյան, Ա. Մկրտչյան, Ամինաթթուների ֆիզիկաքիմիական և օպտիկական հատկությունները, ստացման եղանակները, Լաբորատոր աշխատանքների ձեռնարկ «Կենսօրգանական քիմիա» առարկայից, Ե., ԵՊՀ հրատ., 2018:

ՆԴ – Ն. Դուրգարյան, Կենսաակտիվ պոլիմերներ, Դասախոսությունների շարք, Ե., ԵՊՀ հրատ., 2016:

ՌԱԱ – Ռ. Ադամյան, Անօրգանական քիմիա, հատոր 2, գիրք 1, Անցումային տարրերի քիմիան, Ե., ԵՊՀ հրատ., 2020:

ՌՄ, ՄՄ – Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան, Տնտեսական աշխարհագրություն: Մաս 1, Ուսումնական ձեռնարկ, Ե., Եր. համալս. հրատ., 2004:

ՍԻ – Ս. Իշխանյան, Թևավոր խոսքեր, Ե., «Հայաստան» հրատ., 1975:

ՍՆ – Ս. Նանագյուլյան, Ի. Շահազիզյան, Ի. Էլոյան, Ա. Պողոսյան, Ն. Զաքարյան, Ռ. Ադամյան, Սնկաբանություն և բուսաբանություն, Ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2018:

ՎՄ – Վ. Մեթանջյան, Հ. Բաբայան, Պ. Էֆենդյան, Գեոդեզիա: Մաս I, Ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2008:

ՎՊ – Վ. Պողոսյան, Ընդհանուր երկրագիտություն: Գիրք երկրորդ. Երկրագնդի մթնոլորտը և կլիմաները, Ուսումնական

ձեռնարկ, Ե., «Նահապետ» հրատ., 2007:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

ԱԱ – Ա. Առաքելյան, Շ. Բաղդասարյան, Կ. Գալստյան, Վ. Զաքարյան, Գ. Մարտիրոսյան, Ռ. Նազարյան, Գ. Սարդարյան, Ինթել x86 ասեմբլեր (իրական ռեժիմ), Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2016:

ԱԲ – Ա. Բալաբեկյան, Միջուկային փոխազդեցություններ, Դասագիրք բուհերի բնագիտական ուղղություններով մասնագիտացող ուսանողների համար, Ե., ԵՊՀ հրատ., 2019:

ԱԿ – Ա. Կիրակոսյան, Պինդ մարմնի ֆիզիկայի ներածություն: Մաս II, Ե., ԵՊՀ հրատ., 2015:

ԱՂ – Ա. Ղալումյան, Ա. Ցուցուլյան, Ա. Սարգսյան, Սովորական դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ (դասախոսություններ), Ե., ԵՊՀ հրատ., 2011:

ԱՆ – Ա. Նավասարդյան, C++ ծրագրավորման լեզու, Ուսումնամեթոդական ձեռնարկ հեռակա ուսուցմամբ ուսանողների համար, Ե., Հեղինակային հրատ., «ՄՀՄ գրատուն» տպ., 2010:

ԴԲ – Դ. Բաղդասարյան, Էլեկտրականություն և մագնիսականություն, Ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2021:

ԷԱ – Է. Այվազյան, Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա (ընդհանուր մեթոդիկա), Դասագիրք մանկավարժական բուհերի մաթեմատիկայի ֆակուլտետների և ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ուսանողների

համար, Ե., ԵՊՀ հրատ., 2016:

ԷՂ, ՍՊ – Է. Ղազարյան, Ս. Պետրոսյան, Կիսահաղորդիչային նանոէլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքները, Ե., ՌՀՀ հրատ., 2005:

ՀՍԷ – Հ. Սարգսյան, Էլեկտրոնային կլանման սպեկտրոսկոպիա. կիրառումը քիմիական և կենսաբանական համակարգերում, Ուսումնամեթոդական աշխատանք, Ե., ԵՊՀ հրատ., 2015:

ՄՃ – Մ. Ճաղարյան, Տվյալների կառույցներ, Ուսումնական ձեռնարկ, Իջևան, ԵՊՀ հրատ., 2014:

ՍԱ – Ս. Ավետիսյան, Ա. Քոչարյան, Մ. Հովհաննիսյան, «Windows» օպերացիոն համակարգեր (ոսումնամեթոդական ձեռնարկ), Ե., ԵՊՀ հրատ., 2021:

ՎԲ – Վ. Բարխուդարյան, Մոլեկուլային ֆիզիկա, Ուսումնական ձեռնարկ, 2-րդ վերամշակված հրատարակություն, Ե., ԵՊՀ հրատ., 2014:

ՎՀԿ – Վ. Հարությունյան, Կոնդենսացված միջավայրերի հետ իոնացնող ճառագայթման փոխազդեցության ֆիզիկական հիմունքները: Տեսություն և կիրառություններ, Ե., ԵՊՀ հրատ., 2015:

ՎՓ, ՀՕ – Վ. Փիլիպոսյան, Հ. Օհնիկյան, Վերլուծական երկրաչափություն (դասագիրք): Առաջին մաս, Ե., ԵՊՀ հրատ., 2018:

ՎՕ – Վ. Օհանյան, Մաթեմատիկական անալիզ (դասախոսություններ), Ե., ԵՊՀ հրատ., 2021:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ավետիսյան Լ. Ն.,* Համանունական և հարանունական հապավումները ժամանակակից հայերենում, «Կանթեղ: Գիտական հոդվածների ժողովածու», № 3 (48), Ե., «Ասողիկ» հրատ., 2011, էջ 77-86:
2. *Ավետիսյան Լ. Ն.,* Համեմատություն-դարձվածային միավորները ժամանակակից հայերենում, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2018:
3. *Ավետիսյան Լ. Ն., Սողոմոնյան Մ. Ռ.,* Հայոց լեզվի գործնական դասընթաց: Հնչյունաբանություն, Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2017:
4. *Ավետիսյան Յու., Զաքարյան Հ.,* Հայոց լեզու: Բառագիտություն, Ե., «Զանգակ-97» հրատ., 2007:
5. *Բադիկյան Խ. Գ.,* Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
6. *Բադիկյան Խ. Գ.,* Ճիշտ խոսենք հայերեն (լեզվական նորմա). հայերենում գործածվող օտար բառերի բացատրական բառարան, Ե., «Լույս» հրատ., 2012:
7. *Բեդիրյան Պ. Ս.,* Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս» հրատ., 1973:
8. *Բեդիրյան Պ. Ս.,* Հայ լեզուն և մեր խոսքը. գրական արևելահայերեն խոսքի ուղեցույց, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2007:
9. *Գյուրջինյան Դ. Ս., Հեքեքյան Ն. Հ.,* Հայոց լեզու. գործնական աշխատանքների ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Ե., «Ասողիկ» հրատ., 2006:
10. *Եզեկյան Լ. Կ.,* Հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 2007:

11. *Խաչատրյան Լ. Մ.,* Լեզվաբանության ներածություն, Ե., «Զանգակ-97» հրատ., 2008:

12. *Համբարձումյան Վ. Գ.,* Լեզվաբանության հիմունքներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2019:

13. *Մարության Ա. Ա.,* Հայոց լեզվի ոճաբանության գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե., «Զանգակ-97» հրատ., 2002:

14. *Միրումյան Մ. Վ.,* Հայոց լեզու. տեսական և գործնական դասընթաց (Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), Ե., «Զանգակ» հրատ., 2012:

15. *Ջուհարյան Թ.,* Հայոց լեզվի մեթոդիկա, գիրք 1-ին, Ե., «Լույս» հրատ., 1978:

16. *Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն.*, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, «Վանատուր» ՍՊԸ տպ., 2008:

17. *Սողոմոնյան Մ. Ռ.,* Հայոց լեզվի գործնական աշխատանքներ (ոչ մասնագիտական ֆակուլտետների համար), Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013:

18. *Аветисян Л. Н., Согомонян М. Р.,* Изучение перифраз-словосочетаний в вузе (на примере фразеологизированных и нефразеологизированных перифраз современного армянского языка), ISSN2411-1899 Евразийское Научное Объединение (Eurasian Scientific Association), Современные концепции научных исследований, XLVIII Международная научная конференция, Февраль 2019, № 2 (48), Часть 5, Содержание III (eLibrary.ru). Включена в Россиский индекс научного цитирования (РИНЦ), с. 302-305.

19. *Аветисян Л. Н., Согомонян М. Р.,* Изучение научного стиля

речи в вузе в качестве функциональной разновидности языка, ISSN2411-1899 Евразийское Научное Объединение (Eurasian Scientific Association), Наука и современность 2020, 59я Международная научная конференция, Январь 2020, № 1 (59), Часть 4, Содержание III (eLibrary.ru). Включена в Россиский индекс научного цитирования (РИНЦ), с. 310-314.

20. *Раджабов Б. Ф.,* Современные методы обучения студентов с использованием ИКТ в условиях Республики Таджикистан, Сборник научных статей по итогам международной научно-практической конференции “Наука нового времени: от идеи к результату” 18-19 августа 2017 года, Санкт-Петербург, Изд-во “КультИнформПресс”, 2017, с. 79-81.

21. *Селевко Г. К.,* Энциклопедия образовательных технологий, Том 1, М., Народное образование, 2005.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. *Աղայան Է. Բ.,* Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:
2. *Աճառեան Հ.,* Հայերէն ստուգաբանական առձեռն բառարան, *Հայերէն արմատական բառարանից* համառոտեց *Մ. Մինասեանը*, Ժնև, 2004:
3. *Բաղիկյան Խ. Գ.,* Ուսումնական դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2002:
4. Բարոյագիտական բառարան (խմբ.՝ *Ի. Ս. Կոն,* թարգմ. ռուս.՝ *Ռ. Գ. Ավոյան*), Ե., «Հայաստան» հրատ., 1985:
5. *Բարսեղյան Հ. Խ.,* Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., «Լույս» հրատ., 1973:
6. *Բեդիրյան Պ. Ս.,* Հայերեն շրջասույթների բառարան, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2010:
7. *Բեդիրյան Պ. Ս.,* Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2011:
8. *Գալստյան Ս.,* Դպրոցական բառակազմական բառարան, Ե., «Զանգակ» հրատ., 2014:
9. Գերմաներեն-հայերեն-ռուսերեն բառարան (երկրագիտություն) (կազմեցին՝ *Ռ. Վ. Օգանովա, Հ. Ա. Ղուկասյան*), Ե., ԵՊՀ հրատ., 2012:
10. *Գյուրջինյան Դ. Ս.,* Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998:
11. *Գյուրջինյան Դ. Ս., Հեքեքյան Ն. Հ.,* Հայերենում գործածվող տառային հապավումների բառարան, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2007:
12. Երաժշտական բացատրական բառարան (կազմեցին՝ *Կ. Ե. Մելիք-Վրթանեսյան, Մ. Ա. Տոնյան),* Ե., «Խորհրդային գրող» հրատ., 1989:

13. *Էլոյան Ս.,* Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի» հրատ., 2002:
14. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969-1980:
15. *Խաչատրյան Լ. Մ., Միրումյան Մ. Վ.,* Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020:
16. Հայոց բառ ու բան (կազմեց՝ *Սահակ Վարդապետ Ամատունի*), Ս. Էջմիածին, 1912:
17. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001-2012:
18. *Հայրապետյան Ա. Պ.,* Օտար բառերի բառարան, Հեղ. հրատ., Ե., 2011:
19. *Հովհաննիսյան Գ., Փարսադանյան Վ., Իսրայելյան Ա.,* Աշխարհագրական-երկրագրական եզրույթների և հասկացությունների *հայերեն-պարսկերեն, պարսկերեն-հայերեն* բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2021:
20. *Ղազարյան Ռ. Ս.,* Բուսանունների հայերեն-լատիներեն, ռուսերեն-անգլերեն, ֆրանսերեն-գերմաներեն բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 1981:
21. Մաթեմատիկական տերմինների բառարան անգլերեն, ռուսերեն, հայերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներով (կազմեցին՝ *Ա. Հ. Տոնոյան, Վ. Ա. Տոնոյան*), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965:
22. *Մալխասեանց Ստ.,* Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, ՀՍՍՌ Պետհրատ, Ե., 1944-1945:
23. *Նալչաջյան Ա. Ա.,* Հոգեբանական բառարան, Ե., «Լույս» հրատ., 1984:
24. *Նաւասարդեանց Տ.,* Բառգիրք Արարատեան բարբառի, տպ. Մ. Վարդանեանցի, Տփխիս, 1903:

25. *Ջահուկյան Գ.,* Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., «Ասողիկ» հրատ., 2010:
26. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան (կազմեցին՝ *Զ. Ա. Հացագործյան, Ա. Հ. Դարբինյան, Ն. Գ. Հովումյան, Գ. Հ. Սրվանձտյան),* Ե., 1988:
27. *Սարգսյան Ա. Յու.,* Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013:
28. *Սուքիասյան Ա. Մ.,* Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2003:
29. *Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա.,* Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 1975:
30. *Սուքիասյան Ա. Մ., Սուքիասյան Ք. Ա.,* Արդի հայերենի ուղղագրական–ձևակազմական բառարան, Ե., «Մակմիլան-Արմենիա» հրատ., 2002:
31. *Азимов Э. Г., Щукин А. Н.,* Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), М., Изд-во ИКАР, 2009.

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *aspu.am* (Գլխավոր էջ: Ֆակուլտետներ և ամբիոններ: Վերջին հրապարկումներ):
2. *https.//grahavaq.blogspot.com* (թվայնացված հայերեն գրքեր):
3. *https://www.youtube.com*
4. *ijevanlib.ysu.am* (ԵՊՀ ԻՄ գրադարան):
5. *www.nayiri.com* (էլեկտրոնային բառարանների գրադարան):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 3

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 7

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 7

1. Մենիմաստ և բազմիմաստ բառեր 7

2. Բառերի ձևաիմաստային խմբերը 9

ԲԱՌԱՊԱՇԱՐ 19

1. Բառապաշարի շերտերն ըստ ծագման 19

2. Բառապաշարի ժամանակագրական շերտերը 24

3. Բառապաշարի շերտերն ըստ գործածականության 28

4. Բառապաշարի ոճական շերտերը 34

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ 38

Բառերի տեսակներն ըստ կազմության 38

Համառոտագրություն 49

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՇՐՋԱՍՈՒՅԹՆԵՐ 52

Ինքնուրույն աշխատանք լեզվաբանական բառարաններով 62

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ. ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 1 139

ՀԱՎԵԼՎԱԾ 2 157

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 172
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 182
ԲԱՌԱՐԱՆՆԵՐ 185
ՀՂՈՒՄՆԵՐ 188

ԼԻԼԻԹ ՆՎԵՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՄԱՆՈՒՇԱԿ ՌԱՖԻԿԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ
բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար

Տպաքանակը՝ 200 օրինակ:

EDIT PRINT
43 D. Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am